

ՍՏԵՓԱՆ ԹՈՓՉՅԱՆ



ՀՈՎՍԵՓ ԷՄԻՆ

9(47.925)

+ համալրել

թ-83

ՍՏԵՓԱՆ ԹՈՓՉՅԱՆ

հ21

ՀՈՎՍԵՓ ԷՄԻՆ

5844



«ԼՈՒՍԱՐԱՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏՈՒՆ»

ԵՐԵՎԱՆ – 2017

ՀՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(52)

Թ 836

Թոփչյան Ստեփան

Թ 836 Հովսեփի Էմին / Ս. Թոփչյան.- Եր.: Լուսաբաց, 2017.-
128 էջ:

Գրքում քննարկվում են XVIII դարի հայ ազգային-ազատագրական պայքարի ականավոր ներկայացուցիչ, հայ իրականության մեջ Լուսավորության հայտնի գաղափարախոս, ռազմական գործիչ Հովսեփի Էմինի կյանքի նշանակալի դրվագներն ու տեսական հայացքները:

ՀՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(52)

ISBN 978-9939-69-228-9

© Ստեփան Թոփչյան, 2017

© Լուսաբաց հրատարակչատուն, 2017

ՆԱԽԱԲԱՆ

XVII-XVIII դարերում, առավելապես պարսկահայերի արտագաղթով Հնդկաստան, հայ համայնքը ստվարանալով հասավ շուրջ 25 հազար մարդու: Համայնքում նշանակալի դեր ստացած խոշոր վաճառականներն այնպիսի հաջողություն ու ազդեցություն ունեցան, որ 1688 թ. հուլիսի 22-ին «Արևելահնդկական ընկերությունը» նրանց հետ պայմանագիր կնքեց: Հայերին տրվեցին անգլիական ընկերություններին ու վաճառականներին հավասար իրավունքներ: Նրանց առաջ բացված տնտեսական ու քաղաքական հնարավորություններին, բնականաբար, գումարվում էր եվրոպական մշակույթին հաղորդակցվելու և դրա շնորհիվ սեփականը զարգացնելու առավելությունը:

Տարբեր երկրներում, յուրաքանչյուրի քաղաքական, հասարակական, տնտեսական ու ազգային պայմաններին համապատասխան, ծավալվում էր Լուսավորական շարժումն իր ընդհանուր դրույթների հիմքի վրա: Լուսավորական գաղափարների ազդեցությունն այն երկրներում, որտեղ զարգացած հայ համայնքներ կային, որոշակիանում էր նույնպիսի ուրույնությամբ: Այդ գաղափարների տարածումով սկսվում էր հայ ազգային-ազատագրական շարժման նոր շրջան և առաջինը՝ բարենպաստ պայմաններում գործող հնդկահայ համայնքում, Հովսեփի Էմինի, Մովսես Բաղրամյանի, Շահամիր ու Հակոբ Շահամիրյանների և հայ առաջին «Ազդարար» պարբերականի (1794-1796) խմբագիր Հարություն Շմավոնյանի գլխավորությամբ:

Մադրասի այդ խմբակի անդամները, իրենց «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ» (1772), «Որոգայթ փառաց» (1773) և «Տետրակ, որ կոչի նշավակ» (1783) երկերով, ազգի ինքնագիտակցության արթնացման ու Լուսավորության տարածման մոնետիկներն էին: Արդարության, ազատության պայքարի գաղափարախոսական հիմքում ընկած՝ Լուսավորական փիլիսոփայության որոշ դրույթներ XVIII դարավերջին արձագանք գտան Էմինի գրքում: Դեռ պա-

տանի՝ նա համոզվել էր, որ մարդու կոչման ու արժանապատվության նախապայման ազատությունը զենքով է նվաճվում, որին տիրապետելու համար գիտելիք է պետք: Հետագայում, ամեն էականը դնելով լուսավոր բանակա-նության դատի առաջ, նա հանգեց հասարակության զարգացման լուսավորական հստակ դիրքորոշման:

Մերժելով իրերն ու երևույթներն անփոփոխ, առկախ համարող հետադեմ մտայնությունն ու հենվելով գիտության նվաճումների վրա՝ Լուսավորությունը գիտելիքի ուժն ընդունեց իբրև զարգացման լծակ: Հասարակական առաջադիմության գիտական հիմնավորմամբ՝ դարի գերիշխող ձգտումը դարձավ բնության և հասարակության ճանաչման չափանիշ դարձած բանականությամբ կյանքի բնական սկզբունքների հաստատումը՝ ընդդեմ միջնադարյան քմբիրով շաղախված հետադիմական հայեցողության:

Լուսավորության բանական և բնական հիմունքների դիրքերից Հովսեփ Էմինն ընդվզեց հայության՝ պատմականորեն ձևավորված ծանր, անհեռանկար գոյության դեմ: Առկա կացութաձևն ընդհանրապես, առաջընթացն արգելակող հասարակական հարաբերություններն ու դրանցով պայմանավորված խավարամտությունը լուսավոր բանականությամբ վերացնելու նրա հավատամքը խաբսխված էր պատճառականության վրա, փիլիսոփայական այն կատեգորիայի, որով չափվում էր գիտական քննադատությունն ու հնացած պատկերացումների, հարաբերությունների և հաստատությունների աշխարհականացման պահանջը:

Հայության առաջ դնելով իրադարձությունների ընկալումը դրանց քննական գնահատության հետ միավորելու խնդիրը, ապա և՛ ժամանակակիցների տեսակետների համադրումը հաջորդ սերունդների սպասելի պահանջների հետ՝ Էմինն աշխատում էր պատմության ընթացքն ուղղել դեպի զարգացման նպատակը՝ ազատությունը, որով մարդուն հնարավորություն է ընձեռնվում դրսևորելու իր ազատ կամքը՝ բնության և հասարակության զարգացման օրենքների ճանաչումով: Լուսավորական գաղափարախոսու-

թյան նշանակետի՝ նախապաշարումների և մոլորությունների հաղթահարումն առողջ դատողությամբ ու վերլուծում-համադրումով ոչ միայն նպաստելու էր անհատի ինտելեկտուալ աճին, այլև բարոյական կատարելագործմանը, որին Էմինն առաջնահերթ նշանակություն էր տալիս:

«Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները» հուշագրության մեջ ներկայացնելով արդեն իր գլխով անցած պատմությունը որպես սերունդների համար ուրույն ուսանելի դաս՝ Էմինը, միաժամանակ, փորձում է պարզել հասարակության պատմական զարգացման բնույթը, օրինաչափություններն ու շարժիչ ուժերը: Պատմությունն ընթանում է ըստ ժամանակագրական կարգին համապատասխան գաղափարների՝, թե՞ ամեն շրջան առաջ է բերում իր գաղափարներն ու սկզբունքները: Սեփական պետության, երկրի կորուստն ու ժողովրդի ստրկական վիճակն էր հայ լուսավորականներին այրող գլխավոր հարցը, որի պատճառն էմինը շեշտում է զինվորականին հատուկ կտրուկ դատողությամբ. մենք ստրկության ու տգիտության մեջ ենք, մեր հայրերը չեն կռվել իրենց երկրի համար: Իհարկե, ուրիշ ինչո՞վ կարող էին պատճառաբանվել անվերջանալի կորուստները: Բայց ոչ միայն հայրերը, այլև անմիջական նախորդներն էին հերոսաբար կռվել ու հաղթել, ինչից նա գոնե որոշ չափով տեղյակ էր: Բուն խնդիրը սակայն, դա չէ: Ի վերջո ինչու՞ ոչ թե հաղթանակները, այլ պարտությունները վճռորոշ դեր կատարեցին հայ ժողովրդի պատմական ճակատագրում: Պատմության զարգացման աստիճանական փոխատեղումները՝ ծագում-զարգացումով, ինչու՞ հասցրին կործանման: Ինչպես ամեն անհատ, այնպես և ամեն ժողովուրդ համաշխարհային պատմություն մեջ կարծես ձգտում, պայքարում է՝ իրականացնելու իր սկզբունքն ու նպատակը՝ որը հանուն քաղաքակրթության վերելքի, որը՝ ոչնչացման: Արարման և ավերման այդ պայքարում կատարելով իր քաղաքակրթական առաքելությունը՝ հայությունը դարեդար հյուծվեց ու տկարացավ, հետզ-

հետե կրճատվեցին հայրենիքի սահմանները, և մարդիկ ճարահատ, խումբ առ խումբ գաղթեցին օտար երկրներ:

Քաղաքակրթությունն ըստ էության համարելով մարդկային նպատակաուղղված ինտելեկտուալ գործունեության արդյունք, որի հաստատումը Եվրոպայի զարգացած, հզոր երկրներն էին, դրան հակառակ՝ հայրենիքի պետականագուրկ վիճակը Էմինն առնչում էր տգիտությանը: Համաշխարհային պատմությունը կերտվում է սրով: Տգիտությունն ու ստրկական վիճակը հետևանք են սուրը խաչով փոխարինելու, ոչ թե սուրը, խաչի վրա դնելով, պայքարելու: Տարբեր երկրների ժողովուրդների պատմությունն ընթացել է ոչ միայն արտաքին թշնամիների դեմ պատերազմներով: Չհաղթահարված ներքին հակասությունները, վերաճելով անգիջում հակամարտությունների և շատ երկրներ գլորելով անկումից անկում, ջնջել են աշխարհի քարտեզից: Այդ քարտեզի վրա կորսված տեղը վերադարձնելու և առաջադեմ ազգային պետություն կառուցելու բարդ խնդիրն էր ծառացած XVIII դարի հայ լուսավորականների առաջ:

Անցյալ-ներկա-ապագա շղթան հյուսող երևույթների ճանաչողությունը հայերի համար ուներ և ունի գործնական, ռազմավարական նշանակություն: Պատմության պատճառականության բացահայտմամբ հստակեցվում է ներկա գործունեության հետևանքը՝ վաղվա հեռանկարը: Այդ հեռանկարի բարձրությունից դիտելով առկա իրադրությունը՝ հայոց պատմության բացառիկ դեմքերից մեկը՝ և՛ գաղափարախոս, և՛ գորահրամանատար Էմինը, մշակեց ազատագրական իր ծրագիրը, որն իրագործողը հենց ինքն էր լինելու: Դա չհաջողվեց այդ պատմաշրջանի խոտոր ընթացքի պատճառով, բայց ավանդվեց հաջորդ սերունդներին՝ որպես կտակ Մեծ Նպատակի ճանապարհին:

20 հոկտեմբերի, 2017

«ՀԱՆՈՒՆ ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԻՄ ԵՐԿՐԻ»*

*Ճակատագիրը հակադիր շարժումներից գոյն արարող
Լոգոսն է:
Հերակլիտոս*

«Ո՛վ գիտե, գուցե հայերը մի օր բավական անգլերեն հասկանան, որ այս հուշերը թարգմանեն իրենց լեզվով, և դրանից ոգևորված՝ իրենց ուժերը լարեն հանուն քաղցր ազատության»:

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ – այս մի հատիկ բառով մի ամբողջ կյանքի, դրա արտացոլում մի բացառիկ գրքի իմաստն ու նպատակը սահմանելուց առաջ և հետո, ամեն անգամ բռնությանը դեմ առնելիս, տրվել և տրվելու է «Իսկ ի՞նչ է ազատությունը» հարցը: Թե ինչու այն նախադիր, ինքնակա չէ՝ պարզորոշ պատասխանել է Թոմաս Հոբբսը. «Ազատությունը և անհրաժեշտությունը համատեղելի են. ջուրը, օրինակ, ոչ միայն ազատ է, այլև անհրաժեշտաբար հոսում է հունով»: Ապա և՛ «Այդպես էլ՝ մարդկանց կամավոր գործողությունները, քանի որ ծագում են իրենց կամքից, ծագում են ազատությունից: Բայց քանի որ մարդու ամեն կամավոր գործողություն և ամեն ցանկություն ու հակում ծագում է որևէ պատճառից, իսկ դա էլ՝ մի ուրիշ պատճառից, իբրև շարունակական շղթա... դրանք ծագում են անհրաժեշտությունից» (1):

Իր իսկ՝ բնության անհրաժեշտությամբ առկա ազատությանը տրված է ինքնուրույն գործելու հնարավորություն: Գետը շարունակ ձևափոխում է հունը, հունը դիմադրում է, սանձում գետի համառությունը – զարնանը հունը լայնանում, խորանում է, ամռանը՝ նեղանում, ծանծաղանում: Հեղեղման ավերածություններից, գետի կծկվելուց հե-

* Հովսեփ Էմինի գրքից մեջբերումներն արված են ըստ Արամ Թովյանի՝ հրատարակության ընթացքում գտնվող նոր թարգմանության:

տո սկսվում է վերականգնումը: Նախկինին փոխարինում է ազատության նոր, հաճախ անառակ ժառանգը, որը դարձյալ պետք է գոհաբերվի: Նախկին անհրաժեշտությունը կարճատև խորտակած ազատության հեղափոխայնությունը սանձվում է նոր անհրաժեշտությամբ: Այսպես ազատությունն ու անհրաժեշտությունն իրանում են՝ բխելով մեկը մյուսից, և յուրաքանչյուրը, մի վիճակից մյուսին անցնելիս, բացասում ու հաստատում է իր այլությունը: Այդպես է և մարդն իր գործով – պատմության ենթակա^օ, թե՞ պատմություն կերտող, թե՞ և՛ մեկը, և՛ մյուսը:

1751-ի փետրվարին «Ուոլփոլ» նավով Կալկաթայից նա մեկնեց Անգլիա: Հնդկաստան վերջնականապես վերադարձավ 1783-ին: 1788-ին սկսեց անգլերեն գրել «Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները» (առաջին հրատ.՝ 1792, Լոնդոն): Այդ հուշերի ներածության մեջ նա նշում է, որ շփոթված է և չգիտի՝ ինչպես վարվել, «քանզի եթե գրի ամեն ինչ, շատ բան հեքիաթային կթվա բազմաթիվ մարդկանց»: Իսկ XVII գլխում ավելացնում է. «Ընթերցողը չի կարող այս ամենը հավանական համարել և կենթադրի, թե սա ավելի շուտ արաբական հեքիաթ է, քան իրական պատմություն»: Սակայն գիրքն ուսումնասիրողները պատմական, աղբյուրագիտական տվյալների հիմամբ՝ վրա հաստատել են նշանակալի և մինչև իսկ անհավատալի թվացող որոշ նկարագրությունների անհերքելի իրողությունը: Ցավոք, դրանցից շատերը չէին կարող ճշտորեն պահպանվել. փաստական աղավաղումները ժամանակի ընթացքում անխուսափելի էին: Դրանց որոշ մասը ճշտված է Աբգար Հովհաննիսյանի արժեքավոր աշխատության մեջ (2):

Ինքը՝ Էմինը ճշմարտությունը կենսագրության զարդն է համարում, սակայն նկարագրված շատ իրողություններ ընթերցողին իսկապես անհավատալի կթվան, որոշ մանրամասներ էլ՝ պատումի բուն բովանդակությանն անհամատեղելի: Հատկապես վերջինիս պատճառն ինքնին հասկանալի է – շատ տարիներ էին գլորվել, հեղինակի հիշողությունը պետք է որ դավաճաներ: Ջրկանքներով, վայրիվե-

րումներով, դժվարություններով, անակնկալներով, մահացու վտանգներով ու շրջադարձերով լի կյանքի ընթացքում նա հնարավորություն ունե՞ր նյութեր հավաքելու, օրագիր պահելու, գոնե թուցիկ գրառումներ անելու, երբ ապագայում գիրք շարադրելու մտադրություն չուներ: Կյանքի վերջին խաղաղ հանգրվանում, հավատարիմ իր կոչմանը, իր անգլիացի բարեկամների հորդորով («չլիներ սրբ Ուիլյամի և տիկին Ջոնսի քաջալերանքը, երբեք այդ գործը չէի ձեռնարկի») հայրենիքի նվիրյալ զինվորի սուրը փոխարինեց գրչով՝ սերունդներին ավանդելով իմաստության լույսի նշանակության մասին իր պատկերացումը և արժանապատվության ու ազատության պայքարի իր անհավատալի, բացառիկ փորձը. «Տեսա, որ Եվրոպայի մարդիկ իմաստուն են ու հզոր՝ կռվելով մեկ մարդու պես, և մտածեցի, որ եթե կարողանամ նմանվել եվրոպացի զինվորներին, ապա կգնամ իմ հայրենակիցների՝ լեռների «սև հայերի» մոտ: Քանզի լսել եմ, որ նրանց երբեք չեն նվաճել և որ նրանք խիզախ մարդիկ են: Եվ եթե ես կարողանամ նրանց սովորեցնել ռազմական արվեստը, դա շատ օգտակար կլինի»:

Ո՞վ էր Հովսեփ Էմինը հարցի կարճառոտ պատասխանը տվել է լորդ Թենմոթը. «Էմինը եղել է և՛ նավաստի, և՛ բեռնակիր, և՛ տնային ծառա, և՛ բարեգործությամբ ապրող՝ ազնվականների բարեկամ, արքայազունների ու միապետների հովանավորյալ: Նա միշտ, անգամ ամենածանր գրկանքների ժամանակ, պահպանում էր պատվի զգացումը, ուղղամտության ոգին, ապավինում էր Նախախնամությանը և հավատարիմ մնում քրիստոնեական սկզբունքներին, որոնցով դաստիարակված էր»:

1

1755-ին Հովսեփ Էմինը (1726–1809) երջանիկ պատահականությամբ հանդիպեց իրենից առաջ, նախորդ տարի, իրավաբանություն ուսանելու համար Լոնդոն եկած Էդմունդ Բերքին (1729–1797): Բայց իրավաբանությունը չէր հետաքրքրում նրան. իրավաբան հոր կամքին հակառակ

նվիրվել էր գրական գործունեության, և հայրը դադարել էր որդուն նյութապես օժանդակել: Էմինի ու Բերքի համանման նյութական վիճակին ու հոգու մեծությամբ չափազանց բնորոշ է նրանց հանդիպման տեսարանը: Ծանոթանալով Էմինի նեղ վիճակին և իմանալով, որ նա կատարելագործվելու, երևելի մարդ դառնալու, հայրենակիցներին ծառայելու համար թողել է գեղեցիկ երկիրը՝ Հնդկաստանը, Բերքն ասում է. «Ես էլ Ձեզ պես հորիցս փախած մարդ եմ» և հանում է կես գինեա. «Պատվովս եմ երդվում, սա այս պահին ողջ ունեցածս է, խնդրում եմ՝ ընդունեք»: Շնորհակալություն հայտնելով՝ Էմինը երեք ու կես գինեա է հանում և ասում. «Ես այսքան ունեմ, ազնիվ չի լինի Ձեր տվածն ընդունելը: Ո՛չ որովհետև փոքր գումար է, հազար ֆունտ էլ լիներ չէի ընդունի: Փող ստանալու համար չէ, որ հեռացել եմ բարեկամներիցս... Ձեր բարի վերաբերմունքն... ինձ համար ավելի թանկ կլինի, քան մի իշխանի հարստություն»:

Այնուհետև նրանք հաճախ են հանդիպել, Բերքը խորհուրդ է տվել որոշ գրքեր կարդալ և ընդհանրապես կարևոր ազդեցություն է ունեցել Էմինի աշխարհայացքի զարգացման վրա: Այդ երիտասարդ տարիքում Բերքն արդեն գրել էր «Բնական հասարակության պաշտպանություն» (*A Vindication of Natural Society* [1756]) և «Փիլիսոփայական ուսումնասիրություն վեհի ու գեղեցիկի մեր գաղափարների ծագման մասին» (*A Philosophical Enquiry into the Origin of our Ideas of the Sublime and Beautiful*. առաջին հրատարակություն՝ 1757, հետագա 30 տարում՝ տասը վերահրատարակություն) երկերը: Նա ցանկացել է, որ Էմինն արտագրի իր գործերը («Առաջինը հանգուցյալ լորդ Բոլինգբրոքի «Նամակների» ընդօրինակումն էր, երկրորդը՝ «Վեհի և գեղեցիկի» մասին ուսումնասիրությունը»): Նրանց բարեկամությունը շարունակվել է նաև հետագա կյանքում, ինչի վկայություններից է 1772 թ. հոկտեմբերի 30-ին Բերքի գրած նամակը Բենգալիայում գինվորական դատախազ նշանակված Ջոն Ստյուարտին. «Նա փորձել է մեծ նպա-

տակներ իրականացնել, վիթխարի ջանքեր է դրել, ենթարկվել անթիվ վտանգների և ի վերջո հայտնվել նույն վիճակում, որից սկսել էր՝ աղքատ ու անընկեր, Բենգալիայում... Գիտեմ, որ շատերը նրան ինքնակոչ են համարում, բայց ես կարող եմ հաստատել նրա պնդումների ճշմարտացիությունը... նաև՝ համբերությունը, ազնվությունը և ոգու ուժը, որոնցով նա ձգտել է լրացնել իր գիտելիքները մատչելի բոլոր բնագավառներում» (2, էջ 240): Նկատի առնելով Էմինի ծառայությունն անգլիական բանակում՝ Բերքը խնդրում էր նրան պաշտոն տալ «Արևելահնդկական ընկերության» գործերում:

«Բնական հասարակության պաշտպանություն»-ը Բերքը գրել է՝ ընդդիմանալով լորդ Բոլինգբրոքի «Նամակներ պատմության ուսումնասիրության և օգուտի մասին» (1752) աշխատության դեիստական ոգուն: Ըստ դեիստական հիմնավորման՝ մարդկային բանականությամբ աշխարհի ճանաչողության տեսանկյունից անընդունելի է աստվածային հայտնությունով գերբնականն արդարացնող կրոնական դոգմատիզմը: Աշխարհի աստվածային արարչության սահմանն ավարտվում է այնտեղ, որտեղ սկսում են գործել արարվածին ներհատուկ օրենքները: Ճշտելով գիտական պատմության աղբյուրները՝ Բոլինգբրոքը բացառում էր Աստվածաշունչը – այն մթագնում է պատմությունը, և պատմության աղավաղմանն ամենից շատ նպաստել է եկեղեցու հեղինակությունը, քանզի «Կամխամտածված, սխտեմատիկ խաբեությունը կիրառվել ու խրախուսվել է դարեդար, և բոլոր բարեպաշտ կեղծիքների մեջ, որոնք օգտագործվել են՝ մարդկանց մտքում իրենց կրոնի հանդեպ ակնածանք և նախանձախնդրություն պահպանելու համար, պատմության... խեղաթյուրումը եղել է առաջնային ու ամենաաղբյուրնավետ հնարներից մեկը» (3): Այսքանով չեն ավարտվում Բոլինգբրոքի հարվածները կրոնին ու եկեղեցուն: Նա խոսում է կեղծ բարեպաշտության դիմակի տակ կատարված ոճիրների մասին – կրոնական նախանձախնդրությունն աշխարհիկի

համեմատ կարող է պարծենալ այն առավելությամբ, որ իր հետևանքներն ավելի արյունալի են եղել, իսկ չարությունը՝ ավելի անողորմ: Ընդունելով Աստծո գոյությունը, բայց բացառելով իրադարձությունների ընթացքի վրա նրա ազդեցությունը և գերբնականն ու խորհրդապաշտականը՝ դեիզմը հաստատում էր քննական բանականությամբ նպատակաուղղված գործունեության վերափոխիչ դերը:

Մինչդեռ, Էմինի կյանքի ծանր պահերին Բերքը մխիթարում էր նրան՝ խորհուրդ տալով ապավինել Աստծուն: Թերևս, նախախնամությանը տուրք տալը նույնպես դեր է ունեցել նրանց բարեկամության ամրապնդման մեջ: Էմինի կյանքը քանիցս կախված է եղել սագից, և իր գրքի տարբեր էջերում նա հավաստում է, թե ամեն անգամ հույսն ասել է, որ «մեծ Արարիչն իրեն չի լքելու»: Այդ պատկերացմամբ էլ նա կիսում է հոր նամակում ևս հաստատվող համոզմունքը՝ Աստված ինքն էլ գիտի, որ «մի գեղեցիկ օր կազատի քո հայրենակիցներին անգութ մահմեդականների ստրկությունից»:

Ուրեմն, նստել և սպասել այդ օրվա գալստյա՞նը: Դարձյալ պահանջվում էր պարզ հարցի պատասխանը՝ ինչու՞ է Աստված առաջինը քրիստոնեությունը պետականորեն ընդունած ժողովրդին մատնել անգութ ոճրագործների դարավոր ստրկությանը: Երկու արագահոս գետերի վտանգները հաղթահարելուց հետո, քսան զինված իմերեթցիների շնորհիվ փրկվելով երրորդ վտանգից՝ լեզգիներին գերի ընկնելուց կամ սպանվելուց, 3 թվի նախապաշարմանը հակառակ՝ Էմինը մտորում է, թե ինքն ավելի գիտուն էր և ուշադրություն չդարձրեց դրան՝ «ապավինելով Ամենագոր Աստծո անսահման բարությանը, որը փրկում էր իրեն սպանվելուց: Էմինն իրեն պարտավորված զգաց՝ այդ խիզախ մարդկանց իր երախտագիտությունն արտահայտելու մի երկարաշունչ արևելյան ճառով»: Բավարարվելով իմերեթցիներին ուղղված ճառով, իրականությունը շփոթելով երևակայության հետ և մի նախապաշարում անտեսելով՝ գիտուն Էմինը լիովին հանձնվեց մյուսին՝ «Աստծո

բարությանը»: Նրան հատուկ է մի կողմից կրոնական նախապաշարման, մյուս կողմից՝ բանականության ուժով տիրող հասարակարգի վերափոխման աշխարհայացքային հակասությունը:

Նախապաշարման և իրատես բանականության տարօրինակ այս համադրման նժարը, իհարկե, թեքվում է բանականության կողմն ընդդեմ կրոնական մոլեռանդության, երբ նա անդրադառնում է կղերականների գործունեությանը: Եկեղեցու հայրերը քարոզում են Սուրբ Ավետարանի ուսմունքը, մարդկանց «գլուխներից հանում մարտաշունչ ոգին՝ առանց քաջ եվրոպացիների պես հեռուն մայելու, առանց մտածելու, որ կգա բոքիկ արաբը, սուրը ձեռքին, նրանց բոլորին տիրանալու»: Երբ Էմինը միայնակ, ձի հեծած հասնում է մի հայկական գյուղ, իմանալով, որ հայ է, գյուղացիները վազում են մահակներ բերելու և նրան ծեծելու, որովհետև հանդգնել է ճամփորդել առանց քարավանի: Երբ նրանց հետ թուրքերեն է խոսում, սպառնում, թե զորք է գալիս, և ինքը բոլորին սրի քաշել կտա, կեղծ թուրքի վախից ծնկի են գալիս՝ գութ աղերսելով և փող խոստանալով: Այդպիսով «նրանք իրենց հավատարմությունն էին հայտնում օսմանցիներին՝ միակ մարդկանց, որ կարող էին ձմռան կեսին կամ տարվա ցանկացած եղանակի մեռնակ ճամփորդել»: Էմինի հարցին՝ «Ինչու՞ ազատ չեք, ինչու՞ չունեք ձեր իշխանը», պատասխանում են, որ իրենց ազատությունն այն աշխարհում է, իսկ իրենց թագավորը Հիսուս Քրիստոսն է. «Եկեղեցու սուրբ հայրերը... ասում են, թե հայ ազգն աշխարհի արարումից ի վեր ենթարկվել է մահմեդականներին և պետք է այդպես մնա մինչև հարության օրը: Թե չէ, կարող էինք օսմանցիներին արագ քշել մեր երկրից»:

Հայ գյուղացիների այս պատասխանները բացահայտում են ոչ միայն չարին չհակառակվելու քրիստոնեական սկզբունքի կործանարարությունը, այլև ստրկամիտ տգիտությունն ու խավարամոլությունը, որը փարատելու միջոցն Էմինի համոզմունքով լուսավորությունն է: Հնարավոր

է, որ նրանք շփոթեին աշխարհի արարման, Քրիստոսի ծննդյան և Մոհամադի ասպարեզ գալու ժամանակները, բայց գոնե հոգևորականները չպետք է շփոթեին: Ի տարբերություն հասարակ գյուղացիների, գյուղի քահանան ի դեմս Էմինի անմիջապես տեսնում է Ներսես Ա Մեծի (մոտ 329–373) մարգարեության (իր ասելով՝ մոտ վեց հարյուր երեսուն տարի առաջվա) իրագործողին. «Նրա միջոցով ազատվելու ենք հարստահարողների և մեր հավատքի քննամիների ձեռքից»: Քահանայի խոսքը (պարզ չէ՝ մինչ այդ նա ինչու՞ գյուղացիներին փոքրիշատե չէր ներշնչել իր ընդունած ազատության ոգին, և այժմ հանկարծ բացվեց) ավելի շուտ գեղարվեստական է, քան վավերական: Էմինը կարծես չափազանցում է, և դրանից գերծ չեն գրքի շատ էջեր: Օրինակ, ասես սենտիմենտալիզմի գրականության ուրույն ազդեցությամբ, շատ անգամ նրա նկարագրած ոչ միայն հասարակ տղամարդիկ, այլև մինչև իսկ Հերակլի մման պատմական նշանավոր դեմքեր տեղի-անտեղի հուզվելով արտասվում են: Նման հնարները, թերևս, իր նկարագրություններն ավելի տպավորիչ, ազդեցիկ դարձնելու համար են:

Դա, այդուհանդերձ, ուշագրավ է մի քանի առումով. ոչ միայն XVIII դարից շատ հեռու հիշյալ, այլև ծայրահեղ շփոթմունքի արդյունք մյուս թվերը լոկ Էմինի հիշողության անկումով բացատրվելուց անկախ այլ կողմ էլ ունեն: Մարգարեությունը կատարվելու էր իբր 666 տարի հետո (XI դարում), և իբր մնացել էր 28 տարի: Միայն Նոր Կտակարանից անտեղյակ մեկը կարող էր գազանի թիվը կապել Ներսես Մեծի անվան հետ, այն գազանի, որը «եբաց զբերան իւր հայհոյութեամբ առ Աստուած և հայհոյեաց գանուն նորա սուրբ, և զխորան նորա որ յերկինս» (Հայտնություն, ԺԳ, 6): Թեև Էմինը համակված էր նախախնամության գաղափարով, սակայն սա բացահայտում է նրա մոտավոր ծանոթությանը Սուրբ Գրքին, որը նրա համար, ինչպես երևում է, էական նշանակություն չուներ: Նա հեռու էր դոգմատիկ, կույր հավատամոլությունից, ուստի և հայտ-

նում էր, որ Ավետարանը Ֆրանկստանի քրիստոնյաները հասկանում են հայ կղերականների հասկացածին հակառակ կերպ. «Խաչը կրելու իմաստը հետևյալն է. դա այն նշանն է, որ քաջ զինվորները տանում են անհավատների դեմ և դրա տակ մեռնում»: Էմինի ընկալմամբ՝ ծույլ ու վախկոտ կյանքը հետևանք է հայ կղերականների քարոզչության. «Մենք դարձել ենք ոչխարներ, որոնց հոշոտում են գայլերը»:

Շեղվելով Սուրբ Գրքի բովանդակությունից և այն մեկնաբանելով ըստ իր սկզբունքների՝ Էմինը շարունակում է. բանական էակը չպետք է դառնա ուրիշների կամավոր ծառան, Աստված բոլորին ազատ է ստեղծել, որպեսզի ենթարկվեն լավ օրենքների և մույն արդարությունը լինի հարուստների ու աղքատների համար: Մինչդեռ, Պողոս առաքյալը հրահանգում է. «Ծառայք՝ հնազանդ լերուք տերանց ձերոց յամենայնի. մի՛ առականե ծառայութեամբ իբրեւ մարդահաճոյք, այլ միամտութեամբ սրտի երկնչել ի Տեառնէ» և արդարության փուչ հույս տալիս, որ «ապիրատն ընկալցի ըստ իւրում ապիրատութեանն, զի չիք ակնառութիւն» (Կողոսացիք, Գ, 22, 25):

Իրական արդարություն ու ազատություն Էմինը հագիվ թե գտներ Սուրբ Գրքում: Դրանք ի սկզբանե մերժվում են Ծննդոց գրքում՝ ճանաչողության արգելված պտուղն ուտելու Ադամի գայթակղությամբ – բարոյ և չարի ճանաչողության համար մարդկությունը սերնդեսերունդ դատապարտվում է մահվան: Դեհիստները ժխտում էին Սուրբ Գրքի աստվածայնությունը՝ այն համարելով մարդկային մտքի հորինվածք և մարդկանց ազատ բանականությունից զրկող միջոց՝ եկեղեցու իշխանությունը պահպանելու համար:

Այլ գրքերի հետ Բերքը պետք է որ Էմինին առաջարկած լիներ կարդալ նաև Բուլինգբրոքի նամակները: Եթե կարդացել է, ապա անարդյունք – Էմինն այդպես էլ վճռականորեն չգատեց Աստծո գոյությունը սեփական օրենքներով ընթացող աշխարհից: Այս էկլեկտիզմը՝ անհաստատ

իր բնույթով, այնուամենայնիվ, ավելի հակված էր տարերային դեիզմի, քան աշխարհի գործերում Աստծո ակտիվ դերն ընդունող թեիզմի: Նախախնամությունը լոկ ռեալ գործունեությանը չառնչվող մտապատրանք էր – կռվի դաշտ նետվելիս նա չի վնասվում, իր կարծիքով, Աստծո անունը տալու շնորհիվ: Հավատացյալի համար միշտ այդպես է՝ բոլոր հաջողությունները վերագրել Բարձրյալին, անհաջողությունները՝ ինչ-ինչ հանգամանքների: Իսկ գիրքն ընթերցողը կնկատի, որ, ինչքան էլ պատահականությունը մաս ունենա, Էմինը շատ բարդ ու ծանր իրավիճակներից դուրս է գալիս իր իսկ՝ բնավ ոչ սովորական կարողությունների, հմտությունների, իմացության շնորհիվ: Նրա հավատքի անսասանությունը կրոնական մոլեռանդության և անհանդուրժողության նշան չէր, այլ, իր պատկերացմամբ՝ ազգային ինքնության, ազատագրական պայքարի կռվան: Այդ է հաստատում Սուքիաս վանականին նրա ասածը. «Ես ծնվել ու մկրտվել եմ քրիստոնյա և կմեռնեմ այդպիսին, անգամ եթե ողջ աշխարհը մահմեդական դառնա»: Ապա ավելացնում է, որ ի սրտե կուգեր՝ վանականներն ունենալին իր հավատքի մեկ տասներորդը: Նրա կոչն ազատության պայքարի կոչ է, եկեղեցականների խոտոր գործունեության բացասում՝ քրիստոնեական ձևի տակ. «Ո՛վ եկեղեցականներ, եթե միայն թույլ տաք նրանց կոտրել սնահավատության ու տգիտության շղթան, կտեսնեք, թե որքան քաջաբար նրանք կգնան Քրիստոսի թշնամիների դեմ»: «Երբեք կղերականների մասին լավ կարծիք չեմ ունենալու, – գրում է հայրը Էմինին:– Ինչպես ասում ես, նրանք եղել են հայոց իշխանության կործանման միակ պատճառը»:

Թե ինչպիսի դժնդակ հետևանքներ կարող էր ունենալ թեկուզ մեկ կղերականի ժպիրի վարքը, Էմինը ներկայացնում է ոմն Հովհաննես Եպիսկոպոսի օրինակով: Ընդամենը վեց ամիս Կոստանդնուպոլսի պատրիարք դառնալով՝ նա հայերին թշնամացրեց իրար դեմ, ինչն «արժեցավ քսան բեռ պիաստր՝ վճարված Թուրքիայի մեծ վեզիրին կամ

ուրիշ բարձրաստիճան պաշտոնյաների: Շատ խեղճ մարդիկ անհավատարմության կեղծ մեղադրանք ստացան... նրանցից շատերին անարդար կերպով որպես քիապարտների ցմահ ուղարկեցին թուրքական մավերը»: Այս եպիսկոպոսը, մեկը հայ հասարակության տարբեր շերտերում մշտապես նստած նմաններից, քարոզել է, «որ թուրքերի Մեծ Իշխանն է հայերի միակ թագավորը»:

2

Հակառակ նախնական կրոնական դաստիարակությանը՝ Հայաստանի ազատագրման Էմինի ծրագիրն արմատապես անհամատեղելի էր քննախույզ միտքը շղթայող հավատքի հետ. «Հայրս ուրիշ հայերի պես ինձ սովորեցրել է միայն հայերեն գրել-կարդալ, սաղմոսներ անգիր անել, երգել դրանք եկեղեցում, բայց ցույց չի տվել, թե ինչպես է պետք գեմք բանեցնել ու կռվել հանուն այդ եկեղեցու... Երբ մեր ժողովուրդը, հարստանալու համար կաշվից դուրս գալով, մի քիչ փող է վաստակում, նրան անհեթեթ պատրվակով կողոպտում է մե՛րթ փաշան, մե՛րթ խանը, երբեմն էլ՝ նաբոբը: Պատճառն այն է, որ հայերն իրենց ձեռքում սուր չունեն, հետևաբար իզուր են աշխատում»:

Նախախնամության շղթաները դառնում են իրական, երբ Էմինը հայտնվում է Էջմիածնի եկեղեցու հացի փոփ վերևի՝ տիպիկ միջնադարյան չարչարանաց բանտախցում: Գրքի ներածության մեջ արդեն Էմինը գրում է, որ իր գործունեության ընթացքում հարվածներ է ստացել մահմեդականներից ու եկեղեցու կղերականներից: Առաջինները խլում են հայրենակիցների կյանքը, երկրորդները՝ կապանքում պահում հոգիները: Առանց սրի խաչը ժողովրդին դատապարտել էր ստրկության: Ռուսաստանի սրով ստրկությունից ազատվելուն սպասում էր Սիմեոն Ա Երևանցի (1710–1780) կաթողիկոսն իր կողմնակից կղերականների հետ, պահանջում անմոռնչ կրել թուրքական և պարսկական լուծը, մերժում ազատագրական պայքարի որևէ փորձ՝ համոզված, որ այն աղետալի կլինի հայերի համար: Սիմե-

ոնը դիմեց Եկատերինա կայսրուհու կառավարությանը, որը հարաբերություններ սկսեց Էջմիածնի հետ: Միմեռնը վստահ էր, որ «հայերի ամեն մի ինքնությունը ելույթ այնպիսի խոշոր տերությունների դեմ, ինչպես Իրանն ու Թուրքիան, անպատասխանատու արկածախնդրություն կլիներ և կարող էր հասցնել ազգի կործանմանը» (2, էջ 142):

Պատյանի վրա խաչածն դնելով սուրը՝ Էմինը խորհրդանշում է ազատագրումը սուրխաչով: Այդ միացումը Միմեռնի համար չէր, այլ՝ Մշո Սուրբ Կարապետ վանքի քաջարի վանահայր Հովնան եպիսկոպոսի, որի հետ գործակցությանը կարևոր էջեր է նվիրել Էմինը: Երբ հայ-վրացական բանակը հասնում էր այնտեղ, Հովնանը պատրաստ էր, ընդգրկելով նաև ասորիների ու եգիպտացիների, Տարոնում ապստամբություն կազմակերպել: Գանձասարի վանքի Հովհաննես կաթողիկոսը նույնպես վստահեցնում է Էմինին, որ սեփական ուժերով վերջ կտալին թշնամիներին, եթե «Ամենայն հայոց կաթողիկոսը նույնքան բարձր գնահատեր Ձեզ, որքան ես՝ իմ վանականների և ինը խիզախ եղբայրների հետ... Կկարողանայինք հեշտությամբ գործերը գլուխ բերել և արմատախիլ անել մեր քրիստոնյա հավատքի թշնամիներին»:

Առանց Արևելքի երկու հարևան տերությունների բիրտ լծի տակ ընկած, վաղուց պետականությունը կորցրած Հայաստանի ժողովրդի միակ պաշտոնական ներկայացուցիչ Էջմիածնի կաթողիկոսության գոնե գաղտնի համաձայնության, չափազանց բարդ էր ժողովրդին ազատագրական պայքարի նախապատրաստելը: Մի շարք արժեքավոր աշխատությունների հեղինակ, Էջմիածնի դերն ամրապնդած Միմեռն կաթողիկոսը հեռացող կղերաֆեոդալական գաղափարախոսության ջատագով էր: Այնպես որ նրա և Էմինի հակամարտությունը հետևանք էր նաև աշխարհայացքային խոր տարբերության: Իհարկե, Միմեռնը «ոչ էլ իր ազգի բարին է կամենում» կարծիքը զգայական պոռթկման արդյունք էր, և չէր կարելի թերագնահատել կաթողիկոսի դիվանագիտական կարողությունը, սահմա-

նափակ հնարավորությունների պայմաններում, սպասվող վտանգների հանդեպ նրա զգուշավորությունը, հատկապես երբ դեռ չէր հասունացել բացահայտ պայքարի անցնելու պահը: Սակայն խիստ անհրաժեշտ էր Ռուսաստանի հետ հարաբերություններն ամրացնելուն զուգահեռ նախապատրաստել ժողովրդին, միավորել և ամրապնդել ուժերը՝ հնարավորն իրականացնելու համար:

Էմինը պատմում է, օրինակ, թե ինչպես են տարրական ինքնապաշտպանությունից զուրկ հայերն անտեղի կորուստներ տալիս մահմեդական ցեղերի հարձակումների ժամանակ: Տարածաշրջանում, մասնավորաբար Կովկասում տիրող քաոսային իրավիճակը, երբ գերեվարում, ստրկացնում, հոշոտում են՝ ով ում պատահի, ցցուն արտացոլված է Էմինի գրքի տարբեր էջերում: Դա լիովին պատկերացնելու համար մի դրվագն իսկ բավական է. հինգ լեզգի տանում են մոտ վեցամյա վրացի մի աղջկա՝ «նրբիկ ոտքերին՝ տրեխներով, որ գառնուկի պես վազում էր նրանց առջևից դեպի շուկա՝ վաճառքի հանվելու... Տղամարդիկ անցան առևտրին. շուռումուռ էին տալիս նրան, որ կազմվածքը տեսնեն, այնպես բարբարոսաբար, որ Էմինի համբերությունը սպառվեց»:

Այնպիսի խառնակ վիճակ էր տիրում, որ քրիստոնյաների դեմ այդ վայրենիները, Էմինի վկայությամբ, ելնում էին նաև վրացի պարագլուխների առաջնորդությամբ, որոնք, բարձր աստիճանավորից մինչև ստորին ենթական, «բռնակալ իշխաններից կամ տերերից ճնշված, գալիս էին նրանց մոտ: Առաջնորդ ընտրվելով և հազարների գլուխ կանգնելով՝ հրով ու սրով անցնում էին երկիրը... անխնա ջախջախում էին հակառակորդին, անօգնականներին գերեվարում՝ խնայելով առողջ ու գեղեցիկ մանուկներին, որոնց թլպատում էին ու պահում որպես իրենց երեխաների: Իսկ մյուսներին վաճառում էին թուրքերին ու պարսիկներին»:

Միմեռնի մման, հյուսիսային հզոր հարևանի, ինչպես և «օրինյալ Ֆրանկստանի թագավորությունների» օգնու-

թյամբ ազատության հասնելու կողմնակից էր նաև Գանձասարի Հովհաննես կաթողիկոսը, բայց ոչ անմոռնչ սպասելով. «Ոչինչ չի կարող մեզ հետ պահել, բացի կղերականներից, որոնց այժմ գլխավորում է Սիմեոնը»: Էմինը ևս, իր այլ հայրենակիցների հետ, չպատկերացնելով, որ քրիստոնյա Արևմուտքը հաճախ նախընտրում էր ոչ թե օգնել հավատակից փոքր ազգերին, այլ ընդդեմ նրանց միանալ մահմեդականների հետ (կամ օգտագործել վերջիններիս), միամտորեն, ապավինելով իր Աստծուն, գրում էր. «Հայերը հաստատ հավատում են, որ Եվրոպայի քրիստոնյա թագավորները մի օր գալու են ու իրենց փրկեն անհավատներին հպատակվելուց»:

Որ «օրհնյալ Ֆրանկստանը», մասնավորաբար Անգլիան չէր պատրաստվում նպաստել Թուրքիային ու Իրանին սահմանակից ինքնուրույն հայկական պետություն ստեղծելուն, Էմինը համոզվեց՝ հանդիպելով ռազմական մինիստր (հետագայում պրեմիեր մինիստր) Ուիլյամ Փիթին (1708–1778): Էմինի անձը Փիթի վրա դրական տպավորություն էր թողել, և դրանով գործը սահմանափակվել էր: Հենմելի «Պարսկաստանի պատմության» հիման վրա Էմինն անտեղի վատաբանում է, իբր Պետրոս Մեծի հույսերը չարդարացնելու համար, նույն խնդրի առաջ կանգնած Իսրայել Օրուն, որի երկարամյա գործունեությունը Եվրոպայում, հանուն Հայաստանի ազատագրման, ավարտվել էր անարդյունք, և նա էլ հանգել էր ռուսական կողմնորոշման:

Թե ինչպես ընդունվեց Էմինի ծրագիրը Ռուսաստանում, կարելի է եզրակացնել կանցլեր Մ. Ի. Վորոնցովին (1714–1767) Լոնդոնում Ռուսաստանի դեսպանորդ Ա. Մ. Գուլիցինի (1723–1807) գրած նամակից. «Նրա խիզախությունը, նրա արտակարգ ձիրքը (son génie extraordinaire), նրա ազնվությունն այստեղ հանրաճանաչ են, և բացի այդ մարդիկ գտնում են, որ նա փորձ է յուրացրել ռազմարվեստում: Ուստի նույնիսկ շահեկան կլիներ նրան ընդունել Նոբին Մեծության մոտ ծառայության, առավել ևս՝ որ նա հա-

վանորեն տիրապետում է օգտակար գիտելիքների Օսմանյան կայսրության վերաբերյալ, և շատ կապեր ունի իր հայրենակից քրիստոնյաների շրջանում»:

Վորոնցովի պատասխան նամակում (23 նոյեմբեր, 1761) կարդում ենք. «Ձեր երաշխավորած մարդու պատմությունն իսկապես բավական արտասովոր է, բայց նրա նպատակներն ինձ փոքր-ինչ ցնորական են թվում: Այնուամենայնիվ, խնդրում եմ Ձեզ հաստատ համոզված լինել, որ, ըստ Ձեր երաշխավորության, նրան կաջակցեմ՝ որքան կարող եմ: Ներկայացրի նրան Վրաստանի արքայազնին, որը նրան շատ լավ ընդունեց... Նա կծառայի արքայազնին... և այդ ժամանակ կարող է դրսևորել իր տաղանդն ու կարողությունը» (2, էջ 70, 74):

«Նրա նպատակներն ինձ փոքր-ինչ ցնորական են թվում» – Վորոնցովի այս դատողությունը պետական բարձրաստիճան գործչի՝ Հայաստանում և շրջակա երկրներում տիրող իրադրության ու հեռանկարի ռեալ իմացության վկայություն են, ի տարբերություն Էմինի մոտավոր, մակերեսային իմացության, որը և նրա պատրանքների ծաղկման պարարտ հող էր, հատկապես՝ նախքան հայրենիք հասնելը: Իսկ ինչպե՞ս կվարվեր նա, եթե նախապես լավատեղյակ լիներ իրադրությանը, ինչպիսի՞ն կլիներ ազատագրական նրա ծրագիրը: Սա բնավ հռետորական հարց չէ, քանզի Կովկաս, վերջապես՝ հայրենիք հասնելուց հետո նրա գործունեությունն այլ բնույթ կունենար, և այլ բնույթ կունենային նրա հարաբերություններն այնպիսի դեմքերի հետ, ինչպսիք էին 1744-ից Կախեթի, 1762-ից Քարթլի-Կախեթի թագավոր Հերակլ II-ը (1720–1798) ու Սիմեոն Երևանցի կաթողիկոսը: Եվ նա, հավանորեն, երկուսից էլ չէր հեռանա դառնացած, կհամոզվեր, որ տարածաշրջանի ծանր, բարդ կացության մեջ գտնվող երկու քրիստոնյա երկրների պետական, եկեղեցական գործիչները չէին կարող յուրովսանն չհարմարվել անընդհատ փոփոխվող իրադրությանը: Նա կփորձեր ամենատարբեր մարդկանց հետ «լեզու գտնելու» իր տաղանդով հավասա-

Բայց մարդկային հարաբերությունների այդ սովորական միջոցներով կարգավորել տնտեսական, էթնիկ, կրոնական հակասությունները, երկրների, ժողովուրդների առնչությունները, ազգային ինքնությունության խնդիրը, տարածքների պաշտպանությունը, առավել ևս՝ լարված, բախումային իրավիճակներում, հնարավոր չէ: Այդ խնդիրների լուծման հնարներն են իրավունքը, պետական քաղաքականությունը և դիվանագիտությունը:

Հերակլին Էմինը նկարագրում է իր ժամանակի միապետին բնորոշ հատկանիշներով, երբեմն էլ՝ չկողմնորոշվելով իր գնահատականներում: Թագավորը, իր բանակի գլուխն անցած, մասնակցում էր պատերազմական գործողություններին: Կովկասյան տարբեր վայրենաբարո ժողովուրդներով, Թուրքիայով շրջապատված, Իրանին ենթակա Վրաստանի արքան ստիպված էր արտաքին անկայուն, հակասական հանգամանքների համեմատ անընդհատ փոխել իր ռազմավարությունը, դիվանագիտական ճկունության ցուցաբերել և դիմել անխուսափելի իրարամերժ քայլերի:

Էմինը, իր ուղղագիծ ազնիվ բնավորությամբ ի գործ չլինելով խորապես հասկանալ Հերակլի վարվելակերպի օրինաչափ հակասությունները, դրանք համարում էր սոսկ թագավորի անհատական բացասական գծերի արդյունք: Բայց և, պատկերացնելով վերին իշխանության պետական քաղաքականության բնույթի և հպատակների առօրյա ընկալումների ու վարվելակերպի տարբերությունը, նա բարձր էր գնահատում իր հետ դաժանորեն վարված Հերակլ պետական գործչին:

Պետական կառավարման փորձ չունեցող Էմինը, այնուամենայնիվ, տարբեր լարված, անսպասելի, վտանգալի կացություններում արագ դիրքորոշվելու, ուժերի հարաբերակցությունը սթափ գնահատելու իր ձիրքով, հաջողությամբ դուրս էր գալիս իր դեմ լարված դավերից:

Հրաժարվելով վրաց-հայկական պետության ստեղծելու գաղափարից՝ Էմինն այլ տարբերակ էր որոնում: Երեք

հզոր կայսրությունների միջև ընկած, երկուսի տիրապետության տակ բաժանված, պետականագործի Հայաստանը չէր կարող ինքնությունաբար անկախանալ: Էմինի մտածած տարբերակներից էր՝ աշխարհում ցրված հայերին գոնե պարսկական տիրապետության տակ հավաքելը, որպեսզի ուժեղանան և հեռանկարում անկախանան: Երբ նրանք «լսեին, թե պարսիկներն իրենց լավ են վերաբերվում, կվերադառնային իրենց երկիրը և անչափ օգտակար կլինեին թագավորությանը, հատկապես եթե իմանային, որ հայրենակիցն է գլխավորելու իրենց»: Թեև Էմինին բարեկամացած պարսիկները՝ «իշխաններից մինչև զինվորներ, հարուստ ու աղքատ», հաջողություն էին մաղթում նրան, այդ ծրագիրը ևս անիրականանալի էր՝ նախ որովհետև աշխարհասփյուռ հայերը չէին համաձայնի դրան:

Էմինն առաջնորդվում էր բացարձակ իշխանության՝ իշխանն իր երկրի տերն է և կարող է վարվել, ինչպես ճիշտ կհամարի, ելակետային դրույթով: Քաղաքական իշխանությունը հնարավորություն և կարողություն է՝ սեփական կամքը պարտադրելու հպատակներին, բայց մինչև ո՞ր սահմանը: Թոմաս Հոբբսը «Հիմունք փիլիսոփայության» երկի երրորդ մասում (1642) գրում է. «Պետությունը (եթե այն սահմանենք) մեկ դեմք է, որի կամքը, շատ մարդկանց համաձայնությամբ, պիտի ընդունվի որպես նրանց բոլորի կամք, որպեսզի նա կարողանա օգտագործել յուրաքանչյուր անհատի ողջ ուժը և ունակությունները՝ հանուն խաղաղության պահպանման և ամենքի պաշտպանության» (5): Ուստի, ինչ էլ նա անի, նրան չեն պատժում, և քանի որ քաղաքացիները նրան բացարձակ իշխանություն են վստահել, պետք է հնազանդվեն:

Բացարձակ իշխանություն-բացարձակ հնազանդությունը միապետի անպատիժ կամայականության հաստատում է: Ընդհանուր շահերի պաշտպանության պարտականությունը միապետին իշխելու անառարկելի իրավասություն էր տալիս արդեն միջնադարյան ֆեոդալական աստիճանակարգով: Եթե Հոբբսը նկատի չունի ազնվական-

թյանն արժանանալու համար էր, որ չէր հրաժարվում իբրև իշխան ներկայանալուց):

3

«Հայերի թագաժառանգի» անունը բարդ կացության մեջ է դրել Էմինին մաս Հերակլի մոտ, երբ նրա կանչած ազնվականներն առաջարկել են վերացնել «ինքնակոչին»: Նրան վատաբանել է մաս հայ վաճառական Թարխանը: Էմինն ինչքան էլ գիտեր, որ Հերակլն այն մարդը չէ, ումից «կարելի է կախման մեջ լինել», և որ նա ամեն հնարավոր չարիք նյութելու է իր դեմ, այնուամենայնիվ չէր հրաժարվում նրան ծառայելու միջոցով վրաց-հայկական պետություն հիմնելու գաղափարից: Անգլիայում ռազմարվեստի դպրոց անցած, Ֆրիդրիխ II-ի սկսած պատերազմական գործողություններում թրծված Էմինը թեև ասում է՝ «ռազմարվեստում ես ընդամենը աշակերտ եմ», կարող էր Հերակլին օգտակար լինել: Բայց հայ Բագրատունիներից (որոնց մի ճյուղն էին IX դարի վերջում ասպարեզ եկած վրաց Բագրատունիները) սերած Հերակլի նպատակը վրացական ամուր պետության կերտումն էր: Բարենպաստ պայմանների դեպքում չէր հրաժարվի և իր իշխանության տակ վրաց-հայկական պետություն հիմնելու գաղափարից (դա ավելի կամրապնդեր Վրաստանի դիրքը Կովկասում): Սակայն իրավիճակը բնավ հուսադրող չէր. Իրանի, առավել ևս՝ Օսմանական կայսրության դեմ ելնելով հայկական տարածքներ ազատագրելու փորձը կարող էր աղետալի հետևանքներ ունենալ սեփական տրոհված իշխանությունները դեռևս չմիավորած Վրաստանի համար:

Պատմության հետագա ընթացքը ցույց տվեց, որ անհիմն էին դրական սպասելիքները: Քարթլի-Կախեթի վրա Ռուսաստանի պրոտեկտորատն ամրագրող՝ 1783-ին կնքված Գեորգիևսկի պայմանագիրը չապահովեց երկրի կայունությունը: 1795-ին Իրանի շահ Աղա Մոհամադ-խան Դաջարի հարձակումից առաջ անտեսվեց Հերակլի՝ իրեն օգնական բանակ ուղարկելու դիմումը ռուսներին: Վրացա-

կան անջատ իշխանությունները նույնպես չհասան օգնության, բացառությամբ Իմերեթիայի թագավոր Սողոմոն II-ի, և Հերակլը հազիվ հավաքած իր 5 հազարանոց զորախմբով ծանր պարտություն կրեց հակառակորդի 35 հազարանոց բանակից: Այդուհանդերձ, պատմական իրադարձությունների հետագա զարգացմամբ հաստատվեց, որ ռուսական կողմնորոշումը ճիշտ ընտրություն էր:

Հերակլի հետ հարաբերությունն Էմինի համար ուժերի և շահերի քաղաքական պայքարի ուսանելի դաս էր առաջին հանդիպումից ի վեր, քանզի թագավորին բացահայտորեն հետաքրքրում էր միայն գործնական՝ ի՞նչ օգուտ կարելի է քաղել հարցը: Երբ Հերակլը որոշում է Էմինին վռնդել երկրորդ անգամ, նրա հրամանը՝ անմիջապես լքել տիրույթը, հապաղելու դեպքում՝ վերջ կյանքին, Էմինն ընդունում է ինչպես հարկն է: Նրան զգուշացնող իշխան Աբաշիձեի բացատրությամբ՝ կասկածամիտ Հերակլը վախենում էր, որ լեզգիների դեմ կռիվներում կոփված իր հայ հպատակները կարող են ապստամբել, «ինչի հետևանքը մահացու կլինի» իր համար: Քանի որ մյուս միապետների մեծ Հերակլը, ղեկավարվելով զուտ իր շահերով, վարում էր ընտրովի, իրադրային քաղաքականություն, ապա, որպես փորձառու պետական գործիչ, իր պատկերացրած դրական ու բացասական կողմերով ծանրութեթև էր անելու Վրաստանի հանդեպ Ռուսաստանի վարած իրադրային քաղաքականությունը: Արագորեն զորախումբ հավաքելու, վճռակալորեն մարտի նետվելու և ուժով իրեն գերազանցող հակառակորդին արևմտյան առաջավոր մարտարվեստով հաղթելու Էմինի հավակնությունը թե՛ գրավիչ, թե՛ մտահոգիչ էր: Որևէ խնդիր Հերակլը, օրինաչափորեն, քննում էր տարբեր կողմերից՝ ով էլ լինեք, պետք է որպես զենք ծառայեր իրեն, ոչ թե իր դեմ: Վրաստանից հեռացող Էմինի զրուցակիցները Հերակլի վերաբերմունքը դատապարտում են մարդկային ընդունված սովորույթների, բարոյական նորմերի, անգամ զգացական-մասնավոր մակարդակով:

րակշիռ, արդյունավետ հարաբերություններ հաստատել: Բայց այդպես էլ, նրա հստակ չկողմնորոշվելու պատճառով, եթե Հերակլը մերթ ընդունում, մերթ վանում էր նրան, ապա Սիմեոնը դիմեց ամեն միջոցի՝ նրան երկրից միանգամից հեռացնելու համար:

Գոլիցինը ճիշտ է ներկայացրել նրա խիզախ, ազնիվ, հանդուգն նկարագիրը: Ավելացնենք՝ ուղղամտությունը, որը խանգարում էր նրա նպատակի իրագործմանը: Ռուսաստանով նրա ճամփորդությունն անցավ փորձություններով: Երբ հասավ Ղզլար, ինչպես գրում է տեղի պարետ գեներալ-մայոր Ալեքսեյ Ստուպիշինն իր՝ «Արտասահմանյան գործերի կոլեգիա» ուղարկած զեկուցագրում (14 օգոստոսի, 1762), «հայ ժողովուրդն ի նշան հարգանքի, իբր իրեն տիրող թագաժառանգի մոտենալով նրան, ձեռքերն էր համբուրում և ծնկաչոք սողում... ինչը նա հաճույքով ընդունում էր»: Ռուսաստանում տրված անցագրին անհամապատասխան նրա այս պահվածքը հարուցում է պարետի կասկածը, որը խորանում է մի շարք սպաների մասնակցությամբ ճաշի ժամանակ. «Հայ ժողովրդին, ճիշտ որ, իրենը անվանեց՝ սնափառությամբ Պետերբուրգի շատ ազնվագարն երևելիների իր բարեկամները կոչելով», պատմելով, թե, (Բրաունշվայգի) արքայազն Ֆերդինանդի հրամանատարությամբ, մասնակցել է Հաննովերյան պատերազմին, ապա եղել ֆրանսիացիների դեմ կռվող անգլիական նավատորմում, երբ, իբր, ֆրանսիական 120 նավ է այրվել, և վերջապես մասնակցել է Կոստշինի (Կյուստրինի) մարտին իր՝ պրուսական թագավորի հետ (4, էջ 248–249):

Նշված առաջին՝ 1757-ի պատերազմական գործողություններին Էմինի անվեհեր մասնակցությունից գոհ է եղել գլխավոր հրամանատարը՝ Քամբերլենդի դուքս Ուիլյամ Օգոստոսը: Հաջորդ տարի, Սեն-Մալոյի նավահանգստի վրա անգլիական արշավանքը, որին մասնակցել է նաև Էմինը, ավարտվել է ֆրանսիական մեծ ու փոքր նավերի հրկիզմամբ (ըստ Ստուպիշինի՝ 120, Էմինի գրքում՝ 173,

թվերը ճշգրիտ չեն): Իսկ Կոստշինի կռվին Պրուսիայի թագավորի հետ իր մասնակցության ու «շատ ռուսների սպանելու» մասին Ստուպիշինի պնդումն Էմինը հերքել է: Ստուպիշինի զեկուցագրի հիման վրա Աստրախանի նահանգապետ Վասիլի Ներոնովը, կրկնելով նրան և ավելացնելով իրեն կասկածելի այլ մանրամասներ, 1762 թ. սեպտեմբերի 4-ին «Արտասահմանյան գործերի կոլեգիային» գրել է, որ Ղզլարի պարետի հետ հանգամանորեն կպարզեն՝ նա իսկապես դրամական վարկ ունե՞ր, և իրենք՝ հայերը, ընդունելով նրան, թագաժառանգ կիռչակեն ու կպաշտեն՞, և Աստրախանում չի՞ նկատված նրա մասին որևէ կասկած: Տարածված ծիծաղելի լուրը, «թե Անգլիայի արքայազնն Էմինին մվիրել էր մեկ միլիոն ֆունտ ստերլինգ», որին հավատում էր Ստուպիշինը, հիշվել է նաև հետագայում՝ կրկնվելով մույնիսկ Բաֆֆու «Խամսայի մեղիքությունները» երկում: Կասկածն այնքան խորն էր, որ Ներոնովը նրան վերադարձրել է Մոսկվա՝ ուղեկցորդ սերժանտ Պյոտր Երմոլանին հրահանգելով «գաղտնի հետևել Էմինին, որպեսզի նա, բացի Մոսկվայից, այլ տեղեր կամ արտասահման չկարողանա գնալ» (4, էջ 255–256):

Գավառական տառակեր բարձր պաշտոնյաներին կասկածի առիթ, բացի ժողովրդի ցույցերից, տվել էր նաև ինքը՝ Էմինն իր ուղղամիտ բնավորությամբ՝ պատմելով գլխով անցած անհավատալի թվացող դեպքեր: Նա կարիք չունեի կեղծ արքայազն խաղալու: «Արտասահմանյան գործերի կոլեգիա»-ում Վորոնցովի ու Գոլիցինի հարցաքննության ժամանակ Էմինը պատասխանում է, թե «իշխանը նա է, ով իշխանավայել պահվածք ունի», և ավելացնում. «Ինչպե՞ս է հնարավոր իշխան գտնել մի ազգի մեջ, որին 600 տարուց ավելի իշխում են մահմեդականները»: Այստեղ էլ երևում է՝ դա չէր նշանակում ավելին, քան որ նա պատրաստ էր իր վրա վերցնելու հայ ժողովրդին ազատության պայքարի առաջնորդելու մեծ ու դժվարին պարտականությունը (և սոսկ նրա վստահու-

ների որևէ խումբ, որոնց համաձայնությունը բոլոր հպատակներին միապետի կամքը պարտադրելու հիմք չէ, շատերի համաձայնությունը որևէ դեր չէր կատարում: Քանզի միապետը ժառանգական իրավունքով հաստատվում էր ցմահ, կամ էլ պալատական հեղաշրջմամբ, վերիշխանական երկպառակություններում գահը զենքով նվաճելով: Բացարձակ՝ օրենսդիր, գործադիր, դատական, ռազմական, երբեմն և կրոնական իշխանության տիրապետող լուսավորության դարում արդեն որչափ իրավասու էր բռնաճալու հպատակների իրավունքների, ազատության, ունեցվածքի վրա: Չէ՞ որ հասարակության քաղաքական ազատությունների հիմքում ևս ընկած են Լուսավորական գաղափարները:

1688–89-ի «Պանծալի հեղափոխությունը» Անգլիայում հաստատեց սահմանադրական միապետություն՝ պառլամենտի գերիշխանությամբ: Պետական այդ կառավարման բնույթը Վոլտերը ներկայացնում է հետևյալ կերպ. «Անգլիացի ազգը միակն է աշխարհում, որին հաջողվեց սահմանափակել թագավորների իշխանությունը՝ դիմադրելով նրանց, և որը բազում ջանքերից հետո վերջապես հաստատեց այն իմաստուն կառավարումը, ուր տիրակալն ամենագոր է, եթե լավ բան է անում, բայց նրա ձեռքերը կապված են, եթե նա չարիք է նյութում, ուր իշխանավորները երևելի են առանց լկտիության ու վասալների, և ուր ժողովուրդը մասնակցում է կառավարմանն առանց խռովության» (6):

Թեև Հոբբսի բնորոշմանը համընկնող «Իշխանը կարող է վարվել, ինչպես ճիշտ կհամարի» դրույթը Էմինն ընդունում էր՝ նկատի ունենալով արևմտյան լուսավորչալ միապետությունը, որի տիպարային ներկայացուցիչները նրա համար Պետրոս Մեծը և Ֆրիդրիխ Մեծն էին, սակայն այդ խնդրում նրա տեսակետը որոշակիորեն հետադիմական էր: Եթե Պետրոս I-ի կենսագրությանը նրա ծանոթությունը, բնականաբար, գրքային էր, ապա Ֆրիդրիխ II-ին բախտ էր ունեցել հանդիպելու, ծառայելու նրա բանակում: Ակա-

նատեսի նրա հիացական նկարագրությունը պատմավավերական կարևոր արժեք ունի. «Իր տարեկիցներին Նորին Մեծությունը կոչում էր «եղբայր», ավելի երիտասարդներին՝ «տղաս», իսկ փոքր-ինչ տարեցներին՝ «հայրիկ»... որովհետև նա ոչ միայն թագավոր էր, այլև իր երկրի հայր, և ամեն հնարավոր բան անում էր, որ այն բարգավաճի»: Այդպես և Պետրոս I-ը, Եվրոպայում զարգացրած իմաստությամբ լի, իր երկրի հայրը, տերն ու թագավորն էր: Էմինը հիշատակում է Հոլանդիայի նավաշինարանում իբրև բանվոր նրա ծառայելը՝ շեշտելով, որ, հանուն հայրենիքի հզորացման, նույնիսկ Պետրոսի մման մեծություններն են հաղթահարել ամեն դժվարություն և չեն խուսափել անգամ որևէ «նվաստ» աշխատանքից:

Ինքը՝ սովորական ծագումով Էմինը, մեծ նպատակի մղումով մեկնել էր Եվրոպա, հաղթահարել բազում դժվարություններ, ապրել ծանր աշխատանքով, ընդունվել բարձր հասարակություն, տիրապետել առաջավոր ռազմարվեստին, որն ամեն միապետի գլխավոր կարողությունն էր իր դերակատարության մեջ: Ուստի հանգիստ էր ընդունում իրեն ուղղված «Նորին Մեծություն», «Հայաստանի թագավոր» դիմելածնը ոչ թե որպես տիտղոս, այլ դժնդակ վիճակում գտնվող հայ ժողովրդի՝ իրեն ուղղված մարտահրավեր, ճակատագրով վիճակված պարտականություն:

Իրար համեմատելով արևմտյան միապետությունը և արևելյան բռնապետությունը՝ վերջինիս ոճրային բնույթն Էմինը համարում էր հետամնացության ու տգիտության արդյունք: Նրա համոզմամբ՝ լուսավորությունն էր այն անկասելի ուժը, որի տարածմամբ Արևելքը պիտի բարձրանար Արևմուտքի առաջավոր մակարդակին: Մարդկության պատմական զարգացումը լուսավորականները սովորաբար ներկայացնում էին միագիծ առաջադիմությամբ: Արևելքն ու Արևմուտքն իրարից խիստ տարբեր աշխարհներ էին: Պատմավավերական բնորոշ բացահայտում է Նադիր շահի (իշխել է 1736–1747 թթ.) մոտ ընդունելության սպասող Էմինի պատմածը. մարդկանց «դուրս էին բերում ձեռ-

քերի վրա, ոմանց՝ խեղդված, ոմանց՝ գլուխները ջախջախված, ոմանց էլ՝ քթերն ու ականջները կտրված... Նաղիրն իր ողջ կառավարման ընթացքում երբեք ոչ մի հայի վնաս չի տվել, բացի Ջուղայի գլխավոր վաճառականներից երկուսին, որոնք սուտ երդվել էին նրա գլխով և կենդանի այրվել Սպահանի մեծ հրապարակում 1746 թ.»: Իսկ արյունարբու Ալի Մուրադ շահը (իշխել է 1781–1785 թթ.) Սպահանում «սողամարդկանց զանահարում էր, այրում հարուստ կանանց կրծքերը և բոլոր հպատակներից մեծ գումարներ խլում»: Նա «վերացրել էր իր իսկ ընտանիքից առնվազն քառասուն մարդ, իսկ Շիրազն առնելուց հետո տանջամահ էր արել իր հորն ու եղբայրներին, չհաշված բազմաթիվ զորավարների ու իշխանների»: Ապա՝ «հանեց հանգուցյալ Քարիմ խանի երկու որդու՝ Աբուլֆաթի խանի ու Մոհամադ Ալի խանի աչքերը»:

4

Հնարավոր էր Արևելքում վերացնել նման բարբարոսությունները լուսավորությամբ: Ըստ պատմահասարակական զարգացման օրենքները մեկնաբանող XVIII դարի տեսությունների, ներկան պատճառահետևանքային կապ ունի թե՛ անցյալի, թե՛ ապագայի հետ: Մարդկությունն անցնում է առաջադիմության մույնակերպ ուղու զարգացման աստիճաններով: Տարբեր մշակույթներ ունեցող ժողովուրդների պատմությունների ընթացքը մի ընդհանուր սկզբունքով քննարկելու եղանակը կարող էր արդյունավետ թվալ այնքան ժամանակ, մինչև հետագա ուսումնասիրությունները դեմ չառնեին բացահայտ հակասությունների: Թեև դա նկատելի էր արդեն այս պատմաշրջանում, սակայն լուսավորության տարածմամբ հակասությունները հարթելու ճանապարհով առաջադիմության միագիծ զարգացումն իրականացնելու գաղափարը դեռ միանգամայն հնարավոր էր թվում: Եվ գերակա այդ գաղափարին էին նվիրված դարի իսկական գավակ Հովսեփ Էմինն ու հայ լուսավորական շարժման մյուս ներկայացուցիչները:

Պատմության զննությունն առաջադիմական զարգացման հայեցակետից ինքնին թելադրում էր առանձին հաստատուն փուլերի հաջորդականություն, որոնցով անցնում են հասարակությունները: Ջամբատիստա Վիկոն (1668–1744) օրինաչափ այդ ընթացքը բաժանել էր երեք փուլի՝ աստվածային, հերոսական, մարդկային: Ժան Անտուան Կոնդորսեն (1743–1794) գտնում էր, թե մարդկությունն արդեն անցել է ինը դարաշրջան (սկսած առաջինից, երբ մարդիկ միավորվել են ցեղերում), իսկ տասներորդն ապագան է, որին բնորոշ կլինեն երեք միտում՝ հավասարությունն ազգերի միջև, հավասարությունն դասակարգերի միջև և բոլոր անհատների մտավոր, բարոյական ու ֆիզիկական կատարելագործում: «Մարդկային մտքի առաջադիմության պատմական պատկերի ուրվագիծ» երկի նախաբանում նա գրում է. «Եթե այդ... զարգացումը քննենք արդյունքների տեսանկյունից, ըստ մույն ժամանակ տվյալ տարածության մեջ գոյակցող անհատների, և եթե հետևենք դրան սերնդե-սերունդ, ապա դա մեզ կներկայանա որպես մարդկային մտքի առաջադիմության պատկեր: Այդ առաջադիմությունը ենթարկվում է մույն ընդհանուր օրենքներին, որոնք նկատվում են անհատական ունակությունների զարգացման մեջ»: Առաջադիմության պատկերը «պետք է ներկայացնի փոփոխությունների հաջորդականությունը, ցույց տա, թե ինչպես է ազդում յուրաքանչյուր պահ հաջորդ պահի վրա... Այդ առաջադիմությունն անկասկած կարող է ավելի կամ պակաս արագ լինել, բայց երբեք հետընթաց չի լինի» (7):

Պատմության օրինաչափ ընթացքը, այսպիսով, ընդհանրացվում է իրադարձությունների փոխկապակցված հաջորդականության հետազոտով: Աշխարհայեցության ձևավորման նախնական շրջանում լուսավորական Բաֆֆին ընդունել է դետերմինիստական այս սկզբունքը՝ նախորոշելով հայ ժողովրդի պատմական հեռանկարը – պատմությունն ազգերի առջև մի որոշ շավիղ է գծել. դա ողջ մարդկության ուղին է, ինչ ազգ որ ոտքը դուրս է դնում այդ

շավղից, մոլորվում է, կորչում, ոչնչանում: XVIII դարին հատուկ՝ պատմության միագիծ առաջադիմական զարգացումով ազգի ապագան կերտելու սկզբունքով են գրվել հայ լուսավորական առաջին նշանավոր երկերը:

Պատահական չէր, որ արևելյան բռնապետության տակ ճգնված հայրենիքից հեռու, արևմտաեվրոպական, հատկապես անգլիական հասարակական-քաղաքական մշակույթի խոր ազդեցությամբ ստեղծված «Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները» թեև հրատարակվել է 1792-ին, բայց այն ավարտելիս Էմինը, եթե անգամ հանգամանորեն կարդացել էր, այդուհանդերձ էականորեն չէր կրել Հայաստանում և տարածաշրջանում իր ուղեկից ու ազգական Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակի» (1772) և Շահամիր ու Հակոբ Շահամիրյանների «Որոգայթ փառացի» (1773) ազդեցությունը: Իր գրքի վերջում նա բացասաբար է արտահայտվում Բաղրամյանի մասին, որի հետ խզել էր հարաբերությունը, իսկ գլխավոր՝ ազգային-պետական կառուցվածքի խնդրում նրա և Շահամիրյանների դիրքորոշումներն արմատապես տարբեր են: Հակառակ Էմինի լուսավորչալ միապետության գաղափարի՝ Շահամիրյանները նախագծել էին ազգային պետության հիմնում՝ առաջավոր դեմոկրատական սկզբունքներով (երբ անգամ համաշխարհային մակարդակով ժամանակից առաջ անցած՝ Թոմաս Ջեֆֆերսոնի նախագծած «Անկախության հռչակագիրը» ընդունվել է 1776-ին, իսկ Ֆրանսիայում «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը»՝ 1789-ին):

Ապագա Հայաստանի սահմանադրական դրույթները մանրամասնորեն քննարկելով իրենց երկում՝ Շահամիրյաններն արքայական ինքնակալությունը համարում են չար ու Հայոց աշխարհին անօգուտ երևույթ, անհուն վնասների պատճառ: Թագավորները «մեզ խոնարհեցրին պատվից ու ազատության երջանկությունից... ոչ միայն սաստիկ նվաստացրին մեզ, այլև գերի դարձրին մեզ այլազգիներին: Եվ ինչպես որ այսօր մեր ազգից թագավորությամբ ոչ ոք իշխող չկա մեզ վրա, ուրեմն և թող մեզ համար ցանկալի

և ընդունելի չլինի, որ... կրկին հանդես գա թագավոր կամ իշխան և կամ զորագլուխ, ոչ մի ոք՝ ինքնակալ իշխանությամբ»: Ապա նրանք առաջարկում են «ընդհանուրի թագավորություն»՝ կանգնեցրե՛ք «սյուներ խորհրդականներով և ձեր բանական հոգու զորությամբ, համահավասար ժողովրդի կամքի ու ցանկության... ընտրե՛ք բարի օրենքներ՝ ապրելով ու կախման մեջ մնալով ձեր օրենքներից, քանզի ոչ ոք իրավունք չափտի ունենա իշխելու ձեզ, բացի ձեր օրենքներից» (8):

Շահամիրյանների առաջարկած պետական համակարգը որքան առաջավոր, նույնքան անկիրառելի էր լինելու, թեկուզ երևակայական անկախ Հայաստանում, առավել ևս՝ երբ եվրոպական երկրներում անգամ տիրապետող էր թագավորական իշխանությունը: Էմինի պատկերացումը ոչ միայն ինքնին անհամեմատ մոտ էր իրականությանը, այլև ժամանակի քննական տեսանկյունից բացահայտում էր հայ ժողովրդի անտերունչ, պետականագուրկ, անպաշտպան զոհի վիճակի պատճառը. «Փոքրուց հարցրել էի հորս, թե ինչու են անհավատները մեզ հալածում և ինչու ենք մենք ստորացած ապրում անօրեն ազգերի մեջ: Նրանք վախենում էին ինձ պատասխանելուց... Ասում էի, որ գետնաքարշ մրջյուններն էլ թագավոր ունեն, իսկ մենք չունենք, և բոլոր երկրների ազգերը մեզ ծաղրում ու հալածում են՝ ասելով, թե անտեր ենք, չունենք մեր թագավորը և նման ենք երկրի երեսին սփռված հրեաներին»: Ապա՝ «Դուք իրար չեք սիրում, պատիվ չունեք, և քանի որ ձեր ազգը պառակտված է, բոլոր ազգերն անարգում են ձեզ: Դուք արհամարհելի եք, անմախսանձախնդիր և այնքան եք փող սիրում, որքան հեթանոսներն՝ իրենց աստվածներին»: XVIII դարի անջնջելի արձանագիր այս տողերն այժմ էլ դժնի իրողություն են...

Էմինի գրքի լեզուն, ուղղագրությունը խմբագրած Ուիլյամ Ջոնսը (1746–1794), որ հեղինակ էր լեզվաբանական, պատմագիտական, գրականագիտական, բուսաբանական, աշխարհագրական, երաժշտագիտական բազմա-

թիվ աշխատությունների, 1788 թ. օգոստոսի 10-ի նամակում Էմինին գրում է, թե կառավարման միակ բնական ձևը ժողովրդավարությունն է, բայց այդ դեպքում մեծամասնություն կազմող ծույլերը կշարունակեն աղքատ ու թույլ մնալ, իսկ փոքրաթիվ աշխատասերները կհարստանան, կիզորանան: «Թագավորի գլխավոր դերն այդ փոքրամասնության ամբարտավան և տիրական կեցվածքը զսպելն է: Ուստի խառը կառավարությունը, ինչպես Անգլիայում, բնական հասարակության վիճակին մոտենալու միակ ձևն է... Եթե նպատակ ունեիք մեր սահմանադրությունը հայկական հողի վրա տեղափոխելու, ի սրտե ողբում եմ Ձեր հիասթափության համար, չնայած և չեմ զարմանում: Նման ծրագիրն իմ կարծիքով հույժ գովելի է, և Դուք էլ պետք է որ այդպես մտածեիք, այլապես չէիք ձեռնարկի այն»:

Այն ժամանակ Կալկաթայի Գերագույն դատարանի դատավոր Ջոնսը հստակ պատկերացնում էր ինքնուրույն պետականությունից գուրկ և ասիական բիրտ, վայրի ու քառասային տարածաշրջանում գտնվող մի երկրում կառավարման ոչ թե առաջավոր, այլ ընդհանրապես որևէ համակարգ հիմնելու անհնարինությունը: Ենթադրյալ անկախացած Հայաստանում Եվրոպայի առաջավոր երկրներին հարմար խառը կառավարության արմատավորման փորձը դառնադի պտուղներ էր տալու: Պատահական չէր, որ տարածաշրջանի երկրներում տիրապետող արևելյան դաժան, բացարձակ միապետությունն էր: Հայկական պետության ամրապնդման ու հզորացման նվիրյալ միապետը միայն կարող էր լինել կայունության երաշխավորը: Ուստի Շահամիրյանների մշակած ժողովրդավարական համակարգն այդ ժամանակ որքան առաջավոր, նույնքան էլ ցնորական էր: Անիրականանալի ուտոպիա էր մնալու նաև Ջոնսի նշած պետական կառավարման ձևը, որից իրապես տարբերվում էր Էմինի նախընտրածը՝ թագավորի բացարձակ իշխանությունը:

Հերակլի հետ առաջին հանդիպմանը Էմինն ասում է. «Ոչինչ այս աշխարհում չի կարող տեղի ունենալ առանց

Աստծո կամքի: Հակառակ նրա ցանկության՝ մեր գլխից անգամ մի մազ չի ընկնում... Վրաստանը կամ Հայաստանը... առանց Ձեզ քառս կլինեին... Երևում է մարդիկ անկարգ ու տգետ են, նրանցից ոչ մի լավ բան չի կարելի սպասել, այլ միայն՝ խառնաշփոթ ու պառակտում»: Հերակլի հարցին՝ «Բայց ի՞նչ անենք, իմ Էմին աղա, որ դրանք մարդ դառնան», Էմինը պատասխանում է. «Ապակու պես փշրենք նրանց՝ նորից ձուլելու համար»:

Հակադիր տեսակետների այս շփոթը տատանվում է աստվածային կամքի, մարդու կամքի և հասարակական առաջադիմության դետերմինիստական եռանկյունու միջև: «Հակառակ նրա՝ անգամ մի մազ չի ընկնում» պնդումը բացառում է թե՛ Հերակլի ազատ կամքի գործադրմամբ քառսի կարգավորումը և թե՛ կրթությամբ ու դաստիարակությամբ անկարգներին ու տգետներին «մարդ դարձնելը»: Իրենց հերթին՝ երկրորդ և երրորդ պնդումները բացառում են առաջինը: Երկրորդը՝ անհատի կամքի առաջնությունը, անտեսում է երրորդը՝ հասարակական զարգացման օրինաչափ ընթացքը, որին չհամընկնող ինքնակամությունը դատապարտված է ձախողման: Մյուս կողմից երրորդի՝ առաջադիմական կրթության միջոցով մերժվում է երկրորդի կամայական բնույթը: Համընդհանուր պատճառականության սահմանորոշ բնույթն աստվածային նախախնամության սկզբնապատճառի հարկադրանքի տակ դնելը մարդուն զրկում է անհատական պատասխանատվությունից, և ազատությունն ի վերջո զոհաբերվում է Բարձրյալի պարտադրանքին, ինչքան էլ քրիստոնեության աստվածաբանական ուսմունքները մարդուն փոքրիշատե չեն զրկել ազատ ըմտրության հնարավորությունից:

Այդ հակասությունները, սակայն, եթե երբեմն Էմինին խանգարում էին կողմնորոշվելու հասարակական իրադրություններում, ապա, այնուամենայնիվ, չէին շեղում իր նպատակադիր գործունեությունից: Ենթադրելով, որ մեկը, մյուսը, երրորդը համատեղ բացում են ազատության պայքարի ճանապարհը միակ անհրաժեշտ ապագան կերտելու

համար, և, ինչպես ընդունել էր, այնպես էլ թեթևորեն մի կողմ դնելով հակասական տեսակետները, Էմինը կանգ չէր առնում ոչ մի դժվարության ու վտանգի առաջ: Հերակլին նա առաջարկում էր զինվորներ պատրաստելու պարզ մի եղանակ – յոթից տասնվեց տարեկան երեխաները թող սովորեն կրոնի հիմունքները՝ հավատքն ամուր հիմքի վրա դնելու համար, սովորեն զենք գործածել, ապա հերոսական դասախոսություններ ունկնդրեն: Ուստի, նրա դժգոհությունը, թե իրեն ուրիշ հայերի պես գրագիտություն և եկեղեցում սաղմոսներ երգել են սովորեցրել, բայց ոչ զենք բանեցնել՝ հանում այդ եկեղեցու կռվելու նպատակով, վերաբերում էր հարցի երկրորդ մասին: Քրիստոնեական հավատքը զենքով պաշտպանելը նրա համար ազգային ինքնության, անկախության ու ազատության պաշտպանություն էր նշանակում: Իսկ զինվորներ պատրաստելու պարզունակ եղանակը նա համարում էր սկիզբ երկրի ծաղկման, որպեսզի այն դառնա «նույնքան լուսավորյալ, որքան Եվրոպայի բոլոր թագավորությունները»:

5

Բանականության դերի համապատկերում պատմության զարգացման դետերմինիստական հիմնավորումը սահմանում էր երևույթների փոխկապակցության որոշիչ պայմաններ: Առաջընթացը կարգավորող անցյալ-ներկա-ապագա շղթայում նկատառվում էին որոշակի գործոններ: Դրանով իսկ, առաջադիմական մի ընդհանուր մակարդակի հասնելու պարագայում, համեմատելիություն-նմանություններով, տարբեր ժողովուրդների մշակույթներն օժտվում էին լուսավորական հիմնարար պահանջների տարածման ու հաստատման հնարավորությամբ: Քանզի պատճառահետևանքային կապերի բազմազանությունը միևնույն պայմաններում պարունակում է ընդհանրության տանող գծեր: Իրենց բնույթով համեմատելի հասարակություններում էվոլյուցիոն տարբերությունները ոչ միայն ժամանակային, այլև տարածական, աշխարհագրական են:

Դետերմինիստական արտաքուստ այս կոռ համակարգը ճեղքվածքներ է տալիս՝ դեմ առնելով ընդհանրական որոշիչ պայմաններին իրապես չենթարկվող կամ չառնչվող երևույթների, դեպքերի ու գործողությունների: Օրինակ, տնտեսական գործոնը զարգացման համապատասխան մակարդակներում ենթադրում է կենսակերպի, բարոյական սկզբունքների, արարքների համապատասխանություն տարբեր կրոնների ու մշակույթների պայմաններում: Էմինի որոշ համեմատություններ ցույց են տալիս, որ ոչ: Անհամեմատելի են կնոջ հանդեպ վերաբերմունքն Արևելքում և Արևմուտքում – կնոջ հաճելի ընկերակցությամբ երջանկության հասել են Եվրոպացի շատ քրիստոնյա գույզեր և «շատ քիչ ասիացիներ, որոնց վերաբերմունքը գեղեցիկ սեռի հանդեպ դիվային պահվածքի պես է: Եվրոպացի կանանց ազնվասիրտ ամուսինները նրանց վերաբերվում են ինչպես թագուհիների, և ընդհակառակը՝ ասիացի ստրուկներն իրենց կանանց օգտագործում են ինչպես աղախիհների կամ ստրկուհիների»: Բազմակնության իրավունքի պատճառով նրանք երբեք հոգեկան հանգստություն չեն վայելել իրենց կայսրության սկզբնավորումից ի վեր: Էմինի կարծիքով՝ այդ իրավունքը դեմ է բնությանը, իսկ հակաբնական ցանկացած օրենք կամ սովորույթ ավերմունքի և ամայացման պատճառ է: Մինչդեռ, բազմակնությամբ կամ միամուսնությամբ չի պատճառաբանվում ինչպես անկումն ու կործանումը, այնպես էլ վերելքն ու առաջադիմությունը – դրա ցայտուն օրինակը մահմեդական ռենեսանսի նախորդումն է Եվրոպականին: Ուշագրավ է, սակայն, Ուիլյամ Ջոնսի բնական հասարակության սկզբունքի հետ համընկնող՝ հասարակականի և բնականի առնչության մասին Էմինի պատկերացումը:

Նրա հուշագրությունն Ասիա և Եվրոպա մայրցամաքների աշխարհագրական լայնատարած ընդգրկումներով կենդանացնում է XVIII դարի տարբեր երկրների ու ժողովուրդների կեցության բազմազան կողմերի վավերական պատկերներ: Այդ նկարագրություններով ձևավորվում է

մարդկային այլազան տեսակների հետաքրքիր մի ցուցահանդես: Բայց ամեն ժողովրդի յուրահատկությունները ներկայացնելու Էմինի փորձերը, ինչքան էլ կարևոր են այլաճանաչության հիման վրա ինքնաճանաչության զարգացման և թե՛ անմիջական հարևանների, թե՛ հեռավոր երկրների հետ հարաբերությունները ճշտելու համար, հիմնականում առնչվում են առանձին դեպքերի ու դեմքերի: Դրանք, երբեմն ինչքան էլ դիպուկ, սակայն բավարար չափով չեն կարող ծառայել կայուն ընդհանրացումների, կողմնորոշումների ու նպատակների: Այդ գնահատականները մերթ Բնորոշ ու ընդգրկուն, մերթ մոտավոր, մերթ էլ դիպվածային, մասնավոր տպավորությունների արդյունք են, ինչպես, ասենք, պարսիկների մասին ասվածը. «Դուք՝ պարսիկներդ, որ ո՛չ ամո՞թ ունեք, ո՛չ պատիվ, ժխտում եք ճշմարտությունը, երբ չեք կարող ձեր ուզածի պես վարվել, և իժի մման առիթ եք փնտրում չարիք գործելու»: Դրանից անկախ, հուշագրելով իր առնչությունները տարբեր կրոնների ու ժողովուրդների մարդկանց հետ, նա ոչ բոլորին է ներկում միակերպ սև կամ սպիտակ գույնով: Աշխատանք որոնելիս Էմինը փրկվում է խաբերա անգլիացի ստրկավաճառներից, մինչդեռ, իր պահվածքով բնավ մահմեդական չհիշեցնող Մոհամադ Խան նուցալի մոտ հյուրընկալվում է չորս երջանիկ ամիս, «ասես Եվրոպայում լինեք և տարին 5000 ֆունտ եկամուտ ունենար»:

Գերմանացի վարպետի բարի վերաբերմունքն անփորձությունից իրեն նյութական վնաս հասցրած Էմինի հանդեպ, ապա Ֆրիդրիխ II-ի հանձնարարությունը, որ նրան ուշք դարձնեն, գերմանացի ժողովրդի բարձր արժանիքի վկայություն են: Հուշագրություն մեջ ամենաշատ դրական գնահատականները, բնականաբար, տրվում են անգլիացիներին՝ հասարակ մարդկանցից մինչև բարձրաստիճան ազնվականներ: Էմինը, որն Անգլիայում ինքնահաստատվեց՝ չխուսափելով ամենածանր սև աշխատանքից, ժողովրդի որակի և առաջադիմության կարևոր չափանիշ է համարում նվիրվածությունն աշխատանքին: Ուրիշ

ոչ մի երկրում նա չէր անցնի կյանքի այն մեծ դպրոցը, որ անցավ ծովերով շրջապատված Մեծ Բրիտանիայում, ուր համաշխարհային տիրապետությունը դարբնող առաջին ուժն անգլիացի նավաստիներն էին: Չուր չէ նրանց հիացական տողեր նվիրել. «Քաջարի՛ մարդիկ, ի՛նչ դժվարությունների միջով են անցնում, ինչպե՛ս են անձնվիրաբար աշխատում ապրուստ վաստակելու համար: Ամո՞թ Արևելքի բազում ջիուդանման քրիստոնյաներին, որոնք ապրում ու ծուլորեն գոյատևում են ստրկական սին կյանքով, ասես կենդանիներ լինեն»:

Իրեն հասած հարվածներից առավել ծանր ու դաժան են հայրենակիցների հասցրածները: «Կռաւարիչ Դրեյքը, — գրում է Էմինի հայրը... — ինձ շնորհավորեց քո հաջողությունների համար... Հայերը, որոնք վեց տարի շարունակ խեթ աչքով էին նայում ինձ, զարմացած ասում են. «Աստծո նախախնամությունը քո որդու հետ է եղել»... Նրանք հաստատում են, որ դու իսկական շառավիղն ես Հայաստանի հին թագավորների, քանի որ հաջողակ ես, այլապես կասեին. «Ռ՞վ է նա» կամ «Ի՞նչ է նա»: Մա բոլոր ասիացիների մոտեցումն է. նրանք բարեկամանում են հաջողակների և խիստ թշնամանում ձախողակների հետ»:

Արժե չխուսափել հուշագրության մի քանի հատվածներ մեջբերելու շոայությունից՝ տեսնելու համար, թե ուր է հասնում հայի թշնամանքը հայի դեմ: Էմինը «մի ձմեռային գիշեր... տաքանալու համար քայլում էր բորսայում, քանի որ հայի խիստ հրահանգով նրան թույլ չէին տալիս սենյակ մտնել կամ խոհանոցում կրակին մոտենալ»: Մաքսավոր Մեհրաբը սպառնում է, որ Ահմադ խանին զեկուցելու է նրա՝ Խոյ քաղաքը զալու մասին, «Դպրաշի կեռ թուրը Չեզ... ցույց կտա»: Մինչդեռ խանը, ընդհակառակը, պաշտպանում է Էմինին. «Դո՛ւ, թիֆլիսեցի չարամիտ հա՛յ, Էմինը, ապավինելով միակ Աստծուն, անցել է հրի ու սրի միջով, որ ազատի ձեզ ստրկությունից: Իսկ դուք, վայրենի՛ գազաններ, ուզում եք հատուցել՝ կործանելով նրան»: «Էմինի պապ Միքայելը քիչ մնաց կործանվեր Կարդաշ անունով

մի հայ մատնիչի պատճառով»: Հայ վճառականները ծնկի եկած խնդրում են Էմինին ուղեկցել իրենց: Ապահով տեղ հասնելուց հետո ոմն Անտոն ասում է. «Հենց զգանք, որ դույզն ինչ գործունեություն եք ծավալում այստեղ կամ Գյանջաթում, վկայություն կտանք Ձեր դեմ: Անշուշտ խանր կիմանա, որ, դրոշմը ճակատին ոչխարի պես, կամովին եկել եք իր սպանդանոցը՝ իր կատաղության զոհը դառնալու»: Միձեռանի Սարգիսն ուղեկցում է Էմինին՝ Իբրահիմ խանի կարգադրությամբ նրան սպանելու համար. «Նպատակն էր՝ ցույց տալ... որ Դուք սպանվել եք Ձեր հավատակից քրիստոնյա հայերի ձեռքով»: Տանը, ուր գիշերելու էր Էմինը, բնակվում էին երկու լալիք հայ խանութպան, որոնք տանտիկնոջը դրդում են վտարել նրան:

Ազատագրական պայքարի կազմակերպման համար արքեպիսկոպոս Հովնանի ուղարկած գումարը նրա «սպասավոր», գող Սուքիաս վանականը յուրացնում է՝ Էմինին սպառնալով. «Ես Ձեզ 600 թումանից կտամ 30 ռուբլիից ոչ ավելի հայկական դրամ: Բայց եթե... համաձայն չեք այդքանով գնալու և նետվելու այն քաջ մարդկանց մեջ, հավատացած եղեք՝ դառնալու եմ Ձեր թշնամին և, Ձեր դեմ վկայություն տալով, հանձնելու եմ Ձեզ Շամախիի խանին, որը Ձեզ անմիջապես կսպանի: Դուք պետք է փրկվեք հայերին Աստծո օգնությամբ, որը մինչև օրս Ձեզ պահել է առանց փողի»: Ահա՛ Աստծո և նրա հայ սպասավորի այսպիսի հատկանշական առնչություն...

Հայ ժողովուրդը տարբեր պատմաշրջաններում հաճախ արյունարբու թշնամիներից ոչ պակաս զարհուրելի ավերածություններ գործած նման արարածների պակասություն չի ունեցել, և չի երևում, թե կունենա: Դարեդար ինչ էլ փոխվի, այդ տեսակը չի փոխվում: «Գայլի գլխին ավետարան կարդացին...» ասացվածքի Էմինի մեկնությունը՝ «մարդը չի փոխի իր էությունը», առաջին հերթին նրանց է վերաբերում: Էմինի համար ինչքան էլ ծանր էր Բասրայի խորհրդի գործակալ Հենրի Մուրի խոսքը, համեմայնդեպս, արդյունք էր իրավիճակի իմացության –

ազատագրական պայքար կազմակերպելու ճիգերը դատապարտված էին ձախողման. «Էմին, ասեմ, որ ցնդել եք: Խորհուրդ եմ տալիս հրաժարվել Հայաստան գնալու Ձեր ցնորք-ծրագրից: Այդ երկրի անշնորհակալ ժողովուրդն արժանի չէ ազատագրվելու... Լսե՛ք իմ խորհուրդը, Բենգալիա վերադարձեք»: Ինքնաճանաչություն-այլաճանաչության ուղիով նախապատրաստվող՝ հայրենիքի ազատագրումն ըստ լուսավորական դիրքորոշման պահանջում էր նաև գիտելիքի միջոցով թոթափել պատրանքները, նախապաշարումները, զերծ մնալ իրականությունից կտրված, Մուրի ասած ցնորք-ծրագրից:

Արևելքի և Արևմուտքի, ասիական հետամնացության ու եվրոպական առաջադիմության համեմատությունները ծրագրային նշանակություն ունեին – Արևմուտքի լույսով փարատել Արևելքի խավարը: Մարդը երկրագնդի տարբեր մասերում օժտված է բանականության նույնպիսի հնարավորություններով, պատրաստ է առաջադիմելու, լուսավորությամբ վերակառուցելու հասարակության կյանքը: Իր կրթերի, մտլորությունների գերի մարդը, որի էությունը չի փոխվելու, որը ծուլորեն գոյատևում է ստրկական սին կյանքով, ինչպես կենդանին, և որը շեղված է բանականության ուղուց, ինչպե՞ս էր, իր այդ կարծրացած բնությամբ, երևալու գիտելիքի ու փորձի դարի ընդլայնվող հորիզոնին: Ըստ իր նպատակների բնությունը ձևավորող մարդը տարբեր երկրների մշակույթներում, թվում էր, ընթանալու է նույն ուղիով, քանզի լուսավորությունն է նրա առաջնորդ զաղափարը: Աշխարհում բարձրագույն բնագծեր նվաճած արևմտյան քաղաքակրթությունը լուսավորականներն ընդունում էին որպես տարբեր հասարակությունների գնահատման և հետագա զարգացման չափանիշ:

Որքան էլ որոշակի էր, թե ինչ արդյունքներ են սպասվում, լուսավորության ձգտող մարդու դիտակետից այդ հասարակությունների համեմատությունը քննական, տեսական մեթոդի վերածվեց դարավերջին: Ֆրիդրիխ Շիլլերը

Յենայի համալսարանում 1789 թ. մայիսի 26-ին կարդացած «Ի՞նչ է և ի՞նչ նպատակով է ուսումնասիրվում ընդհանուր պատմությունը» իր ներածական դասախոսության մեջ նշում է, որ համաշխարհային պատմությունն այլ բան չէ, քան գիտություն անվանն անարժան ազրեզատի բեկորներ: Փիլիսոփայական միտքը, դրանք արհեստական կապօղակներով շղթայակցելով, վերածում է համակարգի, բանակարգով կապակցված ամբողջության. «Դրա լիազորությունը բնօրենքի և մարդկային հոգու միաձև ու անփոփոխ միասնության մեջ է: Այդ միասնությունն է պատճառը, որ հեռավորագույն հնաշխարհի իրադարձությունները, արտաքուստ նմանական հանգամանքների միահոսքով, վերադառնում-կրկնվում են նորագույն ժամանակի ընթացքում... Անալոգիայով եզրահանգման մեթոդը, ինչպես ամենուր, այնպես էլ պատմության մեջ մի հզոր միջոց է, բայց պետք է կարգավորվի նշանակալի նպատակներով և կիրառվի նույնքան զգուշորեն, որքան խելամտորեն» (9):

Աշխարհի ամենատարբեր կուլտուրաների զուգահեռներում նմանության տարրերը համադրելու, դրանցով համապարփակ աշխարհայեցություն մշակելու չափանիշը՝ Լուսավորության մարդը, որպես տեսական-ճանաչողական պրոբլեմ, իրական-կյանքային մարդու վերացարկում էր, մարդ, որին հասնելու հնարավորություններով օժտված նմանակները ցրված էին ողջ աշխարհով: Ռոբինզոնի ազդեցությամբ Ուրբաթի վերափոխումը ցայտուն օրինակ է մարդկային ցեղի տարբեր ներկայացուցիչների ընդհանրության լուսավորական գաղափարի: Ըստ այն համոզմունքի, որ պատմության զարգացման մեջ բանականությունը որոշիչ դրական դեր ունի, մարդկանց նմանությունը կասկածելի չէր թվում: Դրանով իսկ կարևոր նշանակություն էր ստացել տարաշխարհիկ երկրների ժողովուրդներին ճանաչելու ձգտումը: Վոլտերը, սակայն, իր «Կանդիդ կամ օպտիմիզմ» փիլիսոփայական վիպակով հարցականի տակ դրեց Լուսավորության բանական-լավատեսական ուղղվածությունը:

Լուսավորության դարաշրջանի տիպարային երևույթ էր Անգլիա եկած Հովսեփ Էմինը: Դրա հաստատումներից է անգլիական, գերմանական, ռուսական բարձր ազնվականության հետաքրքրությունն ու ուշադրությունը նրա անձի հանդեպ: Նրան բախտ վիճակվեց արժանանալ անգամ Ֆրիդրիխ Մեծի հատուկ վերաբերմունքին. «Չտեսնված դեպք է, երբ մի հայ մարդ եկել է Արևելքից Եվրոպա՝ կատարելագործվելու ռազմարվեստում»: «Պատմության փիլիսոփայության» մեջ գնահատելով Անգլիայի համաշխարհային դերը՝ Հեգելը նշում է. «Անգլիայի նյութական գոյությունը հիմնված է առևտրի ու արդյունաբերության վրա, և անգլիացիները մեծ պարտականություն են ստանձնել՝ քաղաքակրթության միսիոներներ լինել ողջ աշխարհում: Քանզի նրանց առևտրական ոգին ստիպում է նրանց մանրամասն պրպտել բոլոր ծովերն ու երկրները, կապեր հաստատել բարբարոս ժողովուրդների հետ, նրանց մեջ պահանջմունքներ ու արդյունագործություն արթնացնել և ամենից առաջ՝ հարաբերությունների պայմաններ նախապատրաստել, այսինքն՝ հրաժարում բռնարարքներից, հարգանք սեփականության հանդեպ և հյուրընկալություն» (10):

Անգլիայի այդ առաքելությունը գլխավորող ազնվականների շրջանում Պարսկաստանում ծնված և մեծացած, Հնդկաստանում ապրած, իր հայրենիքին պիտանի լինելու, գիտելիքներ ստանալու և ռազմագիտություն սովորելու համար Եվրոպա եկած Հովսեփ Էմինի հայտնվելը ճիշտ տեղին ու ժամանակին էր: Նրա ճակատագրում վճռորոշ էր Հյու Փերսիի՝ Նորթամբերլենդի կոմսի (1714–1786, դուքս 1766-ից) տանը պատահաբար հայտնվելը: Կոմսի առաջարկով նրա գրած նամակ-կենսագրականն արտագրեցին ու տարածեցին Լոնդոնի բարձրաշխարհիկ միջավայրում: Շատերը ցանկացան նրան անձամբ տեսնել և «Էմինին երկու շաբաթ շարունակ ներկայացնում էին մեծաթիվ պարոնների ու տիկնանց»: Գրվածքը հավանաձև արքայորդին՝ Քամբերլենդի դուքսը, հայտնեց իր հովանավորությունը և

խոստացավ Էմինին ընդունել Վուլիջի «Թագավորական ակադեմիա», ուր Էմինը, տասներեք ամիս ռազմարվեստի որոշ գիտելիքներ ստանալուց հետո, խնդրեց իրեն ուղարկել Ֆրանսիայի հետ սկսված պատերազմին մասնակցելու: Հաջողությանը, անկասկած, նպաստեց նրան բնորոշ անկեղծ ու պարզ շարադրամքը՝ իր և նախորդների գլխով անցածի անթաքույց նկարագրությամբ: Այն շաղախված էր գիտելիքի ծարավով, հանուն մեծ նպատակի՝ ամեն տեսակ զրկանք կրելու պատրաստականությամբ և իր անձն անմնացորդ հայրենիքի ազատությանը նվիրելու անկասելի ձգտումով. «Ես տեսա եվրոպացիների ամբողջ ու զինվորների մարզվելը, նրանց նավերն ու այն, որ նրանք ամեն ինչում հնարամիտ ու կատարյալ էին: Այնժամ տխրեցի իմ կրոնի ու հայրենիքի համար, որ մենք ստրկության և տգիտության մեջ ենք»:

Էմինը լույ տարաշխարհիկ մի նմուշ չէր, որ ինքնին հետաքրքիր կարող էր լինել նրանց՝ մինչև իսկ իր արևելյան շարժումնով և գրառնի տարրերով: Երբ նա վերադարձավ Հնդկաստան անգլիական սպայի աստիճանով, որոշակիորեն յուրացրել էր ազնվական միջավայրի վարվելակերպը, բայց լիովին չէր ձեռքագատվել ասիականության դրսևորումներից: Ջոնսը խորհուրդ տվեց «հրաժարվել գովեստի ասիական ոճից... Միայն տկար մտքերն են ոգևորվում գովքից, իսկ արժանիներն այն ընդունում են արհամարհանքով... Ասիական ոճը՝ ընծայական, թե նամակային, բացարձակ անհամատեղելի է անգլիական վարք ու բարքի հետ, որը գիտեն, Դուք գերադասում եք պարսկականից»:

Այդուհանդերձ, արևմտյան քաղաքակրթության նվաճումներն Արևելքում լուսավորության միջոցով տարածելու և դրանով իսկ Արևմուտքի քաղաքական ազդեցությանը նպաստելու առումով խոստումնալից մի անձ էր նա՝ պատրաստ նաև արևմտյան ռազմարվեստում իր որոշ փորձով կազմակերպելու սեփական քրիստոնյա հայրենիքի ազատագրումը մահմեդական լծից: Անկոտրում կամքով մեծ

նպատակին հետամուտ, մշտապես դեպի բարձրն ու լուսավորը ձգտող անկաշառ և անվկանդ Էմինն օժտված էր մտավոր ցայտուն կարողություններով ու բնածին ազնվական ոգով: Ինչպես Բերքը, այնպես և լորդ Նորթամբերլենդը կարևոր գրքեր էին տալիս, որոնցով նա հագեցնում էր իմացության ծարավը: Հետագայում, Արևելք մեկնելուց հետո էլ, վտանգալից ճամփորդությունների ընթացքում Էմինն իր հետ գրքեր էր տանում, հատկապես՝ ռազմարվեստի վերաբերյալ:

Էմինի համար անգնահատելի էր նաև ծանոթությունը սոցիալական բարենորոգիչ, գրող, գեղարվեստի հովանավոր Էլիզաբեթ Մոնթագյուի (1718–1800) հետ, որին երկրպագում էր բառիս բուն իմաստով՝ իր հերթին արժանանալով նրա բարեկամական ուշադրությանն ու համակրանքին: Էմինի ծոռան դուստրը գրում է, որ տիկնոջ թողած «սովաբաժավալ մամակագրության մեջ... քսանից ավելի մամակ կար «Էմին հայից»՝ հասցեագրված իրեն ու իր բարեկամներին, բացի այդ՝ այլ մամակների պատճեններ, որ արվել էին նրան տեղեկություններ տալու համար: Քանզի տիկինը շատ էր հետաքրքրվում Էմինով և տարբեր ձևերով բանեցնում էր իր ազդեցությունը՝ նրան օգնելու, որ հասնի իր նպատակներին»: Մինչդեռ, Հնդկաստանի նրա սերունդը, անփույթ ու անտարբեր իրենց նշանավոր նախնու հիշատակի հանդեպ, ոչ մի մամակ կամ ձեռագրի նմուշ չէր պահպանել:

Էլիզաբեթ Մոնթագյուի սալոնը Լոնդոնի ինտելեկտուալ հասարակության կենտրոն էր: Էմինն այնտեղ էր՝ «քաղաքական, հասարակական ու գրական մորությունների քննարկումներին և ունկնդրում էր փիլիսոփայական, պատմական, գրական թեմաներ... Ծանոթանում էր ոչ միայն անգլիացի գրողների, այլև ֆրանսիական լուսավորականների՝ իր ժամանակակից Եվրոպայի գաղափարական հեգեմոնների հասարակական-փիլիսոփայական և քաղաքական գաղափարներին: Բոլոր այդ գրույցներն ու բանավեճերը, անկասկած, լայնացնում էին նրա մտահորիզոնը՝

դրդելով նրան կարդալ այն հեղինակների երկերն ու այն գրքերը, որ այդ ժամանակ ուշադրության կենտրոնում էին Մոնթազյուի, ինչպես և XVIII դարակեսի բոլոր եվրոպական սալոններում» (2, էջ 23):

Ի տարբերություն եսապատումի, երբ նկարագրությունն արվում է մեկի՝ հուշագրի ներաշխարհի, նրա ընկալումների տեսանկյունից, Հովսեփ Էմինն իր գրքում, իրենից անջատելով ու կողմնակի հայացքով դիտելով Էմին կամ հեղինակ անունով գործող գլխավոր անձին (ինչի հնարավորությունը լիովին տալիս էր անցյալում մնացած՝ դեպքերով հարուստ կյանքի պատմությունը), ներկայացնում է XVIII դարի մի արտասովոր մարդու: Իր հերոսի մասին նա խոսում է երրորդ դեմքով՝ հուշագրությունը վերնագրելով Դանիել Դեֆոյի «Ռոբինզոն Կրուզոյի կյանքը և զարմանահրաշ արկածները» (1719) կամ Թոբայաս Սմոլլեթի «Սըր Լամսլոթ Գրիվզի կյանքն ու արկածները» (1762) վեպերի վերնագրերի՝ սովորական դարձած ընդօրինակմամբ:

Իր այլ ընդունակություններից բացի, Էմինն օժտված է վառ երևակայությամբ, սուր դիտունակությամբ ու պատմելու ակնբախ ձիրքով: Նրա հուշագրությունն ընթերցվում է արկածային վեպի նման, չթուլացող հետաքրքրությամբ: Կյանքի ճանապարհին նրան հանդիպած իրական մարդիկ շնչավորվում են գեղարվեստական կերպարի գույն ու գծով: Նա ստեղծում է դրական կամ բացասական հատկանիշներով աչքի ընկնող ցայտուն անհատականությունների կենդանի դիմանկարների շարք: Նրանցից մի քանիսն առանձնապես խոր հետք են թողնում ընթերցողի հիշողության մեջ: Հերակլի արտաքինով բնորոշելով նրա էությունը՝ Էմինը պատմում է, երբ ինքը «ակնարկեց, որ աղքատ է և բախտի զինվոր, զգաց, թե ինչպես է իշխանի դեմքը դեղնում: Նրա սովորական գույնը կանաչախառն թուխ էր, հասակը՝ կարճ, Էմինից կես մատնաչափ բարձր, սակայն լավ կազմվածք ուներ՝ ուժեղ ոսկորներով ու ջլապինդ: Հերակլն այդ ժամանակ ապրող ամենամեծ մարդկանցից մեկը կլի-

ներ, եթե նրա միտքը դարձի գար»: Համոզված, որ չկա մեկը, «ով Հերակլի պես արժանի կլիներ հայերի և վրացիների միապետը լինելուն», միաժամանակ, ակնարկելով պարսկաստանյան նրա փորձը և Վրաստանի ուղղափառ եկեղեցին, Էմինն ավստում է, որ «խեղճ իշխանի սիրտը բաղկացած էր երկու տարբեր մետաղներից՝ պարսկական ու հունական, ինչը զրկեց թե՛ նրան, թե՛ Էմինին իրենց երկիրը ստրկությունից ազատված տեսնելու երջանկությունից ու փառքից»:

Մի քանի բառով տրվում է Ստուպիշինի հոգեբնույթը. «Մարդը մահու չափ գունատվել էր և հինգ րոպե բան չասաց»: «Ստուպիշինն ապուշ կտրեց ու շփոթվեց՝ մրթմրեալով պոչը կտրած արջի պես, և չգիտեր՝ ինչ անի»: Լորդ Հանթինգդոնը նկատում է. «Բացառիկ դեպք է, որ չենք կարող ունենալ Նորին Մեծության մի ճշգրիտ դիմանկար, և ես չեմ հասկանում դրա պատճառը»:

Ի պատասխան Էմինը նկարագրում է թե՛ Ֆրիդրիխ Մեծի արտաքինի գունափոխությունները և թե՛ դրանց համապատասխան տարբեր հոգեվիճակները. «Այդ թագավորը մնացած մարդկանց նման չէր: Նրա արտաքինը փոխվում էր իր գլխում ծագած մտքին համընթաց: Նա երբեմն գունատվում էր, ուրիշ անգամ՝ թարմ գույն ընդունում, սպիտակ, սև, դեղին, մի խոսքով՝ ամեն տեսակ գույն էր ստանում քամելեռնի պես: Այդ պատճառով նկարիչը չի կարող նրա ճշգրիտ դիմանկարը նկարել... Երբ թարմ տեսք ունի, վստահ է, որ կհաղթի, երբ գունատ է մեռելի պես, վախենում է Եվրոպայի միացյալ ուժերից ջախջախվելուց, երբ դեղին է, վախենում է, որ Վոլտերը նորից մի սկանդալային գիրք կիրատարակի՝ իրեն խայթելու համար, և այլն»:

Յուրաքանչյուրն իր անցյալը հիշելիս վերադառնում է իր այլությանը: Ժամանակի շրջապտույտում ինքնգերազան-հատումը և ուրիշների թերագնահատումն առավելապես հատուկ է պարզունակ անձանց: Բայց ընթերցողը կսխալվի, եթե այդ չափանիշով չափի և ինքնագովություն վերագրի Էմինին: Իսկ դրա օրինակները կան: Երբ առաջին

անգամ Անգլիա մեկնելիս Էմինն իրեն վիրավորած, իրենից երեք անգամ խոշոր նավաստուն մի հարվածով տապալում է, մյուս նավաստիներն աղաղակում են, «Դավիթը հաղթե՛ց Գողիաթին» և շնորհավորում նրան: Երեք անգամ, թե պակաս՝ Էմինն ուժով գերազանց հակառակորդից չերկնչելու, խիզախելու դաս է տալիս ընթերցողին՝ միաժամանակ շեշտելով անգլիացու և այլ ժողովուրդների տարբեր վերաբերմունքն օտարերկրացու հանդեպ: Նման կռիվ պատահի այլ երկրում, «տեղացիների ողջ բազմությունը կհարձակվի և նրան ոտնատակ կանի, ինչպես մի մարդասպանի»:

Նկատեցինք, որ գրքում կան անճշտություններ ու չափազանցություններ, բայց նրա նպատակն իր անձի մեծարումը չէ, այլ իր գրքի հերոսի փորձալից կենսագրությամբ ազատագրության ծրագրի հաստատումն ու ավանդումը հաջորդ սերունդներին. Մոհամադը և նրա հետնորդները թեն «բազավորություններ ավերեցին հրով ու սրով, երբեք չկարողացան իրենց ենթարկել լուսավորյալ Եվրոպան»։ Ուստի, «տեսնելով իսկական ուսման գերազանցությունը և սոցիալական ահավոր խեղճությունը, Էմինը որոշեց իրագործել իր աննշան կյանքի պատմությունը գրելու ազնիվ նպատակը»:

Իրականում շատ նշանակալի՝ այդ «աննշան կյանքը» նաև բնութագրական է XVIII դարի մարդու համար, մարդ, որը ձգտում է պատմության սկզբնապատճառ, ոչ թե արդյունք լինել: Պատմության առանցքում դնելով այդ մարդուն և առաքինության շարունակական կատարելագործումը համարելով մտքի ճշմարիտ նպատակը՝ լորդ Բոլինգբրոքը գրում է. «Մարդն է ամեն պատմության առարկան, և նրան լավ ճանաչելու համար մենք պետք է տեսնենք ու հասկանանք նրան այնպես, ինչպես միայն պատմությունը կարող է ներկայացնել – բոլոր տարիքներում, բոլոր երկրներում, բոլոր պետություններում, ողջ ու մեռած: Ուստի քաղաքակիրթ ու անքաղաքակիրթ, հին ու նոր ազգերի ամեն տեսակ պատմություն, կարճ ասած՝ յուրաքանչյուր պատմություն, որ բավարար մանրամասնությամբ է պատկերում մարդկա-

յին արարքներն ու բնավորությունները, օգտակար է, որպեսզի մեզ ծանոթացնի մեր ցեղի, այսինքն՝ ինքներս մեզ հետ» (3): Ծանոթացնի, որպեսզի դաստիարակվի մեր անձնական ու հասարակական առաքինությունը:

Բոլինգբրոքի տեսության մեջ պատմության ուսումնասիրությունն օգտակար է ռացիոնալիստական դիտակետից: Մասնավոր-անձնական, երկրորդական դրություններից վեր ընդհանրացումների հիմքում տիպարային անհատն է իր պատմահասարակական փորձով: Մարդու կյանքի, դրանից անբաժան հասարակության ճակատագրի դարաշրջանային պատկերն ուղենշային դեր ունեռաշխարհի ճանաչողության մեջ ընդհանրապես: Այլ ժամանակների և այլ երկրների ու ժողովուրդների փորձով Լուսավորության մարդը, լրացնելով սեփականը, նախապատրաստում էր իրականության վերափոխման ու վերակառուցման իր ծրագիրը – Էմինի կյանքի պատմությունը դրա վկայություններից է:

Ուստի պատմությունը մարդուն հարկավոր էր՝ նախ իր իսկ կյանքի ճամփան գտնելու համար: Այդ ճամփան արդեն XVII դարում տարածվում էր օվկիանոսից օվկիանոս: Հենց մեր դարաշրջանում, գրում է Ֆրենսիս Բեկոնը, ծովային ուղևորություններով մենք ավելի ու ավելի հնարավորություն ենք ստանում շրջելու ողջ աշխարհով. «Եվ այդ ակնառու հաջողությունը ծովագնացության ու աշխարհի ուսումնասիրության ոլորտում կարող է նաև հետագա առաջխաղացման և գիտելիքների զարգացման մեծ հույս ներշնչել» (11): Բացված էր նոր գիտելիքի անդրօվկիանոսյան դժվարին ճանապարհը: Էմինի առաջին նավարկությունն Անգլիա տևեց ճիշտ վեց ամիս (Մուեզի ջրանցքը սկսեցին փորել Էմինի մահից տասնամյակներ անց, 1859 թ., և այն բացվեց 1869-ին): Դժվար չէ պատկերացնել, որ մեկնելու օրվանից Էմինը, «ամբողջ քառասունհինգ տարի, տոկոսությամբ անցել է կյանքի շատ դժվարություններով»: Բայց երբ նրա նման մարդը «մտքին դնում է մեծ ու արտասովոր մի գործ անել, հաջողություն

ունենա թե ձախողի... գոհ ու անտրտունջ կլինի»։ Քանզի «եթե նրա տառապանքը կշռեր հարյուր բեռ երկաթ, կամ մի բարձր լեռ լիներ, այն ձյան պես կհալվեր-կզմար արևի շողերից» – ճշմարիտ խոստովանություն՝ պատկերավոր ձևի մեջ։

Գիտելիքներով առաջնորդվող մարդը պատմության տեսության առանցքում հայտնվեց երկրագնդի ճանաչման հիշյալ հնարավորությունից հետո, երբ հանդես եկավ որպես անդրօվկիանոսյան ուղիներով ազատ նավարկող և բնության համակարգային օրենքների անբաժանելի մաս։

Նորովի հետաքրքրությունը պատմության հանդեպ, այսպիսով, պահանջմունք էր՝ ծագած կյանքային դրդումներով։ Էմինի գիրքն ասես շարադրված լինի ըստ լորդ Բոլինգբրոքի բնորոշման. «Պատմությունը մի ժողովածու է այն մարդկանց օրագրությունների, որոնք ճամփորդել են նույն երկրներով և ենթարկվել նույն վտանգներին, և նրանց թե՛ հաջողությունները, թե՛ անհաջողությունները հավասարապես ուսանելի են» (3)։ Մի առիթով Էմինը գրում է իր բարեկամ լորդ Բոլինգբրոքի մկիրած ատորճանակի մասին՝ չճշտելով, թե նրանց ազնվական տոհմից ում մասին է խոսքը։ Արդեն նշել ենք, որ եթե անգամ Էմինը կարդացել է Բոլինգբրոքի «Նամակները», ապա այն էական ազդեցություն չի ունեցել նրա վրա։ Այդուհանդերձ նա՝ իր դարի հարազատ զավակը, որ օժտված էր մտավոր ցայտուն ունակություններով և գիտելիքները կլանում էր սպունգի պես, իր հուշագրությունը պիտի կառուցեր համապատասխան եղանակով։ Ժամանակի որոնումներին բնորոշ նրա կյանքը և առավելապես Արևմուտքում ձևավորված լուսավորական աշխարհայեցությունը կանխորոշել էին նրա շարադրանքի բնույթը։

Նրա կյանքն ինքնին ընթացել էր ճանապարհորդական-արկածային վեպի նման։ Իրական կամ երևակայական, վիպական կամ կենսագրական-հուշագրական այդպիսի երկերը դարի ոգու նույն կնիքն էին կրում – Ջոնաթան Սվիֆթի «Լեմյուել Գուլիվերի ճանապարհորդությունները»

(1726/35), Լորենս Սթերնի «Մենտիմենտալ ճանապարհորդություն Ֆրանսիայով և Իտալիայով» (1768), Նիկոլա-Էդմե Ռետիֆի «Հորս կյանքը» (1779) վեպերը, Ալեքսանդր Ռադիշչևի «Ճանապարհորդություն Պետերբուրգից Մոսկվա» (1790) ճորտատիրական ինքնակալությունը դատապարտող երկը և այլ «ճանապարհորդություններ»։ Տարաբնույթ այդ երկերը եթե մի դեպքում ստեղծագործական երևակայությամբ կերտված ճշմարտացի ու համոզիչ գեղարվեստական իրականության մարմնացումներ էին, ապա մյուս դեպքում՝ ոչ պակաս ստեղծագործական երևակայություն պահանջող՝ վավերական իրականությունը հավաստող գրվածքներ։ Իսկ այդ իրականությունը հաճախ այնքան արտառոց է, որ ավելի անիրական, քան իրական է թվում։ Ուստի, ինչպես առաջին դեպքում, միայն ստեղծագործական վառ երևակայությունն է ի գործու համոզություն հաղորդել դրան։

Թե՛ ճանապարհորդական գրականությանն ընդհանրապես և թե՛ Էմինի հուշագրությանը հատուկ է աշխարհի բազմազան պատկերների տարածական ծավալումը կողք-կողքի։ Պատումի ժամանակային միասնական-հետևողական զարգացում չի էլ կարող լինել – Էմինն անցնում է երկրագնդի մի կետից մյուսը, հանդիպում տարբեր երկրների տարբեր մարդկանց, հայտնվում սոցիալական, մշակութային տարբեր միջավայրերում, տարբեր կացություններում, և մի արկածին հաջորդում է բոլորովին ուրիշ արկած։ Տարածական անցումներում մերթընդմերթ ընդամենը նշվում է, թե այսինչ տեղում մնաց այսքան ժամանակ, մյուսում՝ այնքան։ Տարածական այս անցումների ժամանակային ընթացքը, ի տարբերություն պատմագիտական սեղմ ամփոփումների, հուշագրությանը հատուկ կյանքային մանրամասների շնորհիվ ձգված, մոտեցված է թվում անցած օրերի անցուդարձին։ Մինչդեռ պատմական հիշողությունը ջնջում է անցյալի բազում այդպիսի մանրամասներ։ Իսկ պատմագիտությունը պատմականորեն նշանակալից դեպքերն առանձնացնում է աննշաններից կամ այն ամենից,

ինչը պատմության վրա ազդեցություն չի թողնում, և ընդհանրացնում ու պահպանում է կարևորն ու բնորոշը՝ այդպիսով խտացնելով անցած ժամանակների տևողությունը և այն հավաստելով լույ անհրաժեշտ, թռիչքած և իրար հաջորդող տարեթվերով: Սեղմված ժամանակում բացահայտվում է դարաշրջանների էությունը՝ պատմական փուլային զարգացման յուրահատկություններով: Մակայն, անցյալի շատ մանրամասներ պահպանող տարատեսակ փաստաթղթերից բացի, իրականությունը կյանքային հարստությամբ նկարագրող հուշագրություններն իրենց հերթին անփոխարինելի աղբյուր են տվյալ դարաշրջանի ճանաչողության համար:

Հուշագրության վերջում, ասես միանգամից շրջանցելով ժամանակի սլաքի տասնամյակների պտույտը, արդեն տարեց էմինը հիմնավորվում է Հնդկաստանում, որտեղից սկսել էր իր ճանապարհորդությունները, և շարադրում անցած տասնամյակների պատմությունը: Ի՞նչ է էմինի ավանդած գիրքը, եթե ոչ առաջին հերթին մեծ կենսափորձի և գիտելիքների որոնման պատկերավոր պատմություն: Այդ որոնման ընթացքում բացվում է լայնածավալ համապատկեր – երկրներ՝ իրենց սահմանված կարգերով ու բարքերով, մարդիկ, հասարակական տարբեր խավերի դեմքեր, արարքներ, ժողովուրդների հարաբերություններ ու իրադարձություններ: Ամեն ինչ կուտակվել էր էմինի հիշողության մեջ, և եթե չենթարկվեր անհրաժեշտ ընտրության, նպատակային արժևորումների ու ծրագրային որոշակի կարգավորման, դյուրավ կփոշիանար մտքի անկապակից թափառումներում: Որքան էլ էմինը խնդիր չուներ հուշագրությունը կառուցելու պատմատեսական մշակված մեթոդաբանության հիմունքով, որին էապես չէր էլ տիրապետում, նա իր հուշերը շարադրել է կենսափորձով և գիտելիքի յուրացման ու կիրառման ռացիոնալ, գերիշխող գաղափարով հստակված կայուն մեթոդով: Դրանով իսկ «Հովսեփի էմինի կյանքն ու արկածները» գիրքը պատմա-

կան անանց արժեք ունի նաև հիմնական գաղափարով – գիտելիքը՝ ազատագրության զենք:

7

Գիտելիքի և փորձի ընդլայնմանը, խորացմանը զուգահեռ աշխարհի տարբեր ծագերի ժողովուրդների ճանաչողությունն ընթանում էր տարածությունների «կրճատումով»: Մարդու կրթության, բարոյական կատարելագործման պահանջով էր պայմանավորված Բոլիմգրքոքի՝ արարքների ու տիպարների պատմության միջոցով մեր ցեղը, այսինքն՝ ինքներս մեզ ճանաչելու սկզբունքը: Հեռավոր ժողովուրդների ճանաչման ձգտումը, սակայն, հազիվ թե հավասարը հավասարի հետ փոխըմբռնման, լուսավորության տարածման սերմեր ցանելու բնահող գտներ երկրագնդի խստորեն անհամաչափ զարգացած տարբեր լայնություններում: Լուսավորության տարածման հետ մեկտեղ ծավալվում էր գաղութատիրությունը, և պատմության իմացությունը միանգամայն շահավետ էր դարձել զարգացած գաղութատեր երկրների համար: XVIII դարից ընդարձակվելով՝ Բրիտանական գաղութատիրական կայսրությունը դարձավ խոշորագույնն աշխարհում:

Էմինի ճանփորդությունները բացում են եվրոպական լուսավորության գաղափարներին անհարիր երկրների հետամնաց, վայրի բարքերի, խոր միջնադարյան հարաբերությունների, արյունահեղության, ցեղամիջյան բախումների և կրոնական անհանդուրժողության պատկերներ:

«Սպանի՛ր անհավատին» պատվիրանի զոհ գնալու վտանգին էմինը դեմ է առնում ուղեկից ենիչերիների և իրեն անվճար ծառայող պատանի արաբ Մալալաիի հետ շիաների նավով Բասրա մեկնելիս. «Եթե իմանան, որ քրիստոնյա եք, – զգուշացնում է Մալալաի, – ոչ միայն Ձեզ կսպանեն, այլև մեզ բոլորիս»: Մուննի ենիչերիներն իրենց կյանքը փրկելու համար ստիպված են իբրև շիա ներկայանալ: Էմինի հիշողության մեջ ջերմ հետք թողած այդ ազնիվ, անկաշառ, նվիրված, ուշիմ, հնարագետ, համար-

ձակ, արտակարգ ֆիզիկական ուժի տեր պատանի արաբն անհանդուրժողության, վայրենի բարքերի այլևայլ դրսևորումներից վեր, դարաշրջանի մարդու արևելյան յուրատիպ, որպես այդպիսին քիչ պատահող մի կերպար է: Բայց անգամ այդպիսիների ենթադրյալ գերակշռությամբ հասարակական զարգացման տարբեր աստիճաններում գտնվող, Լուսավորական կուլտուրայի ազդեցությամբ վերափոխվելու պատրաստ մարդկանց նույնացման փորձը զուտ տեսական խնդրահարույց գաղափար էր՝ հեռու իրականությունից:

Վրաստանում լեզգիների հետ բախումներում Էմինի սխրանքների հռչակը տարածված էր հյուսիսային Կովկասի լեռնցի ռազմատենչ ցեղամիություններում: Չմռանը լեռնանցքներով ճանապարհ կտրել հնարավոր էր միայն այդ լեռնցիների ուղեկցությամբ. «Ձիերի բեռները մեջքով կրում են այդ հերկուլեսյան ուժի տեր մարդիկ... Անհավատալի է, թե ինչպես են նրանք մագլցում այդ բարձր լեռները, որոնց գագաթները հասնում են ամպերից վեր»: Դժվար չէ պատկերացնել՝ ինչպիսին կլինեին տարբեր ցեղախմբերի լեռնցիներից կազմված զորախմբերը, որոնց համար դրականի և բացասականի (բարու և չարի) երկընտրանքն ավարտվում էր «Երբ ես եմ կողոպտում, լավ է, երբ ինձ եմ կողոպտում, վատ է» բանաձևով: Ամեն լեռնցի տղամարդ ռազմիկ էր, և կռվի գնում էին բոլորը: Նրանք սպանում էին իրար ու տարածաշրջանի ժողովուրդներին: Պարտվածի ողջ ունեցվածքը՝ ոչ միայն անասունները, այլև կանայք ու երեխաները, հաղթողի ավարն էին: Նրանց մի մասին պահում էին իրենց ծառայեցնելու, իսկ մյուսներին տանում էին ստրկավաճառության:

Անկախ համայնքներով ապրող լեզգիները «հայ սպանելն ավելի մեծ բան չեն համարում, քան դանակով վարունգ կտրելը»: Համեմատաբար ֆեոդալացված դադստանցիներն Էմինին կոչում էին հայերի փաղիշահ և պատրաստ էին նրա կողքին կանգնելու «իրենց նվաճող զենքով» այն դեպքում, երբ պնդում էին, թե «Դադստանը սուրբ

երկիր է, և իրենց օրենքի համաձայն՝ ոչ մի քրիստոնյա չի կարող անցնել այնտեղով, եթե շոթայված ստրուկ չէ վաճառքի համար»: Մեծ էր Էմինի հեղինակությունը լեռնցիների շրջանում: Երբ նա մեկնում էր Չեչնիա, «այդտեղի հայերը կարծում էին, թե նա ինքնակամ գնում է՝ ոչխարի պես մորթվելու և խժռվելու: Չէին մտածում, որ Էմինը յուրային է և նրանցից ստանում է հարյուր անգամ ավելի ջերմ ու հյուրասեր վերաբերմունք, քան վրացիներից կամ նրանց իշխաններից, անգամ իր հարազատներից»:

Ազատագրության զինվորին մշտապես տանջող այս իրողությունն ամրագրված է նույնիսկ հուշագրության վերջում. գիրքը «լի է երկոտանի վայրենի հրեշներով, որոնց մեջ Էմինն ապրել է ավելի ապահով և ուրախ, քան իր քրիստոնյա բարեկամների: Վերջիններս, անվայել սառնությամբ, իրեն թողել են անմխիթար վիճակում՝ ժամանակին չպատասխանելով և չկատարելով իր ցանկությունները, երբ դա ոչինչ չարժեք»:

Որտեղ էլ հայտնվում է Էմինը, լեռնցիները զինված, խմբերով գալիս են նրան իրենց հավատարմությունը հայտնելու և նրա գլխավորությամբ ռազմարշավի ելնելու: Առաջնորդը սովորաբար ոչ մի ծախս չէր անում, քանզի ավարառությունն էր ռազմիկի վճարը: Ուստի մյուսներին իրենց գազանություններով գերազանցող մուշքիզ-չեչենների ներկայացուցիչը՝ զինվորի կրոնը թուրը համարող Աչախանը, անտեսելով Էմինի փողագրկությունը, ասում է. «Մեզ պետք են միայն Չեր խելքն ու ղեկավարելու ունակությունը՝ մեզ կառավարելու և կռվում ճակատ կազմելու համար, ինչպես ռուսներն են անում: Դրա շնորհիվ աչխարի փողը մերը կլինի»: Մուշքիզները թրերը դնում են Էմինի առջև, որ աղոթի դրանց հաջողության համար, և «չժանգոտեն ու շարունակեն թաթախվել թշնամիների արյամբ»: Պահի ազդեցությամբ ու հապճեպորեն Էմինն Աչախանին նմանեցնում է իրեն. մարդ կկարծեր, թե նա «նույն մորից է ծնված, ինչ Էմինը՝ նույն ռոմանտիկ խառնվածքով, նույն խոսելաձևով՝ բաղկացած խելքից ու վայրեն-

նությունից»։ Էմինի գործելակերպի հետ իրենց ռազմատենչության մասնակի համընկնումն իսկ լեռնցիների համար լիովին բավարար էր՝ մի կողմ դնելու շարժառիթների, նպատակների, մտայնության ու կրոնական պատկանելության անհամատեղելիությունը և նրան վստահորեն իրենց ասպատակությունների առաջնորդ ընտրելու։ Նրանք միակամ են ու միասնական, և գուցե հենց այս միակամությունը, ռազմիկի ոգին ու կռվելու պատրաստականությունն է Էմինին մղում համեմատության եզրեր գտնելու իր և Աչախանի միջև։ Իսկ ինչպե՞ս կարող էին համընկնել արյունարբու Աչախանի «ռոմանտիկ» խառնվածքը և Էմինի «վայրենությունը» նրանց նպատակների անհաշտության պայմաններում։ Լեռնցի տարբեր ցեղերի ողջ զինված զանգվածը հազարներով միշտ պատրաստ էր հանուն ռազմաավարի հարձակվելու՝ ում վրա պատահեր։ Այդպիսին էր նրանց ապրելակերպը՝ պարզունակ գյուղատնտեսության պայմաններում նյութական լրացուցիչ միջոցներ հայթայթելու եղանակը։

Էմինի հուշագրությունից կարելի է տեղեկություններ քաղել ոչ միայն XVIII դարի կարևոր իրադարձությունների և նշանավոր մարդկանց մասին։ Նրա ճամփորդությունների նկարագրությունը՝ մի երկրից մյուսն անցումներով, թե՛ աշխարհագրական, բնակլիմայական, տնտեսական, քաղաքական, կրոնական, կենցաղային ու հոգեբանական յուրահատկությունների և թե՛ տարբեր ժողովուրդների հետ հարաբերությունների առումով, պատմական մի հարուստ շտեմարան է։ Տարբեր երկրների մարդկանց մտայնության, մշակույթի, հետաքրքրությունների, բարոյական սկզբունքների ու զբաղմունքների համապատկերում երևում է, ինչպես էին մարդիկ պահպանում համակեցությունը, արձագանքում կյանքի հանգամանքների պարտադրանքին, նյութական միջոցներ հայթայթում, պաշտպանվում արտաքին վտանգներից և հարձակվում այլ ժողովուրդների վրա։

Էմինի հիմնական նպատակը պաշտպանության սուրը բարձրացնելն էր՝ «լուծելու իր երկրի և նախնիների՝

հանուն ճշմարտության ու սուրբ քրիստոնեության թափված արյան վրեժը»։ Հերակլի հրամանով նա վեց օրում զինվորագրում է 800 երիտասարդ, քաջ հայերի։ Շատ հայեր ամեն կերպ նպաստել են նրա գործունեությանը, իսկ ազգակից շատերն էլ վնասել՝ անգամ ցանկանալով նրա մահը (ահա՛ և նա ստիպված է խոստովանել, որ լեռնցիները յուրային են)։ Հայ ավանդական պատմատեսություններում դա համարվում է հայերի դարեդար տված բազում կորուստների, ընդհուպ մինչև հայրենիքի կորստյան գլխավոր պատճառներից մեկը։ Երկրի ու ազգի ազատության իրավունքի համար մաքառող զանգվածների կողքին կենտրոնախույս ուժերը, իրոք, ահռելի, մինչև իսկ կործանարար վնասներ են հասցրել։ Ինչու՞ է դա նրանց հաջողվել և հաջողվում – հարց, որ առ այսօր սպասում է հանգամանալի պատասխանի։

Ճակատագրին հնազանդության վնասների դառը դաս էր Էմինի համար իրենց ընտանիքի պատմությունը, որ ասես հայոց պատմության մի փոքրիկ նմուշը լիներ. «Կորուստը հետևում էր կորստին, աղետը՝ աղետին, վաթսունհինգ հոգուց բաղկացած ընտանիքը կրճատվեց մինչև մի քանի հոգի, և ամենքը, բացի Էմին երկրորդից, մեռան անփառունակ մահով։ Բոլորն ավելի բախտավոր կլինեին, եթե տղամարդու պես սպանվեին կռվում, այլ ոչ թե դառնային ճղճիմ առևտրի զոհ՝ անգլուխ ու անպոչ, անհովիվ հոտի պես. ամոթ չէր լինի, եթե դիմադրեին ու պաշտպանվեին, ինչպես անում են եվրոպացիները»։

Էմինի ոչ բոլոր նախնիներն են ապրել այդպես։ Նրանցից ոմանք ծառայել են Շահ Աբբաս «բարբարոս տիրակալի բանակում», իսկ նրա մեծ պապ Էմին երկրորդն իր արտասովոր խիզախություններով հասել է «մինբաշիի» (հազարապետի) աստիճանի։ Իր՝ Էմին երրորդի մասին նրա հայրը գրում է եղբորը. «Համառ բնավորությունը, համոզված եմ, չի փոխվելու, ոչ էլ թնդանոթների մի մարտկոց կարող է սասանել նրան... Նա մեր նախապապ Էմինն է,

որ դուրս է եկել գերեզմանից՝ նույն անվախ բնավորությամբ»:

Այս պատմությունը ևս մի վկայություն է, որ Հայաստանի թագավորությունը պահպանելու, անկախությունը պաշտպանելու, իրար հաջորդող կորուստները կանխելու և ազգաբնակչության թիվն աղետալի կրճատումից փրկելու համար պահանջվում էր անխտիր բոլոր սերունդների անդադրում պայքարը: Եվ դրան պետք է ծառայեր նաև հայկական կապիտալը, որը նույնպես, ազգային պետականության չգոյության պայմաններում, չէր կարող վերածվել կենտրոնացած, գործուն ուժի: Իսկ հայ վաճառականին հենց այդ ուժն է որ պիտի համեր ամեն դրամատիրոջ հատուկ՝ փողի ֆետիշային կաշկանդումից: Իրենց կարծեցյալ ազատությունը փողի մեջ որոնողները վերածվում են դրա գերու, մարդկանցից անկախացած փողն իշխում է նրանց վրա որպես արտաքին անխուսափելի պարտադրանք – հասարակական հարաբերությունները դուրս են գալիս մարդկանց վերահսկողությունից, և գործունեության արդյունքներն օտարվում են: Մարդու վրա ազդելու հրաշագործ ունակությամբ օժտված փողն անձնավորվում է, մարդուն վերածում իրի՝ իջեցնելով իրի գործառույթի մակարդակին: Մարդկային հարաբերություններն այսպիսով ոչ միջանձնային, այլ լոկ միջիրային բնույթ են ստանում:

Վախկոտ, նյութապաշտ, որկորով դատող, խավարամոլ, երևակայագուրկ մարդու էությունն էմինը ներկայացնում է հեզմական պատկերավոր համեմատությամբ. նա «չէր կարող չծիծաղել այն վախկոտ մարդկանց վրա, ովքեր... այնքան հիմար են, որ լուսինը մի կտոր կանաչ պանրից չեն տարբերում»: Մոլեռանդ խոնարհումը փողի առաջ, կրոնական պաշտամունքի պես, իրականությունը փոխարինում է հիվանդ հոգու պատրանքային, ինքնակործան վստահությամբ: Փողի ֆետիշացումը հայտնվում է ազատության ու անհրաժեշտության հակադիր ծայրում և տրորում մարդկային լավագույն ձգտումները: Երկատելով գիտակցությունը՝ օտարումը տանում է մարդու էության

այլասերման: Հեզելի պարզաբանմամբ՝ «Գիտելիքները, գիտությունները, տաղանդները և այլն անշուշտ հատուկ են ազատ ոգուն... ներքուստ, ոչ թե արտաքուստ: Բայց այն կարող է արտաքնացմամբ դրանց նույնքան արտաքին գոյություն տալ ու *օլտարել*, ինչի հետևանքով դրանք ընկնում են *իրերի* օրենքի սահմանման տակ... Ըստ հռոմեական իրավունքի անիրավական և անբարո սահմանման՝ երեխաները հոր համար *իրեր* էին, ուստի նա իրավաբանորեն տիրում էր իր երեխաներին, թեպետ նրանց հետ հավանաբար կապված էր նաև սիրո բարոյական հարաբերությամբ... Հետևաբար դա գտնվում էր լիովին անիրավական՝ իրի և ոչ-իրի երկու սահմանումների միջև» (12):

Իրի և ոչ-իրի հակադրության մեջ բարոյական կանխադրյալների նշանակության կորստի և մարդկայինի աղավաղման, հրեշացման այլևայլ դրսևորումների պակաս չկա էմինի հուշագրության մեջ: Այդպիսին չէր սոսկ դարը, այդպիսին է մարդ արարածի բնութենական պատմությունը դարաշրջանից դարաշրջան – պատմություն, որի էությունը մնում է նույնը, ինչքան էլ փոփոխվեն մանրամասները:

Ինքը՝ Էմինը, Անգլիայում գործ որոնելիս պատահաբար է փրկվում ստրկական աշխատանքի ուղարկվելու վտանգից: Անհամեմատ բազմազան ու հարուստ են արևելցիների՝ հանուն իրենց տիրապետության սահմաններն ընդլայնելու և, Աչախանի խոսքով, «աշխարհի փողն ունենալու» գործած վայրագությունների նկարագրությունները: Քրիստոնյա ժողովուրդների համար աղետալի էր իսլամի ամրագրած բազմակնության օրենքը: Մահմեդականների անօրինակ բազմացումը մյուսների կրճատման հաշվին ահռելիորեն ազդեց աշխարհի պատմության հետագա ընթացքի վրա: Նրանց ավարառուների ու հարկահավաքների մշտական զոհերից էին նաև անմոռուկ կենդանու պես հարեմներ տարվող քրիստոնյա աղջիկները, որոնց հետ տերը կարող էր վարվել իր կամեցողությամբ: Դրա օրինակներից է հուշագրության հետևյալ դրվագը. Պարսկաստանի Քա-

րիմ խանը պիտի արշավեր Թիֆլիսի դեմ, եթե Հերակլ իշխանը չհամաձայներ նրա պահանջին՝ ուղարկել իր հանգուցյալ ավագ որդի Վախթանգ Միրզայի կնոջը, երկրորդ որդուն՝ Վրաստանի գաժառանգ Գորգին Միրզային, «նաև իր փեսա իշխան Դավթին և տասներկու այլ ազնվականների որդիներին, տասներկու գեղեցիկ վրացուհի կույսերի հետ՝ տասներկու տարեկանից ոչ մեծ»:

Էմինը կայուն նկարագրով անհատականություն է՝ ազատ և բարձր առուծախային, իրապաշտ մարդկանցից: Բանի որ նրա բնորոշմամբ՝ «Դրամն աշխարհի ժանգն է», ապա այն ազատագրության իր ծրագիրն առաջ տանելու միջոց պետք է լիներ միայն, ոչ թե նպատակ, ինչպես իր ընտանիքի որոշ կորսված վաճառական անդամների համար: Նա իր ընթերցած գրքերի թվում նշում է մի «Հռոմի պատմություն»: Թերևս այնտեղից է վերհիշում իրեն իսկ լավագույնս բնորոշող հետևյալ դրվագը. փայլեցված և սրված երկաթը կարող է մի երկիր ազատել ստրկությունից, ինչպես Հռոմն ազատեց գալլերից: Նրանց տրվելիք հարկը ոսկով կշռելիս «գալլերի թագավորն իր սուրը նետեց կշռքի մյուս նժարին՝ այն ծանրացնելու համար: Իսկ մի քաջ հռոմեացի, կարծես Մարտիուսը, մոտեցավ, սուրը վերցրեց ու ասաց. «Մեր երկիրն ազատելու է այս երկաթը, ոչ թե ոսկին» (Martius անունը շփոթմունքի արդյունք է. այն ածական է՝ պատերազմի աստված Մարսի անունից, նշանակում է «Մարսին առնչվող», «մարտական», «ռազմաշունչ»): Այս դրվագը հռոմեացի պատմիչ Տիտուս Լիվիուսի «Քաղաքի հիմնադրումից ի վեր» (*De urbe condita*) երկից է (5.48.9–49.3): Ըստ Լիվիուսի, երբ պիտի ոսկին կշռեին, պարզվեց, որ գալլերը չափից ծանր կշռաքարեր են առաջարկում: Տրիբունը բողոքեց, և գալլերի պարագլուխ Բրեննուն իր սուրը շարժեց նժարին՝ ասելով. «Ավա՛ղ պարտվածներին»: Այդժամ հայտնվեց հռոմեացիների զորավար Մարկուս Ֆուրիուս Կամիլիուսը՝ հրամայելով, որ ոսկին տանեն, իսկ գալլերին վռնդեն: Ապա իր մարդկանց կար-

գաղթեց պատրաստվել կռվի՝ ասելով, որ հայրենիքը պետք է հետ գրավել երկաթով, ոչ թե ոսկով:

Իր իսկ օրինակով վեհ նպատակի մարդուն սահմանազատելով փողի մարդուց՝ Էմինը լուսավորության առաջամարտիկին հակադրում է փողի ֆեոդիզիզմով տառապողներին, գիտելիք-հայրենիք-ազատությունը՝ տգիտությանը և փողի գերությանը. «Որոշ հայեր տանում են սով, ծարավ, երկար ճամփորդություններ, բայց այդ բոլոր դժվարությունները՝ միայն փողի համար: Ես նրանցից առաջինն եմ, որ դա արել եմ հանուն գիտելիքի և իմ երկրի»:

Ստոր կրքերի ու դրամի գերու և հասարակական կյանքում մեծ առաքելություն ստանձնած անհատի իրաբաներությունն աչքի է զարնում արդեն իսկ վերջինիս ուղղամտությունից (Էմինի պարագայում՝ հաճախ չափից դուրս) և ստոիկ, արժանապատիվ կեցվածքից՝ «անգամ ամենաժանր գրկանքների ժամանակ»: Նրա նկարագրին համահունչ մի տպավորիչ դրվագ է վաճառական Բոռուլի՝ անգլիացի ջենթլմենին հատուկ արարքը. նա, իմանալով, որ Էմինը նվեր չի ընդունի, նրան պարտք է տալիս մուրհակով: Երկու օր անց սուրը դնում է սեղանին և այրում մուրհակը՝ ասելով. «Երդվում եմ. եթե շարժում անեք՝ ձեռքս բռնելու կամ խանգարեք, անմիջապես կշամփրեմ Ձեզ»:

Դառնալով փողի պաշտամունքի այլասերող դերին, իսկ արևելյան դեսպոտիզմի երկրներում՝ անպաշտպան, ամեն պահ ոչ միայն ունեցվածքի, այլև կյանքի կորստյան վտանգի պայմաններում գործող հայ վաճառականների ճակատագրին՝ Էմինը շեշտում է. «Եթե հայ վաճառականներն ազատության հանդեպ գոնե կիսով չափ ունենային այն սերը, որ տաժում են փողի ու սնահավատության հանդեպ (վերջինս կործանարար է շատ առումներով), նրանք վաղուց արդեն ազատագրված կլինեին... Նրանք իրականում չգիտեն, թե ինչ է՝ ազատությունը. եթե գոնե մեկ անգամ համոտեսած լինեին դրա քաղցրությունը... հիրավի մեծ ազգ կլինեին»:

Իր ընտանիքի պատմության օրինակով Էմինը ցույց է տալիս ճղճիմ առևտրով զբաղվողների դաժան ճակատագիրը: Նրանց հակապատկերն էին վաճառականներ Պետրոս դի Սարգիս Գիլանենցը (ծն. թ. անհայտ—1724), Ախիջանենց Ալազար դի Խաչիկը (1690—1750) և Այվազ Աբրահամովը (ծն. թ. անհայտ—1725): Նրանք իրենց միջոցներով կազմակերպեցին ու ղեկավարեցին հայկական երեք ջուկատ, 1723-ին միավորվելով հիմնեցին հայկական էսկադրոնը Գիլանենցի հրամանատարությամբ: Հաջորդ տարի Ռեշտի համար կռվում նրա զոհվելուց հետո էսկադրոնի հրամանատարությունը ստանձնեց Ալազար դի Խաչիկը: 1734-ին նրան շնորհվեց ռուսական բանակի գեներալ-մայորի զինվորական կոչում:

8

Էլիզաբեթ Մոնթագյուի դիպուկ բնորոշմամբ՝ «Նա զարմանալի արարած է, կարողանում է լեզու գտնել ամենատարբեր մարդկանց հետ»: Դրա վկայություններից է Էրզրումում նրա հանդիպումը երիտասարդ մի ենիչերիի հետ, որը եկել էր՝ լարված վիճակ հրահրելու: Երբ հյուրը հարցնում է՝ վարձով կտա՞ իր բեռնակիր ձին, Էմինը նախ հյուրասիրում է նրան, ապա ծառային պատվիրում է, բեռնակիր ձիու հետ, ենիչերիին տալ նաև իր ձին՝ առաջարկելով ցանկության դեպքում դրանք պահել որպես նվեր: Նաև մի ծառա է տալիս՝ բեռը բարձելու համար: Ապշած ենիչերին հրաժարվելով ասում է. «Ինձ ուղարկել է մի մեծամեծ՝ ձեզ փորձելու և տեսնելու համար, թե ինչ տեսակ մարդ եք»: Եթե Էմինը համառոտ, մտադիր էին նրան «կտոր-կտոր անել»: Բայց, ասում է թուրք ենիչերին, «քանի որ քաջասիրտ ու առատաձեռն եք և սիրում եք մեզ՝ զինվորներին, ոչ ոք ձեզ նեղություն չի պատճառի»: Մարդկանց հետ բարդ կացություններում խնդիրներ հարթելու կարողությունը ևս Էմինը ծառայեցնում է իր հիմնական նպատակին:

Առաջատար անհատի ընտրությանն է մնում՝ գտնել տվյալ կացությունից իր առաքելության էությանն առավելագույնս համապատասխան ելք: Էմինը լիովին, նույնիսկ իրեն եզակի համարելով, գիտակցում էր իր ծրագրի կարևորությունը՝ դրանով նաև կարևորելով իր հուշագրությունը. «Հաշվի առնելով, որ ինքը բարեփոխության ու ազատության անասելի ծարավ ունեցած միակ հայն է հազարներից ու հազարավոր տարիների ընթացքում, բնական է՝ աշխարհը կցանկանա իմանալ իր կյանքի մանրամասները»:

Անհատի պատմական դերի նշանակալիությունը ենթադրում է համապատասխան պայմանների առկայություն: Նրանք, ովքեր ի գորտ են պատմություն մուծել նոր գործելակերպի շարժառիթներ, լիովին ազատ չեն իրենց գործողություններում: Նրանք ևս կաշկանդված են զանգվածների գործելակերպի շարժառիթների և ընդհանուր արդյունքի իրադրային կապանքով: Ազատագրության ելքը ճիշտ ընտրած անհատի թելադրանքը պետք է համընկնի ժողովրդի՝ նրան ընդառաջ գալու պատրաստականության հետ: Բայց եթե անգամ համընկներ, ժամանակի հայ իրականության ծանր պայմաններում անհամեմատ բարդ ու դժվարին կլինեք հաջողության հասնելը: Էմինի և հայության հասարակական տարբեր խմբերի միջև անհամաչափություններով, հակասություններով, հակադրություններով, բախումներով ընթացող հարաբերություններն ակնբևրեն բացահայտում են պատմական առաջատար անհատի և մարդկային զանգվածների գործելակերպի շարժառիթների ու փոխկապակցության յուրահատկությունը:

Նա աննահանջ կամքով պատրաստ էր գլխավորել ազգային ազատագրության պայքարը թե՛ գործնականորեն՝ զենքը ձեռքին, թե՛ հայ իրականության մեջ անժանոք նոր՝ Լուսավորական առաջադեմ գաղափարների ազդեցությամբ ձևավորված իր աշխարհայացքի դիրքերից: Բայց և՛ աշխարհագրորեն, և՛ մշակույթով, և՛ մտայնությամբ ու նպատակներով տարբեր, ցաքուցրիվ, անկազմակերպ հայ զանգվածներն իրենց մատչելի ու հարմար կերպով որքա՞ն

էին պատրաստ ընկալելու և ընդունելու դրա պատմական անհրաժեշտությունը: Առկա կացության բացասումով ազգի արժանապատիվ գոյությանը սևեռված Էմինն իր հերթին որքա՞ն էր ի գորու, հաղթահարելով ամեն տեսակ խոչընդոտ, կազմակերպել զանգվածային այնպիսի շարժում և առաջադրել շարժառիթային այնպիսի կռվաններ, որոնցով կփորձարկվեին ընդհանուր հրատապ պահանջներն ու դրանք բավարարելու հնարավորությունը: Այդպես կհաստատվեր նրա ազդեցության ու պատմական դերի աստիճանը: Իրենց առջև որոշակի անձնական, խմբային, զանգվածային նպատակներ դրած, փոխգործակցող կամ չփոխգործակցող, գիտակցված և կամային, նույնիսկ տարերային մղումներով գործող մարդիկ ճանապարհ են հարթում բոլոր մասնակիցների արարքների հանրագումարով ձևավորված օրինաչափություններով, որոնք հաճախ չեն համընկնում նրանց կանխատեսած արդյունքների հետ:

Որքան էլ վերահսկվի հասարակական փոփոխությունների ընթացքը, դրանց իրականացումը դուրս չի գալու որոշակի սահմաններից (Հոբբսի նշած՝ գետի և հունի օրինաչափությամբ): Դրանք փոքրիշատե կանխորոշված են, նախ, ազգաբնակչության քանակով ու աշխարհագրական պայմաններով, և հետո՝ արտադրատեղանակով, քաղաքական կառուցվածքով, մշակույթով, ընդհանրապես քաղաքակրթական մակարդակով ու տվյալ կացությանը հասցրած՝ մարդկանց նախընթաց գործունեության դերով: Իսկ մարդկանց գործունեության մեջ ինչքան էլ կարևոր լինեն բանականությունը, փորձն ու կազմակերպվածությունը, միևնույն է՝ տգիտությունը և տխմարությունն ուղեկից այլևայլ արատավոր հատկանիշների հետ կարող են սպասվածի փոխարեն հասցնել անցանկալի հետևանքների, մինչև իսկ՝ աղետների ու կործանման: Իսկ երբ Էմինի ասած ազատության քաղցր պտուղների փոխարեն խաթարվում է հասարակության կենսագործունեությունը, ահռելի ջանքեր են պահանջվում՝ հիշյալ հատկանիշ-փոփոխականների միագումարի այդ արդյունքից ազատվելու

համար: Ըստ ժողովրդական առածի՝ «Մի հիմար քարը գցեց ջուրը, հարյուր խելոք չհանեցին»:

Անշուշտ մարդիկ են սարքում իրենց և ընդհանուր պատմությունը, բայց ոչ միշտ՝ ինչպես իրենք են ցանկանում: Եվ երբ արդյունքը չի համընկնում նրանց նպատակներին, ձախողումը հաճախ վերագրվում է վերժամանակային, գերբնական ուժերի: Դա նշանակու՞մ է, որ մարդիկ սոսկական գործիք են այդ ուժերի ձեռքին: Չհամընկնելը Հեգելը պատճառաբանում է աստվածային բանականության խորամանկությամբ, որը, «օբյեկտներին թույլ տալով իրենց բնության հարկադրանքով իրար մոլորեցնել և ուժասպառել, թեպետ անմիջականորեն չի միջամտում այդ պրոցեսին, բայց միայն իր նպատակն է իրագործում: Այդ իմաստով կարելի է ասել, որ աստվածային նախախնամությունն աշխարհի ու նրա այդ պրոցեսի հանդեպ իրեն պահում է որպես բացարձակ խորամանկություն: Աստված մարդկանց թողնում է գործել իրենց մասնավոր կրքերով ու շահագրգռություններով, և դա իրագործումն է նրա մտադրությունների (ինչն էլ հետևաբար թանկ է նստում)» (13):

Աստվածային բանականության բարձրությունից դիտելով միայն նպատակների իրագործման խնդիրը՝ Հեգելը կարող էր բանաձևել զարգացման գլխավոր օրինաչափությունը — համաշխարհային պատմությունն առաջադիմություն է ազատության գիտակցման մեջ, առաջադիմություն, որը պետք է ճանաչենք նրա անհրաժեշտության մեջ: Մինչդեռ, աստվածային բանականության խորամանկությունն իջեցնելով իրական երկիր իր առարկայական ծավալումով, որպես հասարակության զարգացման պրոցեսում գործող մարդկանց խորամանկություն, կհանգենք այն պարզ, անգամ փծուն եզրակացությանը, որ դրա հաղթահարման համար ընդամենը մարդկային տարրական բանականություն է պահանջվում: Իսկ երբ չկա այդ բանականությունը, տխմարությունը, իդիոտիզմն է դառնում պատմության շարժիչ ուժ՝ դառը, թունավոր պտուղներով: Եվ այսպիսով՝ առաջադիմությունն ազատության գիտակցման մեջ դեմ է

առնում *Omnis determinatio est negatio*-ին («Ամեն սահմանում ժխտում է»): Ճշմարտությունից հեռու չես փախչի – սովորական առօրյայից մինչև զանազան բարդ հարաբերություններում՝ քաղաքական, դիվանագիտական, ռազմական, ֆինանսական և այլն, այդ խորամանկության կրողները հմտորեն օգտվում են ուրիշների կրքերի և շահագրգռությունների տխմար խաղերից՝ իրականացնելու իրենց մեծ թե չնչին, վեհ թե ստոր նպատակները:

Այդ հնարին, բնականաբար, դիմում է նաև բանականության սկզբունքով առաջնորդվող Էմինը՝ փրկելով Նախիջևանի հայերին և այնտեղ արշավող քուլանի քրդերի դեմ հանելով լեզգիների բանակը: Հետո շամշադին ցեղին է հրահրում լեզգիների դեմ, որոնք, անակնկալ հարձակումից խուճապահար թողնելով գերիներին (վաթսուներ՝ հայ), փախչում են: Իսկ երբ Մոհամադ Հուսեյն խանի ներկայացուցիչները Գյուլիստանի մեկիք Հովսեփ (Յուսուպ) Բեգլարյանի հետ բանակցում են խաղաղության համար՝ խանին ենթարկվելու պայմանով, նրանց պատասխանում են, որ մարտ են սկսելու, որ Էմինի («եվրոպական փոքր հնարամտությամբ») քարերով լցրած խուրջինում վեցնետիկյան ցեխիններ են և որ գերի կամ թշնամու գլուխ բերած ամեն զինվոր վարձատրվելու է: Էմինը, այդ կերպ, խանին հետ է պահում հարձակվելու մտադրությունից:

Նրա հնարամտությունը (խորամանկությունը) օգնում է՝ դուրս գալու վտանգներից և հաղթելու կռիվներում, բայց հաջողության առհավատչյան նրա վստահ պահվածքն է, անվեհերությունը, ռազմական հմտությունն ու համբավը և, իհարկե, Անգլիայում վաստակած դիրքն ու փորձը: Հանրահայտ էր, որ նա «անգլիացի լեռնցի է... ձեռքն ատրճանակին», եթե առաջինը կրակես և վրիպես, հաստատ կսպանի քեզ: Նա հասկանում է բիրտ ուժի լեզուն և միշտ պատրաստ է հարձակման: Թուրքերի հեծելազորի բոլուկ-բաշիի հարցին, թե ո՞վ է «այն զինված գյավուրը... ձիուց չիջավ, ոչ էլ ուշադրություն դարձրեց ինձ», պատասխանում են, որ եկել է Անգլիայից «բանի տեղ չի դնում ո՛չ փա-

շային, ո՛չ էր Անգլիայի բալիոգ բեգին [հյուպատոսին]... լսել ենք... Անգլիայի թագավորի որդեգիրն է և սպիտակ ֆարման ունի Նորին Օգոստափառ մեծություն սուլթանից՝ օսմանցիների մեծ տիրակալից»:

Նախախնամության գերակայությունն էկլեկտիկորեն անհատի կամքի ազատության գաղափարին համատեղող Էմինը, այնուամենայնիվ, գործում էր Լուսավորության թելադրած խորամանկ բանականությամբ՝ մարդկանց գործունեության անձնական նպատակների և հասարակական արդյունքների չհամընկնելու խնդիրը ևս, բոլոր պարագաներում, հնարավորինս վճռելով իր մեծ նպատակի օգտին: Նրա մյան մարդկանց ձգտումների հիմքում ընկած են վերանձնական շարժառիթներ, անձնականի հանգեցում հասարակականի և մարդկային զանգվածներին մեծ նպատակին հասցնելու նվիրվածություն: Նրանք իրենց անսովորությամբ անխոհեմ են թվում սովորական շատ խելամիտների. «Խելահեղ գաղափար էր, – ասում է Էմինի ազնիվ շվեդ տաճարները, – որ մի չար մարդ հաջողացրել էր ձեր գլուխը մտցնել՝ թողնել դրախտի մյան մի երկիր և գալ այս խառնակ ցուրտ տիրույթը, որտեղ պետք է ձիու մյան աշխատել ու կոտորվել միայն ապրուստը հոգալու համար... անգամ մեծ հարստության տեր մարդը, եթե իր կարողությունը չի կառավարում բավարար գոյությունը, շատ շուտ կսնանկանա և բանտ կնետվի՝ այնտեղ նեխելու»:

Դաժան այդ վիճակին ինքն իրեն դատապարտած, մշտապես «Հորի պես աղքատ» Էմինը սկզբնական շրջանում, ամիսներ շարունակ քաղցած, հաճախում էր դպրոց՝ մնալով «իր ճակատագրի հետ»: Այդ ճակատագրին ընդդեմ, հավատարիմ իր մեծ նպատակին՝ նա կյանքի ճշմարիտ ուղի էր ընտրել և հենց Անգլիան էր այն երկիրը, որտեղ սկսելու էր կռիվն ու կոփել իր անհատականությունը:

Խորամանկության դիմելը հիշյալ դեպքերում միակ հուսալի հնարն է: Էմինը միայնակ, լեզգիների բանակին

միացած, վճռում է իր խնդիրները՝ նրանց առաջնորդի մոտ կեղծն իրականի տեղ անցկացնելով: Այդպես և Գյուլիստանի մեկիքի փոքրաթիվ ուժերով Մոհամադ Հուսեյն խանի բանակին դիմադրելու բարդությունը նա հաղթահարում է խորամանկությամբ: Մոհամադ Հասան խանի 4500-անոց բանակի դեմ փոքրաթիվ խմբով հայտնված Գյուլիստանի մեկիքի տասներկու լեռնցիների փախուստն Էմինը կանխում է դարձյալ խորամանկությամբ. իբր իրեն հայտնվել է Սուրբ Հովհաննես Մկրտիչը և խրախուսել. «Ելի՛ր, հայտնի՛ր հայերին, որ հաղթանակն իրենցը կլինի, եթե իրենցից թեկուզ երկու-երեք հոգի դիմադրի: Ես... կկռվեմ նրանց համար»:

Դիրքային ու քանակային առումով անհուսալի վիճակում հայտնված Էմինն իր զինվորներին հորդորում է բաց դաշտում կռվել զինյալների մեծ խմբի դեմ, քանզի «պատու-պարվելու տեղ չունենք... Եթե փախչենք նրանցից, նրանք մեզ կբռնեն որսի պես: Չնայած սա հուսահատ քայլ է, գոնե կընկնենք քաջ զինվորների պես և թույլ չենք տա, որ աշխարհը կարծի, թե Էմինն ու իր քառասուն թուրքմենները վախկոտություն են ցուցաբերել ու ընկել կանանց պես»: Եվ սուրը հանում, գրոհում է՝ իր հետևից տանելով մյուսներից: Անելանելի վիճակներում նա, միանգամայն զիտակցաբար, գործում է՝ արհամարհելով մահը. «Ինձ ոչինչ չի պահի բացի մահից. այն սպասում է բոլորիս, և ազնիվ սիրտը կարիք չունի վախենալու»: Հատկապես փոքրաթիվ ուժերով, երբ անհնար է ճնշել թշնամուն և, զգուշորեն ու մտածված մանևրելով, հասնել մարտական առավելության, նա դիմում է խորամանկության ուղեկից հանդուգն, անակնկալ քայլերի: Նաև մեռակ լինելով՝ Էմինը վտանգավոր, նույնիսկ կյանքին սպառնացող կացությունները հաղթահարում է տոկուն, անվեհեր պահվածքի շնորհիվ:

Խորամանկությանը նշանակալի տեղ է տրված դեռևս մ.թ.ա. VI դարի չին գորավար ու մտածող Սուն-Ցզիի «Ռազմարվեստի մասին» տրակտատում. «Պատերազմը խաբեության ճամփա է: Ուստի, եթե դու ընդունակ ես որևէ

բանի, հակառակորդին ցոյց տուր՝ իբր ընդունակ չես, եթե օգտվում ես ինչ-որ բանից, ցոյց տուր՝ իբր չես օգտվում, անգամ եթե մոտակայում ես, ցոյց տուր՝ իբր հեռվում ես, անգամ եթե հեռվում ես, ցոյց տուր՝ իբր մոտակայում ես, նրան գայթակղի՛ր շահով, կազմալուծի՛ր ու հաղթի՛ր նրան: Եթե նա ամեն բան ունի, պատրաստ եղիր, եթե ուժեղ է, խուսափի՛ր նրանից: Չայրացնելով՝ շփոթեցրո՛ւ նրան, հնազանդ տեսք ընդունելով՝ նրա մեջ ինքնահավանությունն առաջացրու, եթե նրա ուժերը թարմ են, ուժասպառի՛ր նրան, եթե նրա շարքերը համերաշխ են, տրոհի՛ր, հարձակվի՛ր նրա վրա, երբ պատրաստ չէ, առաջ նետվիր, երբ նա չի սպասում» (14):

Այս հրահանգները, ժամանակի առաջընթացի հետ ձևափոխվելով, բայց պահպանելով իրենց էությունը, յուրովի բացահայտում են գորավարի գործի ահռելի պատասխանատվությունն ու բարդությունը, որ բացառիկ անհատներ կարող են կրել ու հաղթահարել: Ռազմական գործողությունների հիմնական սկզբունքները պահպանում էին իրենց նշանակությունը հին ժամանակներից ի վեր: Հաղթանակների հասնում էին նույն եղանակներով՝ զինատեսակների փոփոխությամբ միայն դրանց կիրառման կերպն էր փոխվում: XVIII դարում պատերազմը հաճախ մղվում էր ինչպես ամրոցների կամ քաղաքների պաշարումով, այնպես էլ պաշտպանությամբ: Կարևորելով ռազմագիտությանն առնչվող՝ ամրոցների կառուցումն ու ամրապնդումը՝ Էմինն անդրադառնում է եվրոպական ամրոցների կառուրելությանը: Եվրոպացիները, գրում է նա, նվաճողներ ու քաջ զինվորներ են, քանզի նախ վարժարանում (ակադեմիայում) սովորում են հզոր ամրոցներ կառուցելու, մեծ թնդանոթներ կիրառելու արվեստը, այնպես որ նրանց առաջ մեր ոչ մի ամրություն երեք օր էլ չի դիմանա: Սովորում են նաև բանակ դնելու ճիշտ ձևը, զինվորների այնպիսի դասավորությունը, որ նրանք նմանվեն երկաթե պատի: Եվրոպական ռազմարվեստում «բազում դժվար բաներ» կան, որոնք սովորելով՝ նրանք կարող են «քչերով

պարտության մատնել շատերին»։ Գերմանացիներն ընդամենը քսան հազար հոգով կարող են կռիվ տալ հարյուր հազար մահմեդականների դեմ։

Երկաթե պատի նման գորաշարը հատուկ էր XVII և XVIII դարերին։ Կարլ ֆոն Կլաուզեմիցի (1780–1831) մեկնաբանությամբ՝ հրազենի կատարելագործումով հետևակի թիվը մեծացավ և այն ձգվեց երկար շարքերով։ Չգիտեին՝ ուր տանել հեծելազորը, բացի թևերում տեղավորելուց, որտեղ կրակոց չկար և ձիու վրա գործելու տարածություն կար։ Այդ մարտակարգը բանակը վերածեց փակ անբաժանելի ամբողջության։ Կիսվեր՝ նմանվում էր երկատված հողաորդի. թևերն ապրում, շարժվում էին՝ չկատարելով իրենց օրգանական ֆունկցիաները։ XVIII դարի երկրորդ կեսում մտահղացվեց, որ հեծելազորը նույն հաջողությամբ կհսկի թևերը՝ տեղավորվելով բանակի հետևում և կազմելով նրա շարունակությունը ճակատով, և այն, հակառակորդի հեծելազորի հետ սովորական մրցությունից բացի, կարող է օգտագործվել շատ ուրիշ նպատակներով։ Դրանով «բանակը... վերածվեց բազմանդամ ամբողջության, դարձավ ճկուն և արագաշարժ» (15)։

«Երկաթե պատ» ասելով՝ Էմինն իհարկե նկատի ուներ բանակի հենց այդ բազմանդամ ամբողջությունն իր ճկունությամբ ու արագաշարժությամբ, քանզի Վուլիջի ռազմական ակադեմիայում դասավանդում էին ռազմարվեստի վերջին նվաճումների մակարդակով։ Նորթամբերլենդի կոմսին գրած նամակում նա հայտնում է, որ իրեն քաջալերել և գրքեր են տրամադրել, իսկ գնդապետ Դինգլին տվել է Բլենդի «Ջինվորական կարգապահությունը»՝ խոստանալով օգնել սովորել հրաձգության ու ամբողջաշինության արվեստը։ Վուլիջի «Թագավորական ակադեմիա»-ում տասներեք ամիս սովորելով՝ Էմինը «մի քիչ գիտելիքներ էր ձեռք բերել Եվկլիդեսի երկրաչափության, հանրահաշվի և ամբողջություններ գծելու բնագավառներում, բայց դա ամենևին բավարար չէր, որ նա ռազմարվեստի որևէ ճյուղում մասնագետ համարվի»։ Երբ պատերազմ է

սկսվում Ֆրանսիայի հետ, նա, իր խառնվածքին համապատասխան չբավարարվելով «ձանձրալի տեսությամբ», նախընտրում է ծանոթանալ գործնական ռազմարվեստին ու մասնակցել պատերազմին, առավել ևս, որ «երեսունմեկ տարեկան է, մեկ կռիվ տեսնելը կարող է իրեն ավելի օգտակար լինել, քան հինգ տարի տանը սովորելը»։

Թեկուզ կարճատև ռազմագիտական ուսումնառությամբ, բայց հստակատես ռազմագետի կարողությամբ օժտված Էմինը բավականաչափ պատրաստ էր տարածական և ժամանակային խնդիրներ լուծելու։ Իրար հետ ընթացող անգլիական երկու նավերից մեկի վրա երեսուներկու զինվորների հրամանատարությունը ստանձնած Էմինը մյուսի նավապետ Մուրի՝ Բասրան պաշտպանելու ծրագիրը բարձր գնահատելով՝ տալիս է ռազմավարական կարևոր տարածքում իշխող մի ամբողջական (քարտեզի վրա մի կետ) դիրքային նշանակության ուշագրավ վերլուծություն՝ եթե Մուրը միանար Մասկատից եկող նավատորմին, հավանաբար վերջ կտար Բասրայի պաշարմանը և այն կփրկեր պարսիկների ձեռքն ընկնելուց։ Կարող էր և «մի փոքր ամբողջություն կառուցել Սինափիում, ծովախորշի ծայրին՝ ապահովագրվելու համար երկու մահմեդական ազգերից։ Եվ կկարողանար իշխել ողջ գետին ու անգամ տիրանալ Պարսից ծոցին մինչև Մասկատ»։

Ամեն ռազմագետի համար անհրաժեշտ՝ Եվկլիդեսի երկրաչափության և մաթեմատիկայի ուսումնասիրությունը նպաստեց, որ նա ակնառու պատկերացնի ոչ միայն դիրքերի ընտրությունը և գործի դասավորությունը, այլև տեղաշարժերը, մարտական գործողությունների զարգացման, հարձակման հավանական ուղղությունները։ Քանի որ իրադրության մանրամասների պատկերներն ամբողջանում են ողջ՝ ռազմադաշտի որոշիչ տեղաշարժերի հստակ ուրվագծում, երկրաչափական կամ տարածական ինտուիցիան, վերացարկվելով զգայական ընկալումներից երկրաչափական անկյունների ու գծերի պատկերացումներով, իր հերթին առաջ է տանում գորավարի գործը։ Դա նկատելի է

մարտերի՝ Էմինի նկարագրություններում, որոնք ոչ թե սովորական մասնակցի տպավորություններ են, այլ ասես ամբողջ մարտադաշտում գործերի գործողությունները համապարփակ հայացքով ընդգրկող ու ղեկավարող հրամանատարի քննարկումներ:

Այդպես նա բացահայտում է անգլիացիների՝ պարտության տանող գործողությունները: Էմինը եղել էր մայոր Ֆրայթագի «միշտ թիրախին խփող որսորդների» գործամասում և տալիս է այսպիսի լայն համապատկեր. «Նորին Բարձրությունը լսեց, որ ֆրանսիացիներն առաջ են շարժվում իրենց ողջ բանակով, և հրամայեց իր զորքի մի մասին մույնպես առաջանալ: Բայց մեր բախտը չբերեց, քանի որ մեր հետևակը շատ ուշացավ, և մինչ կոռտենար, թշնամին սկսեց որոշ հեռավորությունից հրետակոծել մեզ՝ չպատճառելով, սակայն, մեծ կորուստներ: Նորին Արքայական Բարձրությունը ճիշտ համարեց վերադառնալ Աֆերդենի բանակատեղին: Հաջորդ օրը, ամսի 24-ին, թշնամին դարձյալ առաջ էր գալիս Հալլեի իր բանակատեղիից, Վեզեր գետի երկայնքով, իսկ մենք նահանջում էինք, մինչև որ ամրացանք ծառածածկ մի բարձր բլրի գագաթին, նրանք էլ՝ մի ուրիշի: Երկու կողմից դարձյալ թնդանոթազարկեր եղան, և սա տևեց մինչև երեկո: Մեր վիճակն այնքան էլ լավ չէր, և մենք դարձյալ նահանջեցինք, մինչև հասանք Համելն, ուր տեղակայեցինք մեր զորքի աջ թևը, իսկ ձախը՝ Անսբուրգում: Մեր և թշնամու միջև չարաբաստիկ Հասթենբերգն էր, որը շուտով հրո ճարակ դարձավ»:

1757-ի հուլիսի 26-ին Հասթենբերգի ճակատամարտում մարշալ դ'Էստրեի հրամանատարությամբ ֆրանսիական հարյուրիազարանոց բանակը պարտության մատնեց Քամբրեյենդի դուքսի զորքին: Սեպտեմբերի 8-ին արդեն նա ստիպված էր ստորագրել Կլոստեր Ցեվենի կոնվենցիան և վերադառնալ Անգլիա:

1758-ի հունիսին Մարլբորոյի դուքսի հրամանատարությամբ Սեն Մալո նավահանգստի դեմ արշավանքի սեղմ նկարագրությունը ևս մույն լայն, ընդգրկուն հայացքի վկա-

յություն է՝ ուշագրավ մի նշումով. «Վեցերորդ օրն ափ դուրս եկավ մեր ողջ զորքը՝ առանց ծանր հրետանու (ինչի համար ափսոսում եմ)»: Կամովին մասնակցելով նավահանգստում կանգնած նավերի, նավանորոգարանի և գինամթերքի պահեստի այրմանն առանց քաղաքի գրավման՝ Էմինն իր անբավականությունն արտահայտում է անուղղակիորեն, պահպանելով պատշաճությունը. «Մեր հեռանալու պատճառը ես չեմ, որ պիտի հայտնեմ: Ինչ էլ անի Նորին Պայծառափայլությունը, միշտ ճիշտ է»: Նա որոշակիորեն կցանկանար մասնակցել լիարժեք ճակատամարտի, որի համար անհրաժեշտ էր ափ հանել ծանր հրետանին:

Մարտը վարող հրամանատարը կանգնած է անընդհատ փոփոխվող, անակնկալներով լի մեծաթիվ ու բազմապիսի իրավիճակներում եթե ոչ գերակշռության, ապա գոնե հավասարակշռության հասնելու, նշանակալի մասով հավսանականությամբ իրագործվող հնարներն անմիջապես վերլուծելու և գնահատելու անխուսափելիության առաջ: Մարտական գործողությունների հաճախ սրընթաց ծավալման, ժամանակի սղության պատճառով վճռորոշ է լինում իրադրությանն անմիջապես, առանց նախնական կշռադատության հասու լինելու կարողությունը՝ ինտուիցիան, որը, տաղանդից ու գիտելիքներից բացի, նաև հարուստ և բազմակողմանի փորձ է պահանջում: Դա էր, որ Էմինին առաջին իսկ պատեհ առիթով ռազմադաշտ մղեց: Դեպքերի անորոշ ընթացքը հստակ հղացումներով կանոնավորելու, արագ եզրահանգումների այդ ունակությունը գերծ է պահում խառնաշփոթի, կորուստների և ի վերջո պարտության տանող հապաղումներից ու վրիպումներից:

Ըստ Լուսավորական ռացիոնալիզմի փիլիսոփայական հիմքերը դրած Ռենե Դեկարտի (1596–1650)՝ ճշմարտության հասնելու այլ ուղի չկա բացի ինտուիցիայից և անհրաժեշտ ապացուցումից, բայց և՛ «միայն ինտելեկտն է ընդունակ ճանաչելու ճշմարտությունը» (16): Ջոն Լոքը ևս ինտուիցիան բնորոշում է հատկապես ստուգության միջո-

ցով. «Մեր իմացության բարձրագույն աստիճանն ինտուի-
տիվ է, առանց դատողության: Մտքում եղած որոշ գաղա-
փարներ այնպիսին են, որ ինքնաբերաբար կարող են ուղ-
ղակիորեն համեմատվել իրար հետ: Եվ միտքն ի գործ է
ընկալելու դրանց համապատասխանությունը կամ անհա-
մապատասխանությունը նույնքան հստակորեն, որքան
դրանց առկայությունն իր մեջ: Այսպես, միտքն ընկալում է,
որ շրջանագծի կողը ողջ շրջանագծից փոքր է, նույնքան
հստակորեն, որքան շրջանագծի գաղափարը: Ուստի սա,
ինչպես ասվեց, ես անվանում եմ ինտուիտիվ իմացություն:
Այն անկասկած ստույգ է, կարիք չունի ապացույցների, ոչ
էլ կարող է ապացույց ունենալ... Այդպիսի ճշմարտություն-
ների հայտնաբերման և դրանց հետ համաձայնելու հա-
մար դատողական ունակության կարիք չկա, դատելու
պետք չկա, այլ դրանք հայտնի են՝ փաստերի ավելի բարձր
և գերակա աստիճանի շնորհիվ» (17):

Հարկավ, ստուգության հասնելու ինտուիտիվ ունա-
կությամբ ոմանք գերազանցում են մյուսներին: Այդ ունա-
կությամբ է, որ հնուտ գորավարները մարտի ծայրահեղ
լարվածության պայմաններում առավել արագ ու ստույգ
հղացումներով գերազանցում են հակառակորդին: Այդու-
հանդերձ, ինչպես հակառակորդի, այնպես էլ սեփական
գործողությունների, կողմերի բախումների ինտուիտիվ
հստակեցումը գործնականում և դրանց տեսական գնա-
հատումը չեն նույնանում: Միտքը զարգացնող, ռազմական
գործունեության նախապատրաստող տեսության խնդիրը
չէ մասնավոր ցուցումներ տալ ռազմադաշտում ծավալվող
ամեն դեպքի առիթով:

Ինտուիտիվ թելադրանքով, արագ վճիռներով գործող
Էմինը, այլ ռազմագետների նման, հետևում է դարի ռացիո-
նալիստական մտայնությանը հատուկ ստույգ իմացության
սկզբունքին: Բլրի վրա դիրքավորված շուրջ 200 անգլիացի
հետևակայինները սպանում են հսկայական ուժերով վա-
րից հարձակվող առնվազն 300 հոգու, քանզի «փոքրուց
դաստիարակված են իբրև որսորդներ. նրանք միշտ խփում

են քիրախին»: Դրանից անմիջապես հետո, համեմատելով
վառողն ու սուրը, նա գրում է, թե վառողի «հայտնագոր-
ծությունը մեծապես նպաստել է մարդկության պահպան-
մանը: Վառողը մի բան է, որ մեծ աղմուկ է հանում, ինչպես
ամպրոպն ու կայծակը, և վախեցած մարդկանց հեռու է
պահում: Մեծ Մարշալ դը Սաքսն ասում է, որ վառողի մա-
սին միտքը գերազանցում է բուն վտանգը»: Ուստի, շարու-
նակում է Էմինը, «Կուզեի իմ հրամանատարության տակ
ունենալ ոչ ավելի, քան տասնհինգ հազար պարսիկ հեծ-
յալ... և ձեր խոնարհ ծառան ցույց կտար ֆրանսիացի-
ներին, որ յաթաղանի ուժն ավելի մեծ է, քան վառողինը,
թեպետ նրանց թիվը... հարյուր հիսուն հազար է»: Բայց
բյուր կրակոցներից յաթաղանի ավելի ստույգ հարվածը
գերադասելը (մինչև իսկ 15000 պարսիկին՝ տասն անգամ
ավելի ֆրանսիացուց) միանգամայն տարբեր վիճակ է՝
«որսորդների» սպանած 300 և տված 20 զոհի ու 6 վիրա-
վորի համեմատ: Անհիմն «ռացիոնալ» հաշվարկ, որը,
իհարկե, Ալեքսանդր Մուվորովի հայտնի Пуля дура, штык
молодец ասույթի արձագանք է: Բայց Մուվորովն ինքը,
թեև սվինամարտի դերը հասցրեց բարձրագույն աստիճա-
նի, խիստ կարևորում էր վառողի արժեքը:

Հարվածի ստուգությունը, անկախ զենքի տեսակից,
վերջին հաշվով որոշվում է այն օգտագործող զինվորի
հմտությամբ, ինչպես «որսորդների» դեպքում: Որքան էլ
կարևոր էր, ըստ դարի մտայնության, ինտուիտիվ ստուգու-
թյունը, այն զուրկ էր բավարար ճշգրտությունից, քանզի
ապացուցական ուժ չունեին և կարող էր վտանգավոր լինել,
առավել ևս՝ ռազմադաշտում: Ուստի թեև առանց ինտուի-
ցիայի անհնար էր ղեկավարել ռազմական գործողություն-
ները, բայց այն առավելագույնս վստահելի չէր և կարող էր
ոչ միայն օգտակար, այլև վնասաբեր լինել: Կշեռքի նժարը
թեքվում էր մեկ կամ մյուս կողմն առավելապես գորավարի
իմացության, նախկին փորձի և հմտության շնորհիվ:

Հայրենի տարածքում Էմինը հնարավորություն չունե-
ցավ լիովին ցույց տալու ռազմական իր տաղանդը: Թե ինչ-

պիսի գորավար կղառնար նա, եթե իր տրամադրության տակ հայկական կանոնավոր բանակ ունենար, կարելի է պատկերացնել՝ վերլուծելով գրքում ժամանակի ռազմական գիտության ու արվեստի սկզբունքների մեկնակետից նրա ներկայացրած տվյալները: Նա ինքը իրատեսորեն գրում է. «Եթե որևէ տաղանդ ունեմ և եթե ամենակարող Աստված ինձ ստեղծել է մի ազգ առաջնորդելու համար, ապա ինչ որ տեսել ու սովորել եմ՝ կգարդարի այդ տաղանդը: Իսկ եթե այդպես չէ, ապա կլինեմ շատ սպանների ու զինվորների նման, որոնք քսան տարի ծառայել են ու մնացել մույնը, ինչ սկզբում էին: Այսպիսով ռազմական արվեստը, եթե դրան տիրապետում ես, Աստծո պարգևն է, ինչպես բոլոր մյուս գիտությունները: Երկաթը երբեք արծաթ չի դառնա»:

Նա խորապես գիտակցում էր, որ ամբողջ մի ազգի ազատագրական պայքարը կազմակերպելու պատասխանատվությունը վերցնելու, գորավար դառնալու համար անհրաժեշտ է անընդհատ հարստացնել գիտելիքները և փորձ կուտակել՝ հատկապես հմտանալով ռազմադաշտում, կատարելագործելով բանակի ղեկավարման, զինվորների ոգին բարձր պահելու և հաղթական մարտերի տանելու կարողությունները: Ի դեպ, նրա մշտական բեռների անբաժան մաս էր ռազմագիտական գրականությունը, որ թարմացնի իր գիտելիքները և ճշգրտի սկզբունքները:

10

Եվրոպացիների իմաստությունն ու հզորությունը տեսնելով զինվորների կոորդինացված, միասերտ մարտավարության մեջ և որոշելով դա յուրացնել, ապա գնալ լեռների խիզախ, չնվաճված «սև հայերի» մոտ՝ նրանց սովորեցնելու արդիական ռազմարվեստը (որին չեն տիրապետում թուրք ու պարսիկ զինվորները)՝ Էմինն ամփոփում է. նրանք «քաջ են, երբ ձի են հեծած, բայց արժանի չեն բանակ կոչվելու, նրանց քաղաքներն էլ լավ ամրություններ չունեն, ինչպիսիք տեսա Եվրոպայում»: Նախնական այս մտադ-

րությունը հետագայում փոխվեց՝ Էմինին տանելով Հերակլի մոտ: Ոչ այն պատճառով, որ անմիջապես Արցախ գնալն անհեռանկար էր, այլ որովհետև ավելի կարևոր համարեց վրաց թագավորի հետ գործակցելը՝ համատեղ վրաց-հայկական պետություն ստեղծելու հեռանկարով:

Արևելյան Հայաստանում հայկական պետականության տարրեր պահպանվում էին Սյունիքում և Արցախում: 1720-ականներին Դավիթ Բեկի (1669–1728) գլխավորությամբ Սյունիքի հայերի զինված պայքարով հաստատվեց ինքնուրույն իշխանություն: Հատկապես Արցախի մելիքություններում պահպանվող զինուժը տարածաշրջան Էմինի հասնելիս միակն էր, որի հիմքի վրա դեռ անհնար չէր ազգային-ազատագրական շարժում կազմակերպելը: Էմինը մի տեղ միայն նշում է. «Ղարաբաղը սկզբում կոչվել է Արցախ, այսինքն՝ «Կանաչ այգի»» (կամայական ստուգաբանություն է): Մեծ Հայքի տասներորդ՝ Արցախ-Արձախ նահանգն «Ուրտեխե», «Ուրտեխինի» ձևերով հիշատակված է ուրարտական արձանագրություններում:

Գանձասարի Հովհաննես կաթողիկոսի խորհրդով և նամակով Էմինը գնում է Շուշիի Իբրահիմ խանին այցելելու, բայց քանի որ վերջինս բացակայում է, Էմինին ուղեկցում են հայրենադավ մելիք Միրզախանի տուն: Էմինը վերաշարադրում է նրա ծեր կնոջ պատմածն Արցախի հինգ մելիքների պառակտման և դրա պատճառով այնտեղ հաստատված քոչվոր սարըջալուների ցեղապետ Փանահ խանի (1693–1763) մասին: Երեք տարում հզորացած Փանահը սպանում է Ջրաբերդի մելիք Ալահդուլի սուլթանին (1749): Հազիվ փրկվում է Ալահդուլիի եղբորորդի մելիք Աղամը (Հաթամը): Բայց «Երկու առաջնորդների մայրերին ու կանանց տանջամահ արեցին շիկացած արդուկներով»: Այդ ամենի պատճառ մելիք Շահնազարը (ծն. թ. անհայտ–1792) «Փանահի հավատարիմ ընկերն էր, պարսկերենի գիտակ, որը մահմեդականներին հաստատեց մեր լեռներում: Նա Բեհեղզբերդի որդի էր՝ քրիստոնյա կոչելու անարժան»: Կինը փորձում է մեղմացնել ամուսնու արածը.

«Մեկիք Եսային՝ Դիզակ երկրից... և իմ խեղճ ամուսինը՝ մեկիք Միրզախանը Խաչենից, ստիպված էին մի քանի տարի գորակցել Փանահին»։ «Ստիպված», Փանահի գորքի հետ, այն էլ՝ «ընդդեմ մեր հայրենակից ու մեզ պես քրիստոնյա մեկիք Հաթամի և մեկիք Յուսուպի, որոնք համարյա ուժասպառ էին եղել պատերազմի ընթացքում»։

Վարանդայի մեկիք դառնալու համար Շահնագարը սպանել էր ավագ եղբորը և նրա որդուն։ Այդ ոճիրից հետո նրա դեմ էին ելել Արցախի մյուս չորս մեկիքները և, գլուխն ազատելու համար, նա դիմել էր Փանահի օգնությանը, նրան նվիրել Շուշի բերդը և իր աղջկան կնության տվել նրա որդուն՝ Իբրահիմին։

Ծեր կինը պատմում է նաև դեպի Արցախ Ուրմիայի Ֆաթալի խան Աֆշարի արշավանքի մասին։ Նրան միանում են մեկիք Ադամը Զրաբերդից ու մեկիք Հովսեփը Թալիշից։ Փանահը քաշվում է Շուշի բերդաքաղաք և մեկ տարուց ավելի պաշարումից հետո հանձնվում։ Փանահն իր որդի Իբրահիմին ուղարկում է որպես պատանդ, բայց երեք օր անց Ֆաթալի խանը գնում է՝ Ուրմիան ազատելու այն գրաված Բարիմ խանից։ Վերջինս գլխովին ջախջախում է նրա բանակը և մահապատժի ենթարկում նրան։ Սա ընդամենը մի բնորոշ դեպք է իրար անխնա բնաջնջող բազում արևելյան տիրակալների արյունալի կրկեսում։

Իհարկե, այս պատմությունը պահպանված այլ նյութերի նման պետք է ընդունել քննաբար, ճշտել՝ համեմատելով այլ աղբյուրների հետ։ Ծեր կնոջ նկատելի վրիպումներից է այն, որ Փանահին, իբր, խան էին հռչակել «մեր հիմար, անխելք առաջնորդները»՝ ընտրելով «այս անառիկ... վայրի միապետ»։ Մինչդեռ ինքն էր ասում, թե «ողջ փորձանքի ու գծություն պատճառը» Վարանդայի մեկիք Շահնագարն էր։

Արևելքի այդ տարածաշրջանը անվերջանալի մանր ու մեծ ռազմական բախումների, պատերազմների թատերաբեմ էր։ Տարբեր իշխանավորներ ու տիրակալներ, ցեղախմբեր ու ժողովուրդներ կողոպուտի, իշխանության ու տա-

րածքներ գրավելու համար ծայրահեղ դաժանությամբ կոտորում էին իրար։ Այս ողջ մահաբեր թոհուրթոհում հայ ժողովրդի գոյությանը սպառնացող գլխավոր վտանգն Օսմանյան Թուրքիան էր։ Արցախի վրա 1725-ի մարտին հարձակված Շահին, Սալահ և Ալի փաշաների 4700 հոգիանոց զորքի մեծ մասի և փաշաներից երկուսի ոչնչացումից հետո գերված Սալահը խոստովանել է. «Մեր թագավորն հրաման է արարեալ, որ պիտի մեք այս երկիրներս Հայն և ղզլաշն փչացնենք, չուն որ Ըռուս թագավորի զօրքն ծովի այս կողմս են անցել, մեք նոցա վերա պիտի գնամք. Հայն այս մեջս չպիտի և այս երկրներս խարապ պիտի լինիլ, որ մեր ճանապարհն բացուի... Դուք չէիք այս միջոմս, մեք հիմա Դարպանտու և Պաքու վերա էինք գնացել, որ գատիմի մերն է» (18)։

Հայ ժողովրդի կոտորածով Օսմանյան Թուրքիայի և Կովկասի թուրքերի միացմանը զուգահեռ, հայությանը և Հայաստանին ահռելի աղետներ պատճառած՝ XVI–XVIII դարերի թուրք-պարսկական պատերազմներում պարսից արշավանքների մասնակից շիա քոչվոր ղզլաշների «փչացման» նպատակը նաև Պարսկաստանի արևմտյան շրջաններին տիրանալն էր (համաթուրանական ծրագրում սա ևս ուժի մեջ է)։

Պատմության վայրիվերումների և կործանված տիրակալների ու տերությունների մասին Էդմունդ Բերքը հետևյալն է գրում փոթորիկներով անցած իր հին բարեկամ Էմինին. «Թագավորությունները հայտնվում ու վերանում են, կայսրերը՝ գերեվարվում ու կուրանում, չարչիներն էլ՝ կայսր դառնում։ Իսկ մենք այնուամենայնիվ ողջ ենք և, հուսով եմ, բավարար խելք ունենք՝ անձամբ դաս քաղելու մեծ իրադարձություններից և դրանով մխիթարվելու»։

Էմինը ոչ միայն մեծ դաս քաղեց, այլև դա որպես ուղեցույց ավանդեց սերունդներին։ Նրա կյանքի դասերից թերևս առաջին ուսանելին այն էր, որ բոլոր կողմերից արյունոռու մահմեդականներով շրջապատված մսաղացում քրիստոնյա փոքր ժողովուրդների գոյությունը պահպանե-

լու միջոցն արյան դեմ արյունն է, վայրագության դեմ՝ վայրագությունը: Որքան էլ նա կարեկից էր թույլերի, անպաշտպանների ու թշվառների տառապանքներին, ասվածի վկայություն է շատ բարբարոսություններ տեսած զորականին հատուկ անդդովելիությամբ նրա պատմած հետևյալ դրվագը. հայ քաջերը «մերկացրին իրենց սպանած առաջին պարսիկին, գլխատեցին և, սիրտը հանելով, գետը թաթախեցին: Սա սնուտի պաշտական արարք էր, որին նրանք շատ հավատում էին, իբր դրանով խուճապ են առաջացնում թշնամու ողջ զորքում: Այդպես էլ եղավ, նրանք փախուստի դիմեցին»:

Թշնամու այդ հարձակումից առաջ Էմինը մանրամասն հետախուզում է տեղանքը, հարմար ու անհարմար լեռնացքները: Նա բավական անպաշտպան է համարում Գետաշեն գյուղը՝ բլրի վրա լինելու պատճառով. «Գագաթին հողապատնեշ կար, որը ժամանակին հապճեպ սարքել էր մի պարսիկ հրամանատար»՝ ընդամենը մարդկանց ծածկելու և թույլ տալու հրացանները վար ուղղել: Բայց եթե հարձակումը սպասվում էր վարից, ապա վերից մարտ մղելն ավելի դյուրին կլիներ տեսադաշտի, թշնամուն խոցելու, նրա կրակից պատսպարվելու և նրա առաջխաղացումը կասեցնելու համար: Տվյալ դեպքում, սակայն, Էմինը չի սխալվում: Գյուղի դիրքը նա անպաշտպան է համարում նախ բնակչության նահանջը կազմակերպելու առումով: Նահանջի ճանապարհը բարենպաստ չէ. գյուղը շրջապատված է լեռներով, և միայն մի բարձրադիր, դեպի հյուսիս տանող, համարյա անանցանելի լեռնանցք կա: Եվ ոչ մի պահակախումբ այն չի հսկում (այսինքն՝ այնտեղ թշնամու հայտնվելու դեպքում հայերը ծուղակը կընկնեին): «Լեռնանցքը համարյա չորս մղոն հեռու էր գյուղից, նրանից օգուտ չկար: Դեպի հարավ, գետի այն կողմում խիտ անտառ կար, որը թշնամու անակնկալ հարձակման դեպքում գյուղացիների համար նահանջելու հրաշալի տեղ կլիներ: Բայց քանի որ գյուղի և այդ վայրի միջև գետն արագահոս էր, այն անցնելու որևէ հույս չկար, չնայած խորու-

թյունը վեց ոտնաչափից պակաս էր»: Բացի այդ, ինչպես երևում է նկարագրությունից, պատվարից այն կողմ կռիվ մղելը դժվարացնելու էր հայկական գերեզմանոցը՝ շուրջը դաշտ, քառասունհազարանոց մի բանակ տեղավորելու չափ մեծ: Ուստի գոգավորությունն այնքան խորը չէր, որ, վերևում կանգնած փոքրաթիվ արցախահայ պաշտպանների առավելությունը որոշիչ լիներ: Ավելին՝ դիմացի տարածությունը ևս բլրոտ էր:

Անձանոթ տարածություններով անցնելիս դյուրությանը կողմնորոշվելու կարողությունը բնորոշ էր Էմինին: Իսկ տեղանքի ռազմական քարտեզի նման հստակ մատուցումը ևս մի վկայություն է, որ նա զորավարի հմտությամբ տիրապետում էր արևմտյան ռազմագիտության սկզբունքներին: Նա չի երկբայում, որ անհրաժեշտ է սպասվող բարդ իրադրությունը հաղթահարել ուժերի լարումով և, աննպաստ տեղանքի համեմատ, հատուկ մարտավարությամբ: Մինչդեռ, նրան լսելու փոխարեն, մելիք Հովսեփն անփութորեն ասում է. «Թող թշնամին գա, մենք նրանց դեմ կկռվենք մեր դռների մոտ»: Էմինը սա վերագրում է նրա անհոգությանը, բայց, դրանից անկախ, մելիքի մարտավարությունն ավելի տարերային, պահով թելադրվող բնույթ ուներ: Նա ապավինում էր առավելապես զինվորների անձնական խիզախությանը և ռազմական երկարատև տեղական փորձին: Հիմնավոր, արդիական ռազմագիտական պատրաստության մասին խոսք լինել չէր կարող, առավել ևս կենտրոնացված հայկական պետության բացակայության ու երկրի ղեկավարների անմիաբանության պայմաններում: Բայց և չպետք է անտեսել, որ հայերի՝ թշնամուն հաջողությամբ դիմադրելու, հաղթանակների պատճառն իր հերթին մահմեդական տարբեր, անգամ թվային գերակշռությամբ զորախմբերի արևելյան հետամնաց մարտավարությունն էր:

Հովսեփի ընդամենը 40 հոգիանոց խումբը փախուստի է մատնում Մոհամադ Հասան խանի բանակը՝ 2000 ղզբաշ, 2000 հետիոտն մահմեդական և Գյանջայի 500 հայ:

Այն որ հայ քաջերը «կատաղած առյուծների նման նետվեցին թշնամու սաստիկ կրակի տակ և համարյա շփոթեցրին նրան», ապա և թշնամուն խուճապի մատնեցին վերոհիշյալ սնոտիապաշտական արարքով, թվային նման հարաբերության դեպքում չէր կարող հաջողությամբ ավարտվել: Այս կռիվը, եթե նշված թվերն իրական են, իրոք հեքիաթի է նման: Ավելի համոզիչ է խանի հաջորդ հայտնվելուց հետո տեղի ունեցածը, երբ հայերի թիվը 500 է: Այս անգամ Մոհամադ Հասան խանը գալիս է նաև մի քանի դաշտային թնդանոթով ու Գետաշենի դիմաց դիրք գրավում գերեզմանոցի արևելյան կողմում գտնվող մի բլրի վրա:

Հայերը պաշտպանվելու համար քարերից պատնեշ են կառուցում: Գիշերվա ժամը տասներկուսին մոտ Էմինն առաջնորդ Հովսեփին առաջարկում է թշնամուն հանկարծակիի բերելու ծրագիր, որ իր կարծիքով հեշտ իրագործելի էր: Բայց Հովսեփը հրաժարվում է՝ պատճառաբանելով, որ եթե Ջրաբերդի մելիք Ադամը խանի հետ լինի, հավանական է, որ տուժի (և մեր «բարեկամությունը կարող է վերածվել մշտական թշնամանքի»): Դրանից անկախ, դժվար է ասել, թե ինչքան ճշգրիտ էր Էմինի հաշվարկը, և խանի քանակական մեծ գերակշռությամբ բանակի դեմ գիշերային անակնկալ հարձակումով որքան կհաջողվեր օգտվել հակառակորդի շփոթությունից ու հեռանալ առանց նկատելի կորուստների:

Էմինը բարձր է գնահատում գիշերով Ավան յուզբաշու (մոտ 1670–1735)՝ հակառակորդին մոլորեցնելու խորամանկ հնարը – Կուր գետի հայկական կողմում տարբեր տեղերից համազարկեր տալով՝ նա Շիրվանի սուլթան Քալբալիին ստիպել է մտածել, որ շրջապատված է լեռնցիների բանակով: Սուլթանը հապճեպ 18000 մարդկանցով լքել է ճամբարը՝ բավական ավար թողնելով: Գրավված մեծաքանակ հրազենը բաժանվել է Դարաբադի հինգ մելիքների հպատակներին: Էմինի տվյալներն Ավանի մասին ճշման կարիք ունեն և էական ոչինչ չեն ավելացնում հրամանատարի կյանքի հայտնի դրվագներին: Մասամբ

համընկնում են Էմինի և «Խամսայի մելիքությունները» երկում Բաֆֆու պատմածներն Ավանի թռուռուի մասին: Էմինը հրաժարվել է նրա հետ ամուսնանալուց՝ անձնական երջանկությունը զոհելով «իր գործին» և բիծ չգցելով «այդ անմեղ հրեշտակի բարի անվան վրա»: Այդ ամուսնությամբ «Էմինը կարող էր հաջողության հասնել և հիմա բարձր դիրք ունենալ իբրև կայրսուի հպատակ. չէ՞ որ նրա նախորդ Ելիզավետան շատ էր սիրում փոքրիկ իշխանուհուն»: Մինչ այդ կոմս Վորոնցովը և իշխան Գոլիցինն Էմինին հարցաքննությունից հետո առաջարկել էին ծառայել կայսրությանը: Էմինը կհամաձայներ, եթե Ռուսաստանը պատերազմեր Թուրքիայի դեմ: Ի դեպ, Բաֆֆին Ավան յուզբաշուն շփոթել է մելիք Եգանի հետ:

Արցախի զինված ուժերը հաճախ են հետ մղել թվով իրենց գերազանցող օսմանյան թուրքերի հարձակումները: Հերթական հաղթանակը 1726-ի հունիսին Խաչենում էր: Նույն տարվա աշնանը Սարը Մուստաֆա փաշայի արշավանքն Ավան յուզբաշու սղնախի վրա ավարտվեց 800 ասկյարի և երկու հրամանատարի կորստով. «Պատահական չէ, որ մերձկասպյան ռուսական զորքերի հրամանատար, գեներալ Վ. Դոլգորուկովը 1727 թ. մայիսի 11-ին իր կառավարությանը հղած զեկուցագրում զարմանքով նշում է. «Մարդկային բանականությունից վեր է հասկանալ, որ նրանք այդքան հզոր թշնամու դեմ դեռ կարողանում են պաշտպանվել: Երկու տարի անց՝ 1729 թ. նոյեմբերի 10-ին, Ավան յուզբաշին գեներալ Վ. Դոլգորուկովին ուղարկած նամակում գրում է, որ սղնախներում հազարավոր զինվորներ շարունակում են պայքարը՝ չմտածելով թուրքերին անձնատուր լինելու մասին» (18, էջ 46–47):

Գանձակի Սուրբ Հովհաննես եկեղեցու գավթում թաղված է Արցախի առասպելական հերոս Ավագ վարդապետը, որը «Էմինի չար բախտից 1760 թ. սպանվել էր... մի ժայռի հետևում դարանակալած լեռնցու ձեռքով»: Բաֆֆին գրում է, որ Գանձակի մոտ լեզգիների հետ պատերազմելուց հետո նա գիշերը հոգնած նստել է հանգստա-

նալու, և նրա վրա կրակել է վիրավոր մի լեզգի: Իր արտակարգ քաջության ու խելամտության շնորհիվ, գրում է Էմինը, Ավագը ջարդել է լեզգիներին ու Դադստանի ասպատակիչներին մի քանի վճռորոշ մարտերում և բազմիցս հաղթել է Նադիրից հետո Պարսկաստանին տիրելու հավակնող որոշ իշխանների զորքերի: Թե՛ Էմինը, թե՛ Բաֆֆին խոսում են Ավագ վարդապետի ձիավարելու, սուր ու հրազեն գործածելու հմտության մասին: Նա կայծակի նման նետվում էր ռազմադաշտ և երբեք չէր վրիպում: Ասում էին՝ նրա զարմանալի ձայնն ավելի ուժեղ էր, քան Նադիր Շահինը: Մարտի սկզբում նա սովորաբար ռազմաշունչ երգ էր երգում և այդպես թշնամու ողջ բանակը մեծամարտի հրավիրում: Նրա ահարկու, որոտալից ձայնը բավական էր՝ թշնամուն սարսափեցնելու համար: Բաֆֆին գրում է, որ նրան Դալի Մահրասա («գիժ աբեղա») մականունը տված ժողովուրդը գուցե հավիտյան կհիշի նրա գործած հրաշքները կռիվներում:

Այսինքն, անողոր ռոմիսի դեմ սուր վերցնելու համար եկեղեցականը պետք է գիժ լինի: Սիմեոն կաթողիկոսի ժամանակ նրան տարել են Էջմիածին և բանտարկել սառցատանը՝ ապաշխարելու: Ավագ վարդապետի կյանքի այս դրվագը, որից Էմինն անտեղյակ էր, Սիմեոնի հանդեպ նրա անհաշտ վերաբերմունքի արդարացիության, ազգային-ազատագրական պայքարում եկեղեցու բացասական դերի ևս մի վկայություն է: Երբ բանտարկված վարդապետին ձի ու զենք են տալիս և նա վերադարձնում է ջալալի քրդերի թալանած վանքի ավարը, նրան արձակում են՝ խոստում առնելով, որ այլևս մարդ չի սպանի: Նա, իհարկե, մեղք չհամարելով հայրենիքի թշնամիներին սպանելը, շարունակում է մասնակցել մելիքների պատերազմներին:

Գյուլիստանում Էմինի տասն ամիս մնալուց հետո մելիք Հովսեփը խնդրում է նրան հեռանալ, քանզի «նրա հռչակը չափից մեծ է իր երկրի համար, ինքը վախենում է շրջակա մահմեդական իշխաններից և... հպատակ է պարսիկ Իբրահիմ խանին»: Էմինը Շուշիի Իբրահիմ խանին

համարում է «հայ հինգ առաջնորդների թագավոր, որն իրոք ծարավի էր» իր արյան: Սա ոչ այնքան Իբրահիմ խանի հզորության, որքան մելիք Շահնազարի զործողություններից հետո սկսված՝ Արցախի մելիքությունների բուլացման վկայություն է: Միրզախանի կինն ասում է. «Անբարո հայ հոգևորական Հովհաննեսը Ձեր պատասխան մամակների ողջ բովանդակությունը հայտնում էր Իբրահիմին: Մինչդեռ նա, մամակները մելիքների համար կարդալուց հետո, երդվել էր բոլոր սրբերով՝ զաղոնիքը պահել: Այժմ... հենց որ Ձեզ տեսնի, սպանելու է»: Այսինքն՝ հոգևորականը խանին տեղյակ էր պահել Էմինի ազատագրական նպատակների մասին:

Էմինն Արցախից հեռացավ հակասական մտածումներով. «Հայաստանի, Վրաստանի և Պարսկաստանի ոչ մի երկրամաս այնքան բերրի չէ, որքան Ղարաբաղը, ուր մի ֆունտ սերմից ստանում են 110 ֆունտ ցորեն... Սա ամենահարմար երկիրն է՝ պատերազմ վարելու և ազատությունը հեշտ պաշտպանելու համար»: Նա չի մանրամասնում՝ ինչո՞ւ է ամենահարմարը, և կարելի է միայն նախորդ ռազմագիտական նշումներից ենթադրել, որ նկատի ունի երկրամասի հարուստ ռելիեֆը՝ լեռներ, բարձունքներ, գոգավորություններ, ձորեր, անտառներ ու գետեր, որոնք լայն հնարավորություններ են տալիս՝ կիրառելու ռազմարվեստի զանազան հնարներ թե՛ կազմակերպված զորամիավորումներով և թե՛ ժողովրդական դիմադրությամբ:

Թեև մելիքությունների զորության անկման իրավիճակում այս անգամ էլ անիրագործելի մնաց Էմինի նպատակը, սակայն հայրենիքի այդ մարգարիտը՝ Արցախը, չէր կարող չհիացնել նրան իր բնությամբ ու բեղուն երկրագործությամբ. «Հացահատիկը կարելի է տասը տարի պահել, և այն մնում է թարմ, ինչպես նոր հավաքված ցորենը: Մինչդեռ այլ վայրերում, հատկապես Վրաստանում, այն կարելի է հազիվ տասնութ ամիս պահել, որից հետո դառնանում ու որդնում է: Բոլոր տեսակի պտուղների առատություն կա, նաև՝ մեծ քանակությամբ մետաքս, բամբակ,

բուրդ: Այլ տեղերում վառելիքը հիմնականում կովերի, ոչ-խարների ու ձիերի գոմաղբն է, իսկ Ղարաբաղում՝ փայտը, քանգի մի գյուղ չկա, որ մոտերքում անտառ չունենա: Այլ տեղերում ոչխարները գառ են ունենում տարին մեկ անգամ, իսկ Ղարաբաղում՝ երկու»: Եվ նա կրկին դեմ է առնում Արևմուտք-Արևելք հակասությանը. «Նրանք աշխարհի բոլոր բաներից ունեն, բացի մեկից, որ ամեն ինչի թագուհին է՝ խելացի կառավարում: Այն, թվում է, հրաժեշտ է տվել Ղարաբաղի բնակիչներին, և կարելի է վստահաբար ասել՝ ողջ Ասիային»:

11

1762-ի հունվարի նամակում Էմինն ուզում էր ստանալ Անգլիայի ֆինանսների նախարար լորդ Ջորջ Լիթլթոնի (1709–1773) խորհուրդը՝ իր տառապյալ երկրի ազատագրման խոչընդոտների հաղթահարման համար: 1. Ինչպե՞ս կարելի է երկիրը պահել ու պաշտպանել ռազմաշունչ մի ազգից: 2. Ինչպե՞ս կարելի է դրամ գոյացնել մի երկրում, որն ամբողջովին ավերված է և եկամուտ չունի: 3. Ի՞նչ միջոցի պետք է դիմել նման երկրի՝ արջի պես համառ մարդկանց հանդեպ՝ նրանց խելքի բերելու և աշխատասիրության մղելու համար:

Առաջին հարցի վճռմանն էր ուղղված նրա ողջ գործունեությունը, որը և հուշագրության բուն բովանդակությունն է կազմում: Իսկ հաջորդ երկուսին նա անդրադառնում է ընդամենը մի քանի տեղում: Ազատագրման խնդիրն առաջադրել ժամանակի տնտեսական պատկերից անջատ՝ կնշանակել այն կտրել իր ռեալ հիմքից: Էականն էլ այն է, որ գլխավոր խնդիրը նա շաղկապում է տնտեսական զարգացմանը՝ խորապես գիտակցելով, որ առանց դրա անհնար է պաշտպանել երկիրը: Մակայն հարցը փակուղային էր – առանց ազատագրության բացառվում էր որևէ տնտեսական առաջընթաց, բայց և առանց զարգացած վերածակող տնտեսության անհնար էր սեփական ուժերով երկիրն ազատագրել թուրք-պարսկական լծից: Երկրորդ

խնդրի լուծումը կախված էր այնպիսի գործոններից, որոնց մասին պատկերացումները դեռևս հետ էին մնում XVIII դարի առաջավոր երկրների տնտեսական որակական զարգացումից: Այնպես որ Անգլիայի ֆինանսները կառավարող լորդ Լիթլթոնն անգամ հազիվ թե լիարժեք գոհացում տար Էմինի հետաքրքրախույզ մտքին, այն էլ՝ Հայաստանն անհույս վիճակից փրկելու համար: Բացի այդ, եթե ժամանակի լավագույն ռազմական ակադեմիաներից մեկում սովորած Էմինը նաև տնտեսագիտական տարրական մի դասընթաց յուրացրած լիներ, չէր դիմի այդ ընդգրկուն հարցով, որին ըստ էության պատասխանելու համար ազնվափայլ լորդն ահագին աշխատանք պահանջող ծավալուն ծրագիր պիտի ներկայացներ նրան: Ժամանակի տեսական բարձր մակարդակով իրեն մտահոգող հարցերի բավարարում Էմինը կկարողանար ստանալ միայն տասնչորս տարի անց՝ կարդալով դասական տնտեսագիտության հիմնադիր Ադամ Սմիթի (1723–1790) «Ազգերի հարստության բնույթի և պատճառների ուսումնասիրությունը» (1776):

Այսպիսով, Էմինի հարցը մնալու էր առկախ, և ոչ միայն՝ ժամանակի ռեալ ընթացքից դուրս լինելու պատճառով: Ինչ վերաբերում է երրորդին, ապա «արջի պես համառ մարդիկ» խելքի կգային, երբ, ըստ հենց Ադամ Սմիթի պարզ ցուցումի, կաշխատեին ինքնուրույն տնտեսվարմամբ իրականացնել իրենց անձնական շահագրգռությունները: Էմինի տնտեսական պատկերացումները, որ նրա լայն հետաքրքրությունների ու սթափ մտքի նշան էին, արտահայտվում են հիմնականում երկրագործության մասին որոշ տպավորություններով: Ինչպես Ղարաբաղը, Վրաստանը ևս նա ներկայացնում է զուտ գյուղատնտեսական հնարավորություններով: Թեյմուրազ արքան ռուսներից փող ու զենք է աղերսում: Գործնական օգտակարության իր տեսանկյունից Էմինը, թեև զենքի արտադրության խնդրին չի անդրադառնում, հայտնում է, որ երկուսից ոչ մեկն էլ պակաս չէ, եթե երկիրը խելացի ու ճիշտ կառավարում ունենա: Այն կարող է ծաղկել ու երջանիկ լինել՝

առանց որևէ ազգից կախում ունենալու: Վրաստանն աշխարհի ամենահարուստ երկրներից է. արտադրում է երկու շատ շահութաբեր ապրանքատեսակ՝ մետաքս ու բամբակ (չի նշվում՝ սրանք վաճառվում են որպես հումք, թե՞ գործվածք): Ոչ մի ուրիշ երկիր այդքան առատ սննդամթերք չունի: Ջրի փոխարեն մարդկանց մեծ մասի սովորական ընպելիքը գինին է: Նրանք լավ միս ունեն և ամեն տեսակ անսպառ հացահատկեղեն ու մեղր:

Արցախի օրինակն արդեն ցույց էր տալիս, որ այդքանով ծաղկման ու երջանկության հնարավոր չէ հասնել՝ իհարկե, թնդանոթներ ձուլելու մասին խոսք չէր կարող լինել (զինագործները հրացաններ պատրաստում էին, բայց ոչ բավարար քանակով): Ըստ Ավան յուզբաշու մի տեղեկանքի՝ 500 «թվանկատր սահաբ եարադ, և էլ առանց եարադ», 6400 կովելու պատրաստ մարդ թուր և հրացան չունեն: Իսկ «Պետրոս I-ին հղված մի գրության մեջ Արցախի սղնախների զորապետերը ևս հաղորդում են, որ իրենք միասնաբար 20000 կովող ունեն, որոնց կեսը, սակայն, անգեն է» (18, էջ 39, 41):

Օտար բռնակալների ճնշումների պատճառով երկրից արտագաղթած հայության տնտեսական, մշակութային, քաղաքական հաջողությունները, տարբեր երկրներում ձեռք բերած փորձն ու հմտությունները կծառայեին Էմինի ծրագրած անկախ Հայաստանի հզորացմանը: Գաղթականությունն ազգի և՛ թուլությունը, և՛ ուժն էր: Թուլությունը, քանզի երկիրը դարեդար զրկվել էր իր էթնիկ բնակչության մեծ մասից, և ուժը, եթե վերջապես հնարավորություն ստեղծվեր հայ գաղթականության կուտակած հարստությունը ծառայեցնել հայրենիքին: Քանի որ պետականագուրկ հայ ժողովրդին այդ հարստությունն անմատչելի էր, Էմինը Հերակլին առաջարկեց միասնական պետություն ստեղծելիս նկատի առնել, որ «եթե Ձեր երկրում, Ձերդ Մեծության զենքի պաշտպանության տակ ի մի բերեք հայերին՝ հարուստ ու առևտրական մարդկանց, որոնք ցրված են դեպի արևելք և արևմուտք, հյուսիս և հարավ, ապա

Արևելքի ոչ մի թագավորություն հարստությամբ ու փառքով չի համեմատվի Ձեր թագավորության հետ»:

Բացատրելով, որ աշխատանքի բաժանումը մեծացնում է արտադրողականությունը, Ադամ Սմիթը շարունակում է. երկրագործությունն իր բնույթով թույլ չի տալիս տարբեր աշխատանքների այնպիսի բազմազանություն և լիակատար բաժանում իրարից, ինչպես դա հնարավոր է մանուֆակտուրայում: Աշխատանքի արտադրողականության ավելացումն այդ ոլորտում ոչ միշտ է համապատասխանում արդյունաբերության աճին. «Երկրագործության մեջ աշխատանքը հարուստ երկրում ոչ միշտ է ավելի արդյունավետ, քան աղքատ երկրում, կամ առնվազն երբեք ավելի արդյունավետ չէ այնքան, որքան լինում է մանուֆակտուրայում» (19):

Քանի որ աշխատանքի արտադրողականության նշանակալի մեծացումը հատուկ է արդյունաբերությանը, իսկ այն խիստ հետամնաց վիճակում էր Վրաստանում և Արցախում, ապա ինչքան էլ բարբեր երկրագործություն ունենային, փողն ու զենքը պիտի աղերսեին Ռուսաստանից՝ մնալով հետին, կախյալ վիճակում: Կացությունն ըստ էության նույնն է և այսօր: Առավելապես երկրագործության հիմքի վրա, թեկուզ խելացի ու ճիշտ կառավարումով, երկիրը չի դառնա բարեկեցիկ: Իսկ երբ կառավարումն էլ բնավ այդպիսին չէ, երկիրը (այն էլ՝ թշնամիներով շրջապատված) հայտնվում է ծանրածանր վիճակում:

Ինչպե՞ս էր Էմինը պատկերացնում խելացի կառավարումը: Հին հռոմեացիներն արվեստի ու իմաստության շնորհիվ օրենքներ տվեցին և աշխարհի ժողովուրդներին ենթարկեցին իրենց: Չնայած հեթանոս ու կռապաշտ էին, բայց առաքինի էին և լավ բարբեր ունեին: Թե որքան էին Հռոմի բարբերը համընկնում Էմինի դավանած քրիստոնեական առաքինությանը, առանձին հարց է, բայց որոշակի է, որ ոչ մի երկիր չի կարող աշխարհում առաջատար, քաղաքակրթական դիրք գրավել՝ առանց համապատասխան օրենսդրության հետևողական կիրառման: Իրավա-

կան օրենսդրությունը և բարոյական նորմերը փոխապայմանավորված են այնքան, որքան առաջինում հաշվի է առնվում մարդկանց արարքների կարգավորումն ընդունված բարոյական պատվիրաններով ու արգելքներով: Քաղաքացիների և պետության փոխհամաձայնությամբ ընդունված ընդհանուր կանոններով իրավական բոլոր խնդիրների լուծման հռոմեական սկզբունքը հետագայում պահպանեց իր նշանակությունը: Պետության հասարակական և առանձին անձանց մասնավոր իրավահարաբերությունները կարգավորող հռոմեական իրավունքի այդ երկու մասից երկրորդը, անհրաժեշտ վերամշակումներով, դրվեց եվրոպական հաջորդ պետական համակարգերի քաղաքացիական իրավունքի հիմքում:

Ինչու՞ էր Էմինը հռոմեական օրենքների պատմական դերը պայմանավորում առաքինի և լավ բարքերով: Ծննդոց գրքում ներկայացված է Արարչի գործերի բարոյական էությունը (Ա, 31). «Եւ ետես Աստուած զամենայն զոր արար, եւ ահա՛ բարի են յոյժ: Եւ եղև երեկոյ, եւ եղև վաղորդայն, աւր վեցերորդ»: Անադարտ բարին հատուկ է միայն Նրան, որին կարող են ձգտել ու հասնել Նրա կամքը կատարողները: Այսպիսով Աստված՝ աշխարհն անշահախնդիր բարու օրենքներով արարած սկզբնապատճառը, քանի որ բարին ուստի և բարիքն իր կամքի դրսևորումն են, մարդուն ուղղել է ազատ կամքով առաքինի գործունեության – Էմինի աշխարհայացքն ի սկզբանե ձևավորված էր այս դրույթով: Դրա հիման վրա էլ, սահմանազատելով բարին ու չարը, նա նշում է, թե գերմանացիների սրտի պարզության ու պարկեշտության շնորհիվ Աստված «Եվրոպայի մեծ մասի միապետությունը» նրանց է տվել, ու եվրոպացի իշխանների «բոլոր նախնիները գերմանական ծագում ունեն»: Արդ, «շիտակությունն ավելի ընդունելի է Աստծո համար, քան խարդախությունն ու խորամանկությունը», և խարդախ հրեաները, հնդիկներն ու ուրիշներ իրենց համապատասխան տեղն են գտել «Ամենակարողի անտեսանելի ձեռքով, ուստի նա թույլ է տալիս, որ ճշմարտությունը շողա

բոլորի վրա»: Կան «ամեն ազգի լավ ու վատ մարդիկ», բայց ավելի առաքինություն կա «քաղաքակիրթ, ազատ մարդկանց մեջ, քան նրանց, ովքեր միայն ուտում են, խմում ու քնում՝ մնալով խորապես տգետ»:

Բարու և ճշմարտության կապը վերացական կայունության նույն սկզբի՝ Ամենակարողի ձեռքի գործ համարելով՝ Էմինն այն կտրում է տեղի ու ժամանակի որոշակի պայմաններից: Քանի որ Աստծո բարի կամքով են սահմանված արարչության օրենքները, ապա դրանք կայուն, անփոփոխ են թե՛ հին, թե՛ նոր աշխարհում: Հետևաբար, եթե հռոմեական հասարակությունը չհատկանշվեր «առաքինի և լավ բարքերով» և, դրանց համապատասխան, չմշակեր հռոմեական իրավունքը, այն չէր կարող ավանդվել Եվրոպայի ժողովուրդներին: Ինչքան էլ Էմինը ծանոթ էր Հռոմի պատմությանը, միևնույն է՝ այս եզրակացությանը ոչ միայն խախտու է և անհամապատասխան պատմական փաստերին, այլև աչքի է ընկնում բարքերի և օրենքների անփոփոխության նախադիր դոգմատիզմով:

Այն, որ հասարակարգին, կրոնին, ավանդույթներին ու սովորույթներին առնչվող բարոյական գաղափարներն իրենց մասնավոր դրսևորումներում երկրից երկիր, դարաշրջանից դարաշրջան ոչ միայն տարբեր, փոփոխվող, այլև հաճախ հակադիր են (ինչ ընդունելի և խրախուսելի է մի հասարակությունում, մերժելի ու դատապարտելի է մյուսում)՝ հաստատվում է հենց Էմինի հուշագրության՝ Արևմուտքի և Արևելքի երկրներում տեղի ունեցած դեպքերի, հարաբերությունների այլևայլ նկարագրություններով:

Իրապես, բարու և չարի պատկերացումներն անբաժան են մարդու բնությունից, նրա ձգտումներից, և ձևավորվում են ըստ իր ու իրականության ընթացիկ պահանջների: Այդ պրոցեսում տարբեր ժամանակների ու կարգերի, հասարակական կյանքի հակասությունների վճռական ազդեցությունների անտեսումը մարդուն վերածում էր նախախնամության գերու: Նախախնամությամբ կառավարվող աշխարհում նպատակը գործում է այնքան որոշակիորեն,

որ արդյունքը նախապես հայտնի է և տարերային կամքով քշվող արարածները դուրս են մնում պատմության զարգացման համընդհանուր օրյեկտիվ օրինաչափությունից – այս հայացքի արդյունքը ֆատալիզմին հանգեցնում է, սակայն, մի՞թե դա մարդուն չի զրկում կամքի ազատությունից, որին Էմինը վճռականորեն դեմ էր գնում իր գործունեությամբ:

Եվրոպայի ժողովուրդների նվաճումների հիմքում դնելով իմաստությամբ ընդունված օրենքները՝ Էմինը գրում է. «Նրանց քաղաքները շատ մեծ են, մարդիկ՝ երջանիկ, չեն վախենում սովից ու վտանգներից: Նրանք ունեն գերազանց օրենքներ, որոնք արգելում են մեկին վատություն անել ուրիշին, եթե անգամ նա թույլ է կամ աղքատ»: Նման հարցադրումով աշխարհի՝ անհրաժեշտությամբ բնորոշվող ըմբռնումը և աստվածային նախախնամության հանդեպ հավատը տարանջատվում են: Արարչությունից ի վեր թե՛ բարոյականության, թե՛ իրավունքի անփոփոխության հիմնավորումը (իր տարբերակներով) լոկ Էմինի տեսակետը չէր, այլ՝ XVIII դարի շատ լուսավոր մտքերի: Բայց ըստ նախախնամության սահմանածի՞, թե՞ դրան հակառակ էր դրսևորում մարդն իր էությունը գործնականում: Բարոն դը Մոնտեսկյոն (1689–1755) գրում է. «Մարդը, որպես ֆիզիկական էակ, մյուս բոլոր մարմինների նման կառավարվում է անփոփոխ օրենքներով: Որպես մտացի էակ, նա անդադար խախտում է Աստծո սահմանած օրենքները և փոխում այն օրենքները, որոնք հենց ինքն է սահմանել: Նա պետք է ղեկավարի իրեն, և սակայն՝ նա սահմանափակ էակ է: Նա ենթակա է անգիտության ու մոլորության... Նա հազար ու մի կրքի է ենթարկվում: Նման էակն ամեն բոլոր կարող է մոռանալ իր Արարչին. և Աստված կրոնի պատվիրաններով նրան հիշեցրել է իր մասին: Նման էակն ամեն բոլոր կարող է մոռանալ ինքն իրեն. և փիլիսոփաները բարոյականության օրենքներով ուղղորդել են նրան: Ստեղծված լինելով հասարակության մեջ ապրելու համար՝ նա կարող է մոռանալ իր մերձավորներին. և օրենսդիրները քաղաքա-

կան ու քաղաքացիական օրենքներով վերադարձրել են նրան իր պարտականություններին» (20):

Ուրեմն, ո՞վ է կարգի հրավիրում սահմանափակ, մահկանացու, կրքերի գերի, անգիտության ու մոլորության ենթակա արարածին: Մի շղթայում դնելով այս բառերը՝ շեշտենք Մոնտեսկյոյի զգուշացումը – բանականությունը մարդուն տրված է չափով, որպեսզի նա մնա անգետ ու սահմանափակ և ճանաչողության իր խորդուբորդ ճանապարհով առաջ ընթանա՝ մոլորվելով ու քայլ առ քայլ կողմնորոշվելով: Արդ, Աստված նրան միայն հիշեցնու՞մ է կրոնի (մարդկանց ստեղծած) պատվիրանները՝ բնավ չփորձելով ճիշտ ճանապարհի վրա դնել բախտի քմահաճույքին թողնված մոլորյալին, որին իրականում ուղղորդում են փիլիսոփաները և օրենսդիրներն են հրավիրում իր պարտականությունների կատարմանը: Այստեղ միջնա-դարը, իր Արարիչով և բացարձակ բանականության գաղափարով, դեիզմն անջատում է սահմանափակ բանականությամբ գործող մարդուց: Լուսավորության դարն ընթանում է դեպի իր լրումը: Զննարկումների կենտրոնում է լուսավոր բանականություն հասկացությունը, որը և՛ անհատի (իր կրքերի ու անգիտության զոհ մահկանացու մտացի էակի) ինքնաճանաչողության, և՛ հասարակական կյանքի վերափոխման ու անշրջելի առաջադիմության լծակն է:

12

Ակտիվ բանականության դերն Էմինը շեշտում է իրեն հատուկ սրությամբ – Աստված մարդուն ստեղծելիս գլուխ տվեց և երկու ձեռք՝ գլխի մասին հոգալու: Սակայն եթե ձեռքերը չեն կարող օգնել գլխին, արժե դրանք կտրել: Նա նկարագրում է մարդկանց փաստացի արարքներ որոշակի տեղում և ժամանակում: Ընդհանուր հասկացություններն ու արարքների շարժառիթային կապերի լայն ընդգրկումները ևս անմիջական մարդկային բովանդակություն ունեն և սկիզբ են առնում կոնկրետ իրավիճակներից: Եթե լուսավորականները դարաշրջանին հատուկ երևույթների իրա-

կան պատճառները բացահայտելու ելակետից մարդուն զննում էին բնական, սոցիալական, իրավական հավաստի կացություններում՝ այնուհետև անցնելով ընդհանուր դրույթների ու հանգելով համապարփակ մտքի գերիշխող գաղափարին, ապա էմինն անընդհատ լարվածության, վտանգների մեջ, մարդկային հարաբերությունների, հակասությունների ու բախումների շրջապատույտում ըստ կարելիության յուրացրած Լուսավորական գաղափարներին (որոնք նրա համար ունեին բացառապես գործնական նշանակություն) անդրադառնում էր առիթից առիթ՝ փորձելով, ում կարելի էր, նախապատրաստել առաջադիմական պայքարին: Նրա տեսական սկզբունքներն անտրոհելի են իրական գործունեությունից, որով և որոշակիանում, իմաստավորվում են:

Ում հետ էլ հաղորդակցվելու առիթ լինել, էմինը, դիմացինի հոգեբանությանը բնորոշ թե՛ դրական և թե՛, հատկապես, իր նպատակին խանգարող վնասաբեր կողմերն արագորեն ճանաչելու կարողությամբ, հակազդում էր՝ երբեմն անգամ ավելի սուր կերպով, քան թույլ կտային ազնվական միջավայրում յուրացրած կանոնները: Մարդուն՝ ինչպես նա կա, թափանցող հայացքով տեսնելը (հասարակ, տգետ անձանցից մինչև պետական բարձր պաշտոնյաներ) հրամայական, երբեմն անգամ կենաց-մահու խնդիր էր ոչ միայն անձնական տեսանկյունից: Քանի որ նրա հարաբերությունների առանցքում միշտ ընկած էր ազգի ու հայրենիքի ազատության պայքարի կազմակերպչի առաքելությունը, որևէ վրիպման վնասները կարող էին շատ մեծ լինել:

Պատմական առաջադիմությունը պայմանավորելով առաքինի և լավ բարքերով, անցյալի ու ներկայի նշանավոր անհատներին էմինը ներկայացնում էր իբրև բարոյադաստիարակչական տիպարներ – պատմությունն ու այն կերտողները պետք է դառնային կյանքի յուրահատուկ ուսուցիչներ: Քանի որ էմինն ավելի պրակտիկ էր, քան տեսաբան, և պատրաստ էր զենքը ձեռքին զանգվածների

գլուխ անցած մարտնչելու, նրա ընտրյալ գործիչները լուսավորական գաղափարներով առաջնորդվող արքաներ էին՝ Պետրոս Մեծը, Ֆրիդրիխ Մեծը և Կարլոս XII-ը: Իր բարձր նպատակին հասնելու ճանապարհին ծանր, սև աշխատանքով գոյատևած էմինն իզուր չի բերում Ռուսաստանի կայսեր օրինակը. նա «մեծ ռազմիկ չէր լինի (իսկ նրա երկիրն՝ այդքան օրհնյալ ու բարգավաճ)», եթե չզնար Եվրոպա ու չաշխատեր նաև նավաշինարանում: Դրանից հետո եկավ՝ լի «ամեն տեսակ իմաստությամբ, որի օգնությամբ դարձավ իր երկրի հայրը, տերն ու թագավորը»:

Էմինի համոզմունքով՝ ոչ այնքան զենքի ուժը, որքան արվեստը և իմաստությունն են Եվրոպայի ժողովուրդներին դարձրել նվաճող: Արվեստ ասելով՝ նա նկատի ունի հիմնականում հմտությունը հասարակական գործունեության տարբեր բնագավառներում, իսկ իմաստությունը համարում է ոչ թե զուտ մտային, այլև աշխատանքի ու պայքարի փորձառություն: Առանց իմաստության՝ ազգը ազգ չէ, կույր է ու անբախտ (նա էլնում է Աստծո՝ անսահման իմաստությամբ երկնքի ու երկրի արարման պատումից): Իմաստությունից է բխում ամեն լավ բան, մարդը հզոր չի լինում առանց իմաստության, ոչ էլ իմաստուն՝ առանց արդարության: Թվում է՝ ազգի իմաստությունը նա զատում է աստվածայինից այնպես, ինչպես Մոնտեսկյոն բացարձակ բանականությունը՝ մահկանացու էակի սահմանափակ բանականությունից: Իմաստություն-արդարություն-առաքինության նույնպիսի կապակցությամբ է առաջադրում խնդիրը Մոնտեսկյոն – ձգտել լուսավորել մարդկանց ընդհանուր առաքինությամբ, որը բովանդակում է սերը մարդկության հանդեպ:

Քննելով ռացիոնալիստական մեթոդի սկզբունքները՝ Ռեմեն Դեկարտն ինտուիցիան համարում է հստակ և ուշադիր մտքի ընկալում՝ այնքան հեշտ ու որոշակի, որ տեղիք չի տալիս ոչ մի կասկածի: Այն ծագում է սոսկ բանականության լույսից, քանզի ավելի պարզ ու հավաստի է, քան դեղուկցիան: Ի տարբերություն անմիջական իմացություն

ինտուիցիայի, միջնորդավոր իմացություն դեդուկցիան կորցնում է ճշմարտության հանգելու հնարավորությունը, երբ գիտելիքի դեդուկտիվ կառուցման որևէ օղակ բաց է թողնված: Ընդունելով, որ «բանականությունն ունիվերսալ գործիք է՝ ի գործու ծառայելու ամենատարբեր հանգամանքներում» (21), գիտական գիտելիքի զարգացման մեջ վճռական դերը Դեկարտը վերապահում է բանականությանը. «Այդ բնական լույսը կամ ճանաչողության ունակությունը... երբեք չի կարող վերաբերել մի առարկայի, որը ճշմարիտ չէ», քանզի այդ ունակության միջոցով տվյալ առարկան ընկալվում է հստակորեն ու որոշակիորեն (22): Բնական լույսով հավաստի գիտելիքների հանգելիս «ոչ երևակայությունը, ոչ էլ զգայությունները երբեք չեն կարող մեզ համոզել որևէ բանում, եթե չմիջամտի մեր բանականությունը» (23):

«Պատմության փիլիսոփայության» «Լուսավորություն և հեղափոխություն» գլխում Հեգելը նշում է, որ Դեկարտն առաջինը գիտակցությունն ազատեց այն սոփեստական մտածողությունից, որ ամեն բան դարձնում է տարակուսելի: Կարելի է նաև ասել, որ Դեկարտն առաջինը նախանշեց դարի «Լուսավորություն» անվանումը:

Լուսավոր բանականության սկզբունքով օրենքների ընդունումն առնչելով արվեստին ու իմաստությանը և, միաժամանակ, իրավունքը լիովին չկտրելով հասարակության նյութական հիմքերից՝ Էմինը որպես իմաստություն-արդարության հակադրություն ներկայացնում է արևելյան բռնապետների կամայականություններն իբրև սոփոթության, հետամնացության ու խավարի դրսևորում (բնորոշ օրինակ է արյունարբու Նադիրի՝ նրա նկարագրած ընդունելությունը): Լույսի և խավարի, բարու և չարի հավերժական պայքարում փորձելով բացահայտել հասարակական առաջադիմության, ուստի և ազատության էությունը՝ Էմինը գրում է. «Ճշմարտությունն արևի պես... հաճելի ցուլ է պարզևում ամեն ազնվամիտ մարդու, որ բարի միտում ունի»: Ապա իր հարուստ հայրենակիցների մասին ասում

է. «Երանի՜ թե նրանք պատրաստ լինեն ճշմարիտ գիտելիքի պայծառ լուսաբացն ընդունելու իրենց մութ մտքերի մեջ... և, անասելի տանջանքներ կրելուց հետո, հաղթեն կրոնի ու ազատության թշնամիներին, հաջողություն ունենան թե՛ ռազմական, թե՛ հասարակական գիտելիքի բոլոր ոլորտներում, առաքինի դառնան ամեն առումով, որ կոչվեն ազատ ու իսկական քրիստոնյաներ»:

Աշխարհի բոլոր արվեստներից Էմինը պատերազմի արվեստն է համարում գերադասելին ու ամենաարժեքավորը: Այն ուսանելով միայն հնարավոր կլինի կոիվ մղել ազգի հալածողների ու թշնամիների դեմ՝ «որոնց ձեռքում մենք գերի ենք»: Ռազմարվեստի «անարտահայտելի արժանիքն» է, որ «դրա մասին միշտ խոսում են կայսրերի ու թագավորների ներկայությամբ»: Արժանիք է թե ոչ, օրինաչափ է, որ հենց նրանք են ձեռնարկում, կամ նրանց է առնչվում պատերազմը: Ներքին բիրտ ու անխնա երկպառակության դեպքեր է ներկայացնում Էմինը հատկապես Պարսկաստանի պատմությունից: Արտաքին ճակատում ևս սովորաբար տիրակալներն են ժողովրդին ներքաշում պատերազմի մեջ: Այլ ժողովուրդներին պարտադրելով իրենց կամքը, նրանց ստիպելով հրաժարվել ազատությունից, սեփականությունից, ռեսուրսներից, տարածքից և այլն՝ կայսրերն ու թագավորները հաստատում էին իրենց հզորությունը՝ միաժամանակ թե՛ քաջալերելով, թե՛ իրենց ենթարկելով վասալներին: Հստակ էր, որ մարդկությունը չէր գոյատևելու առանց պատերազմների և նվաճումների: Պատերազմը, ժողովուրդներին դնելով կենաց ու մահու ընտրության առաջ, ռազմարվեստն իրապես դարձնում է հույժ կարևոր՝ գիտելիքի տարբեր ոլորտներ ծառայեցնելով ինչպես հարձակվողի, այնպես էլ պաշտպանվողի նպատակներին: Այսպիսով, պատերազմները նպաստում են գիտատեխնիկական կարողությունների ուժեղացմանը, հանգամանք, որն Էմինի համար որոշիչ կռվան էր՝ կարևորելու լուսավոր բանականության դերն այդ բնագավառում ևս:

Ճշմարտությունը էմինն առնչում է բարուն մույն սկզբունքով, ինչ իրավունքը — արարչության օրենքները սահմանված են Աստծո բարի կամքով: Բարին որպես մախասկիզը դրված է մասն իմացության հիմքում: Ի վերուստ մարդն ուղղված է ազատ կամքով առաքինի գործունեության: Այս դրույթը համահունչ էր առաջադիմության դրական ընթացքի լուսավորական գաղափարին: Օբյեկտի բովանդակությունն արտացոլող ճշմարտությունը նոր, հավաստի գիտելիքի պայծառ լուսաբացի դարում Արարչի նախորդած առաքիմության և ազատության օրենքներով իսկ ծառայում է իրականության վերափոխմանը: Կրոնի և ազատության այս համադրումն օտար չէ դեիզմին, դեպի որը կողմնորոշված էր մասն եկեղեցին քրիստոնեական կրոնից անջատող ու քննադատող էմինը: Հենց այդ իմաստով ազատ ու իսկական քրիստոնյաներ հայերը դառնալու էին՝ մահմեդական Թուրքիայի և Պարսկաստանի լուծը պայքարով թոթափելուց և անկախ պետականություն հիմնելուց հետո: Ճշմարտությունը, որպես բովանդակային ինքնահամապատասխանություն, ժողովրդին նախապատրաստելու էր այդ պայքարին՝ հանուն ազգապաշտպան պետության կառուցման:

Բովանդակային ինքնահամապատասխանությունը էմինն ընդունում է որպես առկա արարչագործություն. «Աստված ստեղծել է ամեն ինչ ըստ բնության», բնության, որի գիտական ուսումնասիրությունը տալիս է «շատ զարմանալի և օգտակար գործեր անելու» հնարավորություն: Վերին բանական նախապատճառի սահմանածից այս կողմ՝ օբյեկտիվ իրականության իմացության ողջ ընթացքն արդեն գիտելիքի նշանակալիության ապացուցումն է դրա գործնական յուրացումով և իրականության համապատասխան փոփոխությամբ: Այստեղ արդեն նախախնամությունը տեղ չունի, և ճշմարտությունը զուգորդված է օգտակարությանը: «Ճշմարիտ գիտելիքը» էմինն արժևորում է օգտակարության չափանիշով — Եվրոպայի ազգերը «մարդ են ուղարկում աշխարհի բոլոր կողմերը, մեծ ծախսով,

որպեսզի իմանան երկրի վրա կամ գետնի տակ գտնվող ամեն բան, և դրանից շահում են նրանց իմաստությունն ու օրենքները»:

«Ամեն ինչ ըստ բնության» բովանդակային ինքնահամապատասխանությունն ինքնին ենթադրում է կազմակերպված-համակարգված բնության պատճառահետևանքային կապերի և կեցության առավել ընդհանուր օրենքների հայեցողություն՝ XVII–XVIII դարերի գիտության նվաճումների հիմքի վրա: Էմինի ազատագրության ծրագիրը տոգորված է այդպիսի հայեցողությամբ: Պատմական ամեն դարաշրջանում յուրաքանչյուր ոք վաղ թե ուշ ինչ-որ չափով յուրացնում է ստեղծագործական մտքի նվաճումները տարբեր բնագավառներում: Նոր գիտական գաղափարների տարածումով աշխարհի մասին մարդկանց պատկերացումների փոփոխությունները և աշխարհայացքի ձևավորումը հավաստի գիտելիքներով հանգեցրին բնության համապատկերի և մարդու դերի ու տեղի նոր ըմբռնման: Բանականության բարձրագույն և ամենաարդյունավետ գործունեության ձևն այլևս գիտական ճանաչողությունն է:

XVII դարում ռացիոնալիզմի փիլիսոփայության և բնագիտության զուգահեռ զարգացումը հետագայում ընթացավ գիտության էզոտերիկ լեզվի փոխադրմամբ էլզոտերիկ լեզվի, որ իրականացրեց առավելապես XVIII դարի լուսավորական փիլիսոփայությունը: Դրա բնորոշ օրինակն է Պոլ Անրի Հոլբախի (1723–1789) «Բնության համակարգը» (1770), որի նպատակն էր, ինչպես ինքն է գրում նախաբանում, «մարդուն վերադարձնել բնություն, նրա համար թանկ դարձնել բանականությունը, այնպես անել, որ նա պաշտի առաքիմությունը, ցրել այն խավարը, որ նրանից թաքցնում է վստահորեն դեպի իր ուզած երջանկությունը տանող միակ ճշմարիտ ճանապարհը»: Եվ ապա՝ «Մարդը բնության ստեղծագործությունն է, գոյատևում է բնության մեջ, ենթակա է նրա օրենքներին, չի կարող ազատվել նրանից, չի կարող անգամ մտովի դուրս

գալ նրանից... Մեկի համար, որին ստեղծել և շրջապատում է բնությունը, չկա ոչինչ բացի այն մեծ ամբողջից, որի մասն է ինքը կազմում և որի ազդեցությունն է կրում» (24):

Մեծ ամբողջի օրենքները Հոլբախը քննում է մատերիայի բնագիտական մեկնաբանության ելակետից: Բնության մեջ չկա մի ատոմ և մոլեկուլ բացարձակ դադարի մեջ. շարժումը բխում է նրա գոյությունից նույնքան անհրաժեշտաբար, որքան տարածությունը, մասսան, ձգողականությունը, ծանրությունը, իներցիան և այլն: Անընդհատ փոխազդեցության, փոխկապակցված շարժան մեջ ամեն ինչի ձևափոխումը, կարգավորումը, միավորումը և քայքայումը, կազմավորումը և ավերումը բացատրվում են Նյուտոնի մեխանիկայի օրենքներով. «Տիեզերքում ամեն ինչ տեղի է ունենում մեխանիկական օրենքներով, ըստ մատերիայի հատկությունների, զուգորդումների ու ձևափոխությունների» (24, II.13):

Հասարակական կյանքի օրինաչափությունները ևս Հոլբախն ընդունում էր որպես բնության համընդհանուր օրենքների վերափոխումներ: Լուսավորությանն ընդհանրապես հատուկ էր փիլիսոփայության այսպիսի բնագիտացումը՝ ձևավորված XVII դարի մեխանիցիզմի հիման վրա (Դեկարտը կենդանուն համարում է հոգուց զուրկ մեքենա, Լամետրին մեքենաների շարքն է դասում նաև մարդուն, ըստ Լայբնիցի՝ կենդանի արարածների օրգանական մարմինն աստվածային մեքենա է կամ բնական ավտոմատ):

Էմինի պատկերացումներն աղոտ արձագանքներ են բնության և շարժման համընդհանուր օրենքների բնափիլիսոփայության: Հոլբախի՝ անընդհատ շարժման մեջ ամեն ինչի ձևափոխման մասին մտքերի և «Մարդը չի կարող անգամ մտովի դուրս գալ բնությունից» դատողության այլափոխված արտահայտությունն են, կարծես, Էմինի հետևյալ տողերը. «Շատ հեշտ չէ կատաղի վագրին գառի պես ընտելացնել: Բնությունը մեծ արգելք է, և նրա զորությունը՝ անսասան: Ո՛չ արվեստը, ո՛չ հմտությունը չեն կարողանում

այն փոխել, մինչև որ ժամանակի ընթացքում մասերի է բաժանվում և դարձյալ խոնարհ փոշի դառնում»: Եվ ի լրումն՝ նրա մյուս ձևակերպումը. «Հակաբնական ցանկացած օրենք կամ սովորույթ քաղաքներ կավերի, թագավորություններ կամայացնի՝ հետևում թողնելով միայն վայրի, ասես երբեք մարդկանցով չբնակեցված անապատ»:

Իհարկե «չեն կարողանում փոխելը», որ վերաբերում է ծագման, զարգացման, քայքայման բնական պրոցեսին, չպետք է կարդալ տառացի՝ նույնացնելով հասարակական երևույթներին, թե չէ այն արմատապես կհակասի ազատագրական պայքարով հայ իրականության վերափոխման Էմինի անսասան դիրքորոշմանը: Դա պարզապես, ինչպես նշեցինք, կազմակերպված-համակարգված բնության պատճառահետևանքային կապերի և կեցության հաստատունության վավերացում է:

Բուն խնդիրն Էմինի հատուկ, նրա դեիզմին տատանվող բնույթ հաղորդող աստվածայինի և բնականի նույն երկվությունն է: Կյանքի ընթացքի ընկալումը միավորում-քայքայումով ինքնին ենթադրում է, որ «ոչինչ կատարյալ չէ չորս տարրից բաղկացած այս աշխարհում: Միայն վերևում գտնվող Աստված է կատարյալ»: Այո՛, ոչինչ կատարյալ չէ, սակայն ինչպե՞ս է Էմինի լուսավորական աշխարհայեցությունն սպրդում չորս տարրերի հնավանդ սկզբունքը, եթե սոսկ պատկերավոր նշանակությամբ չէ ասված (Միտք-դեմիուրգը ստեղծել է կոսմոսը կրակ, ջուր, հող, օդ տարրերից [Պլատոն, Տիմեոս, 47e-48c], կամ, ըստ Հովհան Ռոտմեցու [1315-1386]՝ հող, կրակ, ջուր, քամի չորս տարրերի միջև մարդկային հոգին լույս է): Մյուս կողմից, տարրեր առիթներով Էմինի հիշատակած Աստված-կատարելությունը՝ իր գործերի անքննելիություն-անճանաչելիությամբ ու բացարձակ վերացականությամբ, որ անհամատեղելի է բնության համընդհանուր օրինաչափությունների և աշխարհի ճանաչման հետ, սոսկ ձևական նշանակություն ունի նրա ազատագրական ծրագրում: Քանզի ինքը՝ Էմինը, չէր կարող չտեսնել, որ Վերին Կա-

տարյալը, գոնե աշխարհն արարելուց հետո, այլևս չի խառնվում մարդկանց գործերին և պատճառը հենց դա է, որ իր կյանքի գիրքը «լի է երկոտանի վայրենի հրեշներով»: Այլ կերպ ասած՝ Էմինի աշխարհայացքային ճեղքվածքը հետևանք էր անհետևողական դեիզմի:

13

«Ես... եկել եմ՝ ձեռք բերելու արժանապատվություն, ուսանելու իմաստություն, ճանաչելու աշխարհը և կոչվելու անհովիվ ոչխարների մման հայ ազգի կատարյալ ծառա».
հորը տված Էմինի այս բացատրությունն առաջ է բերում, ժամանակի թելադրանքով, նրա մտադրության ծագումից մինչև ազգանվեր առաքելության հաստատմանն առնչվող հարցեր: Հայրը, արևելյան բիրտ միջնադարում թաղված իր հնավանդ պատկերացումների, նախապաշարումների աշխարհում, Անգլիա մեկնելու ցանկության համար որդուն վիրավորել էր ու երես թեթել նրանից («կարծես խոսում էի դավաճանության մասին»): Նույնն էր հորեղբոր վերաբերմունքը, և սա լուկ հայրերի ու որդիների անվճռելի հակադրություն չէր, այլ երկու դարաշրջանների անխնա բախում՝ մի ընտանիքի ներսում: Հայրը մինչև իսկ գրել էր. «Իմ որդի Էմինի համար արդարացում չկա, եթե նա իր ազգի համար չխաչվի գլխիվայր, ինչպես Պետրոս առաքյալն էր խաչվել»: Միայն ընտանեկան այս բախումը բավական է՝ Էմինի սխրանքը պատկերացնելու համար. «Իմ կրած բոլոր տանջանքներից ու նեղություններից հետո նոր սկսում եմ այնպես անել, որ նրա և քո անունը փայլատակի, իսկ դուք ամենքդ ուզում եք, որ վերադառնամ. տգետ եկել եմ, տգետ էլ պիտի հետ գամ»: Վերադառնա՝ գլխիվայր խաչվելու. խավարի մեջ խաբխափող բիրտ տգիտությունը մահ է նյութում:

Անցյալի կարծրատիպերը փշրվում էին Լուսավորության գաղափարների հարվածների տակ: Աշխարհաճանաչման էմպիրիկ (Բեկոն) և ռացիոնալիստական (Դեկարտ) հարացույցների ձևավորումով (իմացության մակա-

բերումը մտքի՞ց, թե՞ փորձից տարակարծությամբ հանդերձ) հաստատվեց բնության իսկ գործիքներով հասարակության և մարդու սկզբունքային ճամաչողության համոզմունքը: XVII–XVIII դարերի գիտության և տեխնիկայի բուռն զարգացմամբ՝ մտավոր կողմնորոշումներն ուղղվեցին ոչ միայն դեպի առկա-հավաստի, այլև չիրացված հնարավորությունների ճամաչողություն՝ համապատասխան հիմնավորումով: Ֆրենսիս Բեկոնը կյանքի վերջին շրջանում հեռաքափանց հայացքով կերտեց «Նոր Ատլանտիդան» (1623–24)՝ գիտության կազմակերպման և հաջորդ դարերի գիտատեխնիկական նվաճումների մի պատկեր: Արդյունաբերության և հասարակության աննախընթաց զարգացումն արդեն ուղղակիորեն պայմանավորված էր գիտատեխնիկական առաջընթացով: Պատմական այդ առաջընթացն ապրողների գիտակցության մեջ իրականության տարբեր ոլորտների նորագույն կառուցվածքի, գործառույթների համակարգված պատկերացում էր ձևավորում: Էմինի համոզմունքը, որ «եթե մի բան գիտելիքի վրա չի հենվում, անգամ եթե շատ ամուր ու վեհ բան է, ասես կառուցված լինի ավազի վրա», դարին հատուկ՝ գիտելիքի վճռորոշ նշանակության ընդգծումով, նաև այդ արդիական-առաջադիմական որակի վկայություն է:

Եթե անգամ թվա, որ գիտելիքի դերը չափազանցվում է, դարձյալ դա Լուսավորական շարժման առավելությունն էր: Գիտատեխնիկական նվաճումների պատմական այդ փուլում փոխվել էին էվոլյուցիոն առաջընթացի իմացաբանական չափորոշիչ նախադրյալները և մեթոդաբանական սկզբունքները: Հետազոտման նոր միջոցներով, նոր լույսի տակ տարբեր ոլորտների ուսումնասիրությունն ընթանում էր աշխարհի նախկինից տարբեր, որակապես նոր պատկերի ամբողջացմամբ: Էմինի օրինակով իսկ երևում է, որ այդպիսին էին գերիշխող պատկերացումները: Արևելքից «տգետ եկած» երիտասարդը կարճ ժամանակում յուրացրեց առաջադեմ գաղափարներն այնպես, որ, ինչպես տեսանք, նրա խոսքերը Լուսավորության որոշ մեծ ներկայա-

ցուցիչների սկզբունքներին համադրելիս ականա հարց է ծագում. նրանցից ու՞մ և ո՞ր աշխատություններն էր նա ընթերցել: Հարցի գոհացուցիչ պատասխանը չենք ստանա հուշագրությունից, որում թվարկված է ընդամենը մի քանի գիրք: Իր մտավոր պաշարը նա հարստացրել էր նաև անգլիական ազնվական միջավայրում, մասնավորաբար՝ իր պաշտելի Էլիզաբեթ Մոնթագյուի սալոնում:

Այսպիսով, Էմինն անձամբ ըստ կարելիության իրականացրել է կրթության ու դաստիարակության իր խնդիրը. «Կրթության սեղանը բաց է ամեն մարդու և ամեն ազգի առաջ՝ ձրի վայելելու և ճաշակելու համար, ի տարբերություն հին աշխարհի»: Էմինը լուսավորականների նման աներկբայորեն մերժում է հասարակական կյանքի արատները, բարոյական նորմերի չարարկումն ու տգիտությունը և ընդունում առաջադիմության նախապայման կրթության ու դաստիարակության անհրաժեշտությունը:

Նոր աշխարհայացքի ծագմանը, ձևավորմանը և տարածմանը զուգընթաց՝ մտածող մարդիկ համակվեցին Լուսավորական գաղափարներով՝ ըստ նորովի հետազոտված իրականության և բանականությամբ կառավարվող աշխարհի սկզբունքի: Թոմաս Կունի (1922–1996) պարզաբանմամբ՝ իրենց հայացքների և հետազոտությունների ուսանյակով աշխարհը դիտող գիտնականներն ասես գործ ունենալին այլ իրականության հետ. «Լավուազյեն... թթվածին տեսավ այնտեղ, որտեղ Փրիսթլին հրագերծված օդ էր տեսել և որտեղ ուրիշներն առհասարակ ոչինչ չէին տեսել: Բայց, սովորելով թթվածին տեսնել, Լավուազյեն պետք է փոխեր իր կարծիքը նաև շատ ուրիշ՝ ավելի հայտնի նյութերի մասին: Նա, օրինակ, պետք է բարդ կազմությամբ հանքաքար տեսներ այնտեղ, որտեղ Փրիսթլին ու իր ժամանակակիցները սովորական հող էին տեսել: Եղան նաև ուրիշ նման փոփոխություններ: Թթվածնի հայտնագործության արդյունքում Լավուազյեն առնվազն այլ կերպ էր տեսնում բնությունը: Եվ քանզի չկա այլ բացատրություն հիպոթետիկորեն սահմանված այդ բնության

համար, որը նա «այլ կերպ էր տեսնում», տնտեսման սկզբունքը մեզ կստիպի ասել, թե թթվածինը հայտնագործելուց հետո Լավուազյեն աշխատում էր այլ աշխարհում» (25):

Իրենց հայտնագործություններով առաջինն այլ աշխարհում հայտնված գիտնականներից հետո այդ պրոցեսում աստիճանաբար ընդգրկվում էին մտածող անհատներն ու առաջադեմ անձինք: Առաջադիմական հայացքների համակարգի կազմավորումն ընթանում էր որոշակի հարացույցի շրջանակներում, նորացող չափանիշներով ու երկրե-երկիր՝ ամրանալով որպես պատմական տվյալ շրջանին բնորոշ մտայնություն: Այնպես որ, արդեն հասարակայնորեն ընդունված գաղափարներով տոգորված տարբեր ազգերի գործիչները յուրովի կրկնում էին դարի մեծագույն մտածողներին՝ երբեմն անգամ ծանոթ չլինելով նրանց աշխատություններին: Դրանով է պայմանավորված նաև Էմինի լուսավորական համոզմունքների ընդհանրությունն ու նմանությունն այն լուսավորականների արծարծած գաղափարներին, որոնց գրքերը կարող է և կարդացած չլինել: Իսկ նոր գաղափարները միշտ էլ դժվարությամբ են հարթել իրենց ճանապարհը, հայտնագործող-տարածողները դեմ են առել ուժեղ դիմադրության, հաճախ և պատժվել են իրենց սխրանքի՝ ճշմարտության լույսը տարածելու համար: Տեսանք, թե, շատերի նման, իր կյանքը հայրենակիցների ազատությանը նվիրած Էմինը ևս, նրանցից ոմանց սաղրանքով, ինչ վտանգների է դեմ առել:

Լուսավորության առաջադիմական-վերափոխիչ դերի անվերապահ համոզմունքով Էմինը կարծում է, թե քաղաքակրթական բարձր մակարդակի վրա գտնվող երկրները, տիրելով հետամնաց երկրներին ներմուծում են առողջ օրենքներ ու սովորույթներ և քաղաքակրթում նվաճվածներին՝ նրանց դարձնելով ազատ, անկախ ու բարեկեցիկ. «Կուգեի խեղճ Հայաստանն այնքան երջանիկ լինել, որքան Հնդկաստանն է, և նրան տիրել անկողմնակալ ու անկեղծ սրտով անգլիացի ազգը»: Էմինն իդեալականացնում է «հռչակավոր հանրապետական ազգին», նրա օրենքները

համեմատում ողջ տիեզերքով իր փառահեղ լույսը տարածող արևի հետ: Մինչդեռ, ինչպես ինքն է պատմում, հայկական երկու մավ գրավելուց ու Անգլիա տանելուց անմիջապես հետո անգլիացիները դրանք բռնագրավեցին «որպես թշնամու սեփականություն... փաստաբանը պաշտպանական ճառում ասաց. «Ինչպե՞ս է հնարավոր, որ Կալկաթայի բնակիչ հայ վաճառականներն այդքան հսկայական դրամի տեր լինեն»»: Այս անհեթեթ հարցադրումով դատավորը մեղադրել էր հայերին իբրև Անգլիայի թշնամի ֆրանսիացիների գործակալների: Ըստ որում, այդ մավերի պատճառով մեծ գումար էր կորցրել մահ Էմինի հայրը: Դա այլ բան չէր, քան խաբեական դատավարությամբ ուրիշի սեփականության բռնագավթում:

Թեև Էմինն օժտված էր պատմական հեռանկարի չափանիշներով ազատագրական գաղափարախոսություն կառուցելու բացառիկ ձիրքով, նա զուր հույսեր էր տածում անգլիական «անկողմնակալ ու անկեղծ սրտի» հանդեպ: Նրա մտքով չէր անցնի, թե ինչ քաղաքականություն կարող էր վարել այդ «անկողմնակալ անկեղծը» Հայաստանում: Լուսավոր բանականության անկասելի հնարավորությունների գաղափարին կառչած՝ նա գրում է. «Ազնվամիտ եվրոպացիները... հատկապես անգլիացիներն ու ֆրանսիացիները... ուզում են, որ ողջ մարդկությունը նախանձախնդիր կերպով հետամուտ լինի գիտելիքին, ստանա հասկացողության լույսը, իր մտքից վանի խավարը... կարողանա տեսնել ու տարբերակել բարին չարից»:

Այս համոզմունքը հենված չէր միայն Էմինի լուսավորական հայեցության ու եվրոպացիների փրկչական դերի հավատի վրա: Նա վստահ էր, որ հայերը, իրենց հերթին, սպասում են Եվրոպայի քրիստոնյա թագավորների գալստյանը և անհավատների լծից ազատվելուն: Մակայն, իր համոզմունքով տարված, նա անտեսում էր, որ երկրների հարաբերություններում գլխավոր շարժիչը շահն է, ուստի աշխարհի առաջավոր գիտատեխնիկական նվաճումներով ու զարգացած տնտեսությամբ աչքի ընկնող երկրներն

իրենց կարողությունները բնավ չեն կամենա ծառայեցրել ողջ մարդկությանը լուսավորելու և բարին հաստատելու՝ իրենց համար անօգուտ առաքելությանը, այլ կհետապնդեն մարդու բնությանն ու բանականության Լուսավորական ըմբռնմանը հակադիր նպատակների: Քանզի ո՛չ անհատի կրթությունն ու դաստիարակությունը, ո՛չ էլ մարդկության իրական ու թվացյալ կապվածությունն առաքինությանը, բարուն ու գիտելիքին այդպես էլ չէին հանգեցնելու բանականության արքայությանը:

Իր միամիտ համոզմունքով տարված Էմինը կպատկերացնե՞ր, թե «անկեղծ սրտով» անգլիացին ինչքան դաժան էր լինելու հայերի հանդեպ: «Համայնքների պալատի անդամ Բեքստոնը, դեռ առաջին աշխարհամարտի նախօրյակին Հովի. Թումյանի հետ զրույցին... զգուշացրել է, թե «Անգլիացիները մուսուլմանական աշխարհի հետ կապված մեծ շահեր ունեն, և երբեք չհավատաք, թե Անգլիան կարող է պաշտպան կանգնել հայերին»»: 1918 թ. Արցախ-Ջանգեզուրում անգլիացիները բացահայտորեն պաշտպանել են ադրբեջանցի մականվանված արնածարավ ասպատակիչներին, որոնք միայն մի բնակավայրում «սրի քաշեցին անգեն-անպաշտպան բնակչությանը, կողոպտեցին, ավերեցին տները: 700 շունչ հայ բնակիչներից հազիվ 11 տղամարդ և 87 կին ու երեխա փրկվեցին... անգլիական միսիայի ներկայացուցիչները Շուշվա բերդից անտարբեր դիտում էին օր-ցերեկով իրականացվող ոճիրը: Իսկ նրանց զորքը հսկում էր քաղաքից ելնող ճանապարհի վրա, որպեսզի Շուշվա հայ զինվորականությունն օգնության չգնա յուրայիններին»: Հաջորդ օրերին սպանող շարունակվել է այլ գյուղերում (26, էջ 58-59. անգլիացիների ցեղասպանական դերին ավելի մանրամասն կարելի է ծանոթանալ գրքի նախորդ և հաջորդ էջերում):

Վերադառնալով, սակայն, XVIII դար: Աժխտելի էր անգլիական գաղութատիրության առավելությունը պարսկական և հատկապես թուրքական հետամնաց, բարբարոս, արյունարբու բռնատիրությունների համեմատ – խեղճ հա-

յերին «ստրկացրել են կրակապաշտները (կամ պարսիկները), անողոք արաք մահմեդականներն ու վայրենի թաքարները»: Եվրոպա թուրքերի թափանցումով Կոստանդնուպոլսի անկման պատճառն էմինը համարում է «ահափոր եկեղեցական վեճերը» (քաղաքի պաշարման ժամանակ անգամ աստվածաբանները տարված էին իրենց վեճերով): Սակայն իհարկե, դա չէր կարող, նրա իրավացի բնութագրումով՝ «ամենաանարգ ու քամահրելի թուրքերի» հաղթանակի պատճառ դառնալ:

14

Էմինի պատկերացմամբ՝ հայ քրիստոնյաների երջանկությունը, բոլորին տրված բնական իրավունքով, ապահովելու էր ազատագրված Հայաստանի լուսավորյալ, բացառիկ իրավունքներով օժտված միապետը: Նրա առաջադրած բանականություն-ազատություն-երջանկություն բանաձևը հասարակարգի վերակառուցման Լուսավորական գաղափարաբանության անկյունաքարերից էր: Ժողովրդի երջանկությունն ու դժբախտությունն առնչելով անձնական և հասարակական շահերի համապատասխանությանը՝ Կլոդ Ադրիան Հելվեցիուսը (1715–1771) գրում է. «Ստրկության վերացման շնորհիվ է, որ ազգերը վերականգնեցին իրենց ուժերը և զգացին նոր կյանքի շունչը: Ավելի լուսավորյալ խիզախությունը կրկնապատկեց նրանց եռանդն ու բազմապատկեց նրանց երջանկության աղբյուրները» (27): Նախապաշարման շղթաներով կապված տգետ մարդն է ստրուկ, ամփոփում է Հելվեցիուսը:

Քրիստոնեական-աստվածաբանական երկնքից ու հանդերձյալ աշխարհից երջանկությունը փոխադրելով երկրի վրա՝ լուսավորական եվդեմոնիզմն այն հռչակեց մարդկային օգտակար գործունեության վերջնական նպատակ: Միայն Աստված ունեցողը կարող է երջանիկ լինել. երջանկության աղբյուրն անանցողիկն է, ասում էին քրիստոնյա աստվածաբանները: Հերքելով այդ պատրանքը՝ լուսավորականներն ասում էին, որ, հասու լինելով իրա-

կան, երկրային կյանքի իմաստությանը, գիտելիքների առաջադիմությամբ մարդիկ կպաշտպանեն բոլորի ընդհանուր և յուրաքանչյուրի առանձին երջանկությունը. «Երջանկությունը միայն Աստծու մեջ է, ասում էին Օգոստինոս Երանելին, Թովմա Ակվինացին և քրիստոնյա շատ աստվածաբաններ: Երջանկությունը հնարավոր է միայն նրանց համար, ովքեր հասկացել են, որ Աստված չկա, ասում են մատերիալիստները և աթեիստները՝ սկսած եթե ոչ Էպիկուրոսից, ապա Լամետրիից» (28):

Ազատությունն է երջանկության առաջին անշեղ նախապայմանը: Էմինն իրեն երջանիկ է համարում, չնայած «ո՛չ մեծ մարդ է, ո՛չ էլ հարուստ, սակայն հավատում է, թե ազնիվ է»: Նա այս բանն ասում է բառիս բարձր՝ ազնվական իմաստով, քանզի գոհ է նույնքան, որքան մեծ իշխանները: Ստրկությունից ազատվելուց հետո միայն Արևելքի խեղճ քրիստոնյաների «երևակայական հանգստությունը կփոխարինվի իրականով»: Երջանկության և ազատության առաջնայնության Էմինի տեսակետը որոշակիորեն պայմանավորված է «խեղճ քրիստոնյաների» (որոնց թվում՝ և հայերի) ստրկական վիճակով: Ամեն որոշակիություն՝ իր ճշմարտությամբ՝ Եվրոպայի ժողովուրդներն ապրում էին Հելվեցիուսի նշած նոր, ստրկությունից ազատ կյանքը, իսկ Արևելքի խեղճ քրիստոնյաների համար այդ կյանքը հորիզոնից այն կողմ էր, և առջևում սպասվում էր ազատագրական երկար, մեծ ու ծանր պայքար:

Առաքինության, ազնվական ոգու վերականգնումով հայոց թագավոր ունենալու իդեալն իր ուղին պիտի հարթեր քաջությամբ. «Առաքինության որդին քաջությունն է, և առանց առաքինության քաջություն չի լինում, քանզի ինչպես որդին է սերում հորից, այնպես և քաջությունը՝ առաքինությունից»: Ինչու՞ էր հայությունն անթագավոր այն դեպքում, եթե նույնիսկ մրջյունները թագավոր ունեն: Այս ձևի մեջ անգամ Էմինի հարցադրումը բացում է երևույթի բուն պատճառը: Մրջյուններին հատուկ է իրենց հասարակության արտակարգ կազմակերպվածությունը, տեղա-

շարժվելու, բնակավայր փոխելու, բազմազան պաշարներ օգտագործելու կարողությունը: Տասնյակներից հասնելով մեծ տարածքներ գրավող միլիոնավոր առանձնյակների գաղութների՝ մրջնային ընտանիքը բաժանվում է բանվորների, զինվորների և «մասնագիտացած» այլ խմբերի, որոնք անխոտոր աշխատում են որպես միասնական ամբողջություն՝ կանգ չառնելով դժվարությունների առաջ: Իրար միջև մշտական կապերով նրանք ի գործ են բարդ խնդիրներ լուծել: Կենսաբանական լուսաբանմամբ՝ մրջյունների անդադար, անձնագոհ աշխատանքը համուն իրենց ընկերակցության դրված է նրանց էվոլյուցիոն գեներտիկ կողմ: Դրանց հետ համեմատելով մարդկային հասարակությունը՝ Էմինը շեշտում է վերջինիս անկման բուն պատճառի բացահայտման անհրաժեշտությունը: Բանականությամբ օժտված մարդը, ի տարբերություն մրջյունների, գործում է թե՛ հանուն, թե՛ ընդդեմ հասարակության: Նա պատրաստ է իր քմահաճությին զոհաբերելու անհատների, խմբերի և նույնիսկ սեփական ազգին: Հենց ներքին ուժերն են, որ ահռելի վնասներ են հասցրել որոշ ազգերի՝ ներառյալ հայերին: Դրա հիմնական պատճառը զարգացած պետականությանը հատուկ բարձր կազմակերպվածության բացակայությունն է, ինչի մասին Էմինը ծայրահեղ դաժնությամբ ասում է. դուք իրար չեք սիրում, պատիվ չունեք, արհամարհելի եք, անմախանձախնդիր, փողամոլ, և ձեր ազգը պառակտված է...

Այս հուսահատական վիճակում, իրապես, ապագա կայուն պետականություն կարող էր ստեղծվել միայն բացառիկ իրավունքներով օժտված, լուսավորյալ միապետի գլխավորությամբ: Թե որքան էր հիմնավոր Էմինի այս պնդումը, առանձին քննարկման խնդիր է: Պարզ է միայն, որ պատմական տվյալ իրադրությունում Շահամիրյանների առաջարկած ժողովրդավարական ազատություններով (որոնց բոլորովին անպատրաստ էին խավարում թաղված և իրենց առաջադեմ ներկայացուցիչների հանդեպ հաճախ անհաշտ հայերը) հազիվ թե հաջողվեր իրագործել մեծ

նպատակը: Ազգային ուժեղ կազմակերպվածության բացակայության այդ իրավիճակի հետևանք էր նաև ախտավոր օտարամոլությունը: Մինչ բուրքերի «ավազակային, դիվային օրենքը երբեք թույլ չի տալիս քրիստոնյայի արյուն թափելու համար» անգամ պատժել մահմեդականին, եկեղեցու որոշ հայրեր «գիշեր-ցերեկ աղոթում են մահմեդականների իշխանությունը երկարաձգելու համար»:

Ըստ Էմի Աբգարի ծանոթագրության՝ մի հոգևորական բացատրել է, թե կղերականներն այդ ժամանակ գերադասում էին ժողովրդին պահել մահմեդականների տիրապետության տակ՝ վախենալով վրացիների կամ ռուսների իշխանությունից: Այդպիսով, իբր, կզրկվեին ազգային եկեղեցուց: Քանի որ Էջմիածինը Միմեոն կաթողիկոսի գլխավորությամբ դրան հակառակ քաղաքականություն էր վարում, խոսքը, հավանորեն, վերաբերում է Թուրքիայում և արևելյան այլ երկրներում գործող որոշ կղերականների: Հայությանն օտարերկրյա բռնակալների պատճառած անթիվ դժբախտություններին զումարվում էին այդպիսի «խորամանկ սրբազան եկեղեցականների» հասցրած հարվածները: Նրանք հայերին զրկել են բնատուր խելքից – այս ձևակերպումով Էմինը կրկնում է, որ բանականությունն ամենահաղթ է, և դրա կորստով է ժողովուրդը դատապարտվում ստրկության: Թերևս այդ համոզմունքն է նրան դրդել, պատմական Հայաստանի բարձր քաղաքա-կրթության փոխարեն (որին մասամբ տեղյակ էր գոնե Մովսես Խորենացու «Հայոց պատմություն»-ից), խոսելու հայության «բնատուր խելքի» մասին:

Անհնար է ազատագրվել, մինչև աշխարհիկ մարդիկ ևս «իրենցից չթոթափեն Մոհամադին հավատացողներին նվերներ տալով փող դիզելու և աղքատների տերը դառնալու ստոր փառասիրությունը»: Եթե դրա քառորդն իրենց զավակների կրթության վրա ծախսեին, «կկարողանային բանական արարածին վայրի գազանից տարբերել, բազմապատկել օգտակար բույսերը և քաղհան անել մոլախոտերը»: Օգտակարը բազմապատկելը և «քաղհանը»

մարդկանց կազատեին գերբնական ուժերի միջոցով բնության ու մարդու վրա ազդելու ցնորական փորձերից (ասենք՝ աղոթքով չարը խափանելուց, անձրև առաջացնելուց կամ հիվանդին բուժելուց):

Չափազանց օգտակար էր լինելու բնաշխարհի էական կողմերի ու կապերի ճշմարիտ ճանաչումը: Բնականի և օգտակարի կապը Լուսավորությանը տալիս էր գործնական բնույթ, որը հատուկ էր նաև Էմինին և Հայաստանն ազատագրելու նրա ծրագրին: «Քաղիանի» պահանջն ինքնին ենթադրում էր նախ մտքի զերծում մոլախոտերից (դեռևս Ֆրենսիս Բեկոնն էր պահանջում զինվել ճշմարիտի մուտքը խանգարող կուռքերի և կեղծ հասկացությունների դեմ): Էմինի ազատագրական ծրագրում ազգի և հայրենիքի ապագան կազմակերպվելու էր գիտելիքի ուժով իրականության խեղաթյուրված, առասպելածին, կորստաբեր պատկերացումներն ու կեղծ հասկացությունները ցրիվ տալու և բնականի ու բանականի միավորմամբ որոշակի նպատակային մղումների ամբողջական ու սկզբունքային կազմակերպման միջոցով:

Պատկերավոր լեզվով նոր պետությունը նմանեցնելով գեղեցիկ լամպի և դրա պահպանումը կապելով սպասավորների իմաստության հետ՝ Էմինն ասում է, թե եվրոպացիներն այնպես են անում, որ լամպը լույս տա ամբողջ գիշեր, իսկ ասիացիներն ու աֆրիկացիները բարգավաճ ժամանակ խելքները կորցնում, ընկնում են ամեն տեսակ արատների մեջ: «Լույսը մարում է, և համակ տումը՝ մթնում: Ապա սուրը ձեռքին գալիս է թշնամին, կոտորում նրանց և նվաճում նրանց ողջ տիրույթը»: Հայերի մտքի պարզունակությունն ու տկարությունը, ազգի «սկզբնավորումից մինչև իր դժվարին նախաձեռնության ժամանակը», Էմինին հիշեցնում են «մանուկների, որոնց պարտադրվել է իրենց եկեղեցու սրբազան վարդապետությունը»:

Կրոնական դոգմաներով և ֆեոդալական ստորակարգությամբ վերից վար պարտադրված՝ մտքի խակությունն ու խավարը բանականության լույսով, ինքնուրույն մտածո-

ղությամբ օժտված անհատի քննական հայացքով վանելը և իմացության խորացումը վարից վեր՝ Էմինի համար ազգի պաշտպանության զենք էր: Այն պետք էր սկսել մտքի մոլախոտերի քաղհանով և լույսի աղբյուրն անընդհատ վառ պահելով: Բնության օրինաչափությունների փորձնական բացահայտումներով հանգելով գիտական գիտելիքի ու դրա հիման վրա կանխատեսումներ անելու հնարավորությանը՝ Լուսավորությունն անճանաչելի և ճանաչելի ճանփաքաժնում Աստծո անքննելի գործերը դեիզմի ուսմունքով անջատեց իրական աշխարհի քննելի գործերից:

Այսպիսով, համաշխարհային մտքի զարգացման պատմության մեջ վճռական քայլ արվեց կրոնական պատրանքներից ազատագրվելու և իրականության առարկայական ճանաչման ուղղությամբ: Անճանաչելիության աստվածաբանական պնդումն արդեն իսկ ինքնահերքում է, և այդ մասին որևէ հայտարարություն, դատողություն կամ սահմանում՝ ինքնին հիմնագուրկ: Չկա՞ գիտելիք ստանալու հնարավորություն, ուրեմն չկան և օրինաչափություններ: Երբ ոչինչ չի կարելի իմանալ Աստծո և նրա գործերի մասին, դրանց շուրջ պտտվող քարոզներն ու պատգամները դառնում են անիմաստ: Անքննելի են ոչ միայն Աստծո գործերը, անքննելի է նաև մինչարարչական իրադրությունը, ավելի ճիշտ՝ որևէ իրադրության բացակայությունը: Մինչև արարչագործությունն Աստված անշարժության և դատարկության մեջ էր, չկար ժամանակ-տարածություն:

Վաղ քրիստոնեական շրջանի մեծ փիլիսոփա, աստվածաբան, եկեղեցու հայր Օգոստինոս Երանելին (354–430) է ասել, որ ժամանակն ինչ-որ տարածություն (distentio) է: Ապա և պարզաբանել է ժամանակի ու շարժանփոփոխության անբաժանելիությունը. «Ժամանակները չէին լինի, եթե չլիներ արարչությունը, որը պիտի ինչ-որ բան փոխեր ինչ-որ շարժումով... Եթե, ուրեմն, Աստված, որի հավերժության մեջ առհասարակ փոփոխություն չկա, ժամանակների արարիչն ու կարգավորողն է, [ապա] չեն հաս-

կանում՝ ինչպես կարելի է ասել, որ նա ստեղծել է աշխարհը [ինչ-որ] ժամանակահատվածից հետո» (29):

Երբ Աստծո գործերն անքննելի են թե՛ արարչությունից առաջ, թե՛ հետո, ի՞նչ է մնում մտածող և առկա իրադրության համապատասխան իր գործունեությունը ծավալող, այլ ոչ թե կույր հավատի վրա կյանքը կառուցել ճգնող անհատին: Գիտական գիտելիքը փորձից արտածող Ֆրենսիս Բեկոնը պահանջում էր կիրառել ինդուկցիա՝ փորձի մեջ բաժանում ու ընտրություն կատարելու և անհրաժեշտ բացառումների ու մերժումների ուղիով անհրաժեշտ եզրակացությունների հանգելու համար: Դրանով Բեկոնը նախանշեց, որ գիտելիքի էությունը, ասենք այսպես՝ շատության կրճատումն է: Իսկ Դեկարտը, ելնելով փորձին նախորդող տեսական գաղափարից բխող հետևությունների դեդուկտիվ եղանակից, առաջարկեց քննվող ամեն դժվարություն այնքան մասերի բաժանել, որքան կպահանջվի դրանք ավելի լավ լուծելու համար:

Բնության բարդ երևույթների մասնատումը՝ դրանք բացատրող առավելագույն պարզ բաղադրիչների՝ XVII դարի գիտական հայտնագործությունների արդյունավետ վերլուծական մեթոդ էր: Հետագուովող խնդրի տվյալները վերլուծության համար ավելի հարմար, մատչելի տեսքի բերելու այդ մեթոդը թույլ է տալիս սահմանափակել, կրճատել իրադրության ենթադրվելիք բազում հետևանքների անպտուղ քննությունը և ճշգրտել գիտելիքը մինչև որոշիչ, նույնիսկ միակ տարրը: Փորձնական ստուգման անհարիր անճանաչելիության դրույթը, ընդհակառակը, բազմացնելով հարցականները, հանգեցնում է հակագիտելիքի: Ինչքան ճշգրիտ են գիտելիքները, այնքան ճշգրիտ է լուծումը տվյալ իրադրության մեջ: Արցախի Գետաշեն գյուղի տեղանքի ռազմագիտական ուսումնասիրությունն էմինը կատարում է ճշգրտման մանակերպ՝ «քաղհանի» եղանակով, բացառելով բոլոր աննպաստ հանգամանքները:

Փիլիսոփայական ուսմունքներն այդ դարաշրջանում հենված էին աննախադեպ թափով զարգացող բնագիտու-

թյան վրա: Բանականության բարձրագույն և ամենաարդյունավետ ձևը համարվող գիտության, գյուտերի ու հայտնագործությունների վերջնական նպատակն արդեն օգտակարությունն է, մարդկանց պահանջմունքների բավարարումը, կյանքի բարելավումը և բնության վրա մարդու իշխանության մեծացումը: Բեկոնի առաջադրած՝ տրամաբանության արտածումը ոչ միայն մտքի, այլև իրերի բնությունից, տվեց մարդու գործունեության ստուգման ու կանխատեսման ռեալ հմար և գիտելիքների ճշտման ասպարեզ: Ինչ որ օգտակար է գործողության մեջ, ճշմարիտ է գիտելիքում: Ճշմարիտի ու օգտակարի հարաբերության խնդիրը դարձավ մարդկանց իրական հզորության, երկրի դեմքը փոխելու և գիտության նվաճումները հասարակական զարգացմանը ծառայեցնելու սկզբունքային խնդիր:

15

Ուիլյամ Փիթին ուղարկած՝ 1758-ի մարտի նամակում էմինը «Համայնքների պալատում» նրա ելույթի իր տպավորության մասին գրում է. «Հայտնաբերեցի, վրաս հորդող լույսի պես... Ձեր մեծ սերը Ձեր երկրի հանդեպ և իմաստուն պերճախոսությունը (որ նվաճում է շատ ավելի, քան հերոսի սուրը)»: Կրկնելով այլ առիթներով իր ասածը, թե իր ճամփորդության նպատակը գիտելիքն էր, էմինն իրեն հատուկ գործնական ոգով նշում է. «Իրական մարդկանց իմացությունը գրքերից լավ է»: Իրական և գրքային, կյանք և գաղափար հարաբերակցությունում, կարող է թվալ, նա ընտրում է առաջինը՝ ընկնելով հակասության մեջ: Քանզի եթե իմաստուն պերճախոսությունը հզոր է հերոսի սրից, որը հաճոյախոսություն չէ Փիթին, ապա գրքայինը գերադասելի կլինի իրականից:

Բայց նա մեկը չի հակադրում մյուսին, այլ խնդիրը լոկ արտահայտման ձևի մեջ է: Լուսավորական գաղափարախոսությունից ինչ և ինչքան յուրացնելուց անկախ՝ էմինն իր գրքում հետևողականորեն պաշտպանում է բանականության և գիտելիքի որոշիչ դերի սկզբունքը հասարա-

կական զարգացման ու առաջընթացի մեջ: Ուստի և լիովին ընդունում է Լուսավորության տարածումով կրթության ու դաստիարակության հանդեպ հատուկ ուշադրության կարևորությունը: Բայց, ինչպես տեսանք, Հերակլի հետ զրույցում նա կրթության խնդիրը ծայրահեղ գործնականությամբ պարզեցնում, հասցնում էր սակավաթիվ առարկաների դասավանդման՝ ռազմագիտության գլխավորությամբ: Սա, իհարկե, թելադրված էր տարածաշրջանի իրադրությամբ, քանզի հայությանը դեռևս ավելի զինվորներ էին պետք, քան փիլիսոփաներ:

Այդուհանդերձ, ռազմուժի կազմակերպմանը և կատարելագործմանը զուգահեռ, առանց որի ցանկացած երկիր դատապարտված էր կործանման կամ ստրկացման, անհրաժեշտ էր նաև արդիական արդյունաբերություն զարգացնել: Իսկ դա իր հերթին պահանջում էր նաև այլ, կարևոր առարկաների դասավանդում՝ համապատասխան մասնագետների պատրաստման համար: Ինքն էլ ընդունում էր, որ եթե «եվրոպացիներն ուսման մեջ ժրջան չլինեին... չէին կարողանա դիմակայել Ասիային ու Աֆրիկային, ոչ էլ հայտնաբերած կլինեին Ամերիկան՝ այն քաղաքակրթելու համար: Նրանք խելքով ու քաջությամբ դիմակայել են մի շարք վայրենի ու բարբարոս ազգերի սոսկալի հարվածներին»:

Պատահական չէ, որ Էմինը բաժանում է պատմության փաստերին մերթընդմերթ հակասող՝ մարդկային բանականության անսահմանափակ հնարավորությունների լուսավորական հավատը և գերագնահատում գիտության ու կրթության դերը, թեպետ լավ գիտեր, որ քաղաքակրթության առաջատար Հռոմն ընկել էր բարբարոսների ու վանդալների, իսկ Բյուզանդիան՝ արյունարբու թուրքերի հարվածների տակ: Նախորդելով Լուսավորական դարաշրջանին և ամբողջացնելով երկրագնդի քարտեզը՝ Ամերիկայի հայտնագործումը լայնացրեց աշխարհի սահմանների մասին պատկերացումները, բայց և լուսավորյալ եվրոպացիներին չխանգարեց քնիկներին «քաղաքակրթել»՝

բրտորեն քնաջնջելով նրանց մեծ մասին: Վերջապես, հենց Էմինի նկարագրություններից երևում է, որ վայրագ ու տգետ լեռնցիները, առանց լուսավորվելու և ուղեղները հոգնեցնելու, գոյության անխնա կռվում ընդհանուր առմամբ հաղթանակում էին և իրենց բաժին ավարը հափշտակում զենքի ուժով: Քաջությունն անանջատ համարելով առաքինությունից և, ըստ էության, առնչելով լուսավոր բանականությանը՝ Էմինը գրում է, որ Կոստանդնուպոլսի պատրիարքին ենթակա, թուրքերի ու պարսիկների հպատակ հայերը չեն ձգտում քաջության, այլ տգետ են և կռվում են վայրենի կատաղությամբ, անկանոն, ավազակների պես:

Իհարկե, առաքինությունը զարդարում է քաջությունը: Իհարկե, տգետ, անկանոն կռվողները պարտվում էին եվրոպական ռազմարվեստի կանոններով կազմակերպված փոքրաթիվ զորամիավորումներից, բայց դա հաստատու՞մ էր, որ նրանք զուրկ էին քաջությունից: Ամենամարտունակ ժողովուրդներից քրդերի վարած կռվի մի դրվագ Էմինը նկարագրում է անսքող հիացմունքով. «Մի կին ու նրա տասնչորսամյա գեղեցիկ աղջիկը միգակը ձեռքներին մի տասնհինգ թուփ կռվում էին ամազոնների պես, սպանեցին երկու լեզգիի, մի քանիսին վիրավորեցին՝ հրեշտակների մեծ պահելով իրենց պատիվը, բայց ի վերջո ընկան՝ բոլոր վայրենիների զարմացած հայացքների առաջ»:

Բանականության գերագնահատմանը հակասող շատ ուրիշ փաստերի մեծ, քաջության այս վառ օրինակը ևս չի տեղավորվում Էմինի կանխակալ՝ տգետը քաջ չէ, կարծիքում: Լուսավոր բանականության ամենագործության համոզմունքն Էմինին խանգարում է, առանձին փաստերը համադրելով, կազմելու պատմության հոլովույթի փոքրիշատե կապակցված պատկեր: Կրթության ու դաստիարակության միջոցով ձևավորված և ազատագրական պայքարի լուսավորական գաղափարով տոգորված մարդու տիպարը նա իդեալականացնում է՝ նույն այդ վերացական ըմբռնման հետևանքով:

Իմմանուել Կանտը (1724–1804) «Պատասխան այն հարցին, թե ինչ է Լուսավորությունը» (*Beantwortung der Frage: Was ist Aufklärung?*) էսսեն սկսում է այսպես. «Լուսավորությունը մարդու ելքն է իր իսկ մեղսունակ անչափահասությունից: Անչափահասությունն անկարողությունն է՝ օգտվելու սեփական հասողությունից (Verstand) առանց մի ուրիշի ղեկավարության... Sapere aude! Հանդգնի՛ր օգտվել քո՝ հասողությունից – ահա՛ Լուսավորության նշանաբանը»: Դրա համար, ըստ Կանտի, ոչինչ չի պահանջվում, բացի հրապարակավ սեփական բանականությունն օգտագործելու ամենաամսվմաս ազատությունից:

Բանականության այդպիսի «ազատությամբ», սակայն, կարող են թափ առնել նաև մարդու ինքնահաճ, վնասակար կամայականությունները: Դա կանխատեսելով՝ Կանտը մարդկանց լուսավորող սեփական բանականության հրապարակային մշտական օգտագործումից (գիտնականն ընթերցողների առաջ), առանձնացնում է բանականության մասնավոր օգտագործումը քաղաքացիական ծառայության ընթացքում պարտականություններ կատարելիս (ծառայող սպան պետք է կատարի վերադասների հրամանն առանց քննարկելու, բայց որպես գիտնական կարող է դիտողություններ անել գինվորական ծառայության սխալների մասին՝ յուրայիններին առաջարկելով քննարկել դրանք):

Մարդը, որպես ինքնուրույն, անկախ, ազատ մտածելու ունակությամբ օժտված բանական անհատ, այսպիսով, դեմ է առնում օբյեկտիվ անհրաժեշտությանը – ամեն ոք կարող է մտածել ինչքան և ինչպես կամենում է, բայց հասարակությունը պարտավոր չէ դառնալ յուրաքանչյուրի «ազատ» մտքերի կամակատարը: Որ դա չափազանց ծանր հետևանքներ կարող է ունենալ, հատկապես երբ «մտածողը»՝ անգամ խեղված մտքի ու հոգեբանության տեր, պետություն կառավարող է, ապացուցվել է բազմիցս: Անհրաժեշտության դատողությունը և ազատ դատողությունը բխվում են իրար: Ընդհանուրը, իր էական որոշա-

կիությամբ, հակառակ անհատական պայմանականի, ենթակա է անպայմանական դատողության: Դրան հակասող մասնավոր, եսական մտքի «ազատ» արգասիքներն ընդհանուրի ոլորտներում անելիք չունեն: Անհատների հասարակական նպատակների համապատասխանության անհրաժեշտությամբ՝ մեկի գոյությունը միայն իրենը չէ, այլ նաև ուրիշինը: Կողմերը հանդես են գալիս որպես ինքնուրույն իրակություններ՝ սերտ համակամությամբ:

Որքան էլ Էմինն անձնագոռաբար նվիրված էր մեծ նպատակին («վճռական եմ, և ինձ ոչինչ հետ չի պահի բացի մահից. այն սպասում է բոլորիս, և ազնիվ սիրտը կարիք չունի վախենալու»), դարերով բաժան-բաժան, պառակտված, երկիրը կորցրած, պատմության քառուղիներում խարխափող հայությանն ազատության ու լուսավորական զարգացման ուղեգիծ հանելու նրա ծրագիրն ինչքան ոգևորիչ, նույնքան անիրագործելի էր: Գանձասարի Հովհաննես կաթողիկոսին ուղղված նրա հարցը պատասխան պահանջող հարցերի ահագին շարանում ցարդ հնչողներից ընդամենը մեկն է. «Վրաստանը... Հայաստանի մեկ հինգերորդ մասն էլ չի կազմում, բայց Նադիրի մահից հետո ազատ է դարձել: Ինչու՞ չպետք է հայերը հետևեն այդ օրինակին՝ ձերբազատվելով ամբոխի մի քանի պարագլուխներից կամ անկարևոր չնչին բռնակալներից և դաշինք կապելով իրենց հյուսիսային հարևանների հետ»: Ինչու՞ չպետք է, դաշնակցելով նաև Ֆրանկստանի հետ, ազատություն վայելեն: Հայությանը չհաջողվեց մնան հարցերը կրճատել՝ արագորեն աճող վնասակարը չքաղհանելու և մեծ դժվարությամբ ստացվող օգտակարը չբազմապատկելու պատճառով:

Մադրասի «Ազդարար» պարբերականում 1795 թ. հունվարին, Ա. Բ. ստորագրությամբ, մի գրություն է հրապարակվել Էմինի գրքի դեմ, որ իբր նա, հայերեն գրելու, ազգին «առանձին» խրատելու փոխարեն, վատաբանել է «ինկլիզեար» (անգլերեն)՝ կարծելով, թե, իր ազգին տգետ ու միայն իրեն գիտուն ասելով, համբավի կարծանանա, և

չմտածելով, որ այլագգիները ծիծաղելու են իր մանկամտության վրա (30, էջ 411): Ա. Բ.-ն իր խառնիճադանջ հայերենով ու խեղված մտքով շարադրել էր մի բարեկամի ասածը, որը հրապարակելու համար հաջորդ գրության մեջ ներողություն է խնդրում, քանզի բարեկամն իրեն հանդիմանել էր մասնավոր գրույցը հրապարակելու համար:

Էմինի գրքի նշանակությունը հատկապես իրեն ժամանակակից քչերին էր հասկանալի լինելու, իր հերթին՝ «ինկլիզեար»-ով հայկական հարցը միջագայնացնելու, Եվրոպայի ուշադրությունը գրավելով՝ այնտեղից օգնություն ստանալու նրա մտադրությունը ևս: Նա վեր էր ասիական դաժան միջնադարյան առօրյայում բաղված, խավարամիտ իր շատ հայրենակիցներից և գործել էր՝ կանխատեսելով զանգվածների առասպելակրոնական պարզունակ, շփոթախառն պատկերացումներից դուրս մի ապագայի հեռանկար: Ինչ որ տեսնում էր Էմինը, յուրովի տեսնում էին միայն ժամանակի բացառիկ հայ մտածողներ, ինչպես՝ Շահամիրյանի խմբակի անդամները: Յուրաքանչյուրը, ժամանակի, ձգտումների, նպատակի ու գաղափարի հանգամանքներով պայմանավորված, և լուսավոր ուտոպիզմի իր բաժնով ու իր գաղափարաբանությամբ, ավելի շուտ անհասկանալի «օտար» էր, քան հարազատ ու ընկալելի: Իր կյանքի ճանապարհին Էմինի նախաձեռնած ազատագրական գործին պատրաստ էին աջակցելու, զինվորագրվելու շատ հայեր, բայց շատերն էլ ուզում էին խանգարել, վնասել գործին և անգամ ոչնչացնել նրան:

Նրա կյանքի ու գործի գնահատականը կարող էին տալ նրան խորապես ճանաչող՝ Էդմունդ Բերքի նման անգուգական դեմքեր: 1789-ի մարտի 9-ի նամակում Բերքն իր «սիրելի, հին բարեկամին» գրել է. «Դուք փորձել եք մեծ գործեր անել՝ ելնելով ազնիվ սկզբունքներից: Չեք հաջողել, բայց ինքներդ անձնապես ավելին եք շահել, քան եթե հաջողեիք: Որովհետև Դուք ազնիվ և, թույլ տվեք ասել, երջանիկ անհատ եք»: Բերքը, որ կարծես հեռվից տեսնում էր Էմինի տվայտանքը ձեռնարկների անհաջողությունից հե-

տո, փորձում էր հուսադրել ու մխիթարել, որ նա ազատ է պետական պաշտոն զբաղեցնելու հոգսից (Բերքն անձամբ հիանալի գիտեր բարձր դիրք գրավող պետական գործչի աշխատանքի բարդությունն ու ծանրությունը): Ինքը՝ Էմինը, իմաստնացած և հանրագումարի բերելով իր «կյանքի ու արկածների» արդյունքները, պատրաստ էր խաղաղորեն «գոհանալու այս ցնորական աշխարհում իր կարճ ճամփորդությամբ»:

Մինչ այդ էլ, հարկավ, Էմինը գիտակցում էր իր մեծ նպատակի իրագործման ողջ բարդությունը: Ավելին, դեռևս Ռիգայում գերմանացի Միլլերի տանը օբևանելիս, նա խոստովանել էր, որ իր «ծրագիրը երևակայական մի բան է՝ նման մարդու ստվերից պինդ մարմին պատրաստելուն, եթե միայն Գերագույն Էակը չվերածի այն շոշափելի մի բանի»: Իհարկե, ավելի քան անիմաստ էր հույս կապել «Գերագույնի» հետ: Անկախ դրանից, բնավ անհավանական չէ, որ իր գործունեության որոշ շրջանում ծրագրի «երևակայական» լինելու միտքն ուղեկցել է նրան: Բայց իր երկաթյա բնավորությամբ նա երբեք չի կքվել «դժբախտությունների բեռի տակ... նյութի փոխարեն ստվեր բռնելով» ու հետ չի կանգնել իր նպատակի իրագործման պայքարից:

Գիրքը հրատարակելիս (1792) Էմինը 66 տարեկան էր, կյանքի տևողության այն ժամանակվա պատկերացումներով ու չափանիշներով՝ արդեն ծերունի: Դրանից հետո նա ապրեց մինչև 1809-ի օգոստոսի 2-ը: Մինչև կյանքի վերջը շարունակելով ապավինել Աստծուն՝ խորհրդածում էր ծնունդ-կյանք-մահ ճանապարհի, մարդու կոչման և առաջին ու վերջին ճշմարտության մասին, որին հասու են իմաստունները, բայց որն այնպես էլ մնում է անվճռելի: «Բոլոր մահկանացուները ճամփորդ են: Մենք վերադարձի ճանապարհին ենք դեպի այնտեղ, ուր մեծ Աստված ստեղծել է մեզ և ուղարկել այստեղ՝ մեզ նման արարածների համար բարիք գործելու և լավ օրինակներ ցույց տալու»:

Մի՞թե ազատություն-անհրաժեշտությանը զուգահեռ կա ուրիշ աշխարհ, որտեղ մուտք են գործում ունայնության դռնով: Եվ որտե՞ղ է բնակվում իսկական իմաստությունը. առաջի՞ն, երկրո՞րդ, թե՞ մեկից մյուսը տանող աշխարհների սահմանում: Կարո՞ղ էր նա հանգիստ հեռանալ աշխարհից՝ հաշտվելով Ժողովողի եզրահանգման հետ. «Ունայնություն ունայնութեանց՝ ամենայն ինչ ընդ ունայն է»: Ո՛չ երբեք: Նա մարդու այն տեսակից էր, որ Այնտեղից էլ շարունակում են բարիք գործել ու լավ օրինակներ ցույց տալ: Ժողովողն ուսումնասիրել էր արևի տակ գոյություն ունեցող ամեն բան և հանգել իմաստության՝ կյանքի ավարտին ամփոփելով իր ապրածն ու կատարածը: Ըստ այդմ, իմաստությունը գիտելիքների կուտակումով նվաճված կարողություն է, հարուստ կենսափորձով ձեռք բերված մեծ, խորագին միտք և, հանգամանքների հաշվարկով ու գիտելիքների պատշաճ կիրառմամբ, նաև կյանքային խնդիրների արդարացի լուծման կարողություն:

Քանի որ Լուսավորական գաղափարախոսության հետևորդ Էմինը ճանաչողության ձգտումը կապում էր իրականության վերափոխման անհրաժեշտության հետ, ապա հասարակական զարգացման օբյեկտիվ օրենքների բացահայտման գլխավոր խնդիրը առաջընթացն ապրելակող, դարձն ապրած կարգերի հարկադրանքը մարդու կամքի ազատ գործադրմամբ խորտակելն էր: Եթե Էմինը հաշվի էր առնում օբյեկտիվ հանգամանքները, ապա շատերն իր դարաշրջանում և հետո, ազատությունն առանձին ու ըստ էության՝ տարածություն-ժամանակ պատճառականությունից դուրս պատկերացնելով և անհրաժեշտությունը շփոթելով արտաքին հարկադրանքի հետ, բռնության դեմ պայքարեցին՝ օբյեկտիվ օրինաչափության գիտակցումը կորցրած: Այդպիսով նրանք իրենց դատապարտեցին անհաջողության՝ անգամ ինչ-որ կերպ տապալելով բռնությունը: Անհրաժեշտությունից անբաժան ազատության համար մաքառումը հարկադրանքի դեմ պիտի ուղղվի բարու իրականացմանը – մարդու կոչումը բարիք գործելն ու լավ օրի-

նակներ ցույց տալն է: Տգիտության, բնությունը չճանաչելու, արտաշխարհից իր կախվածությունը չզգալու պատճառով դժբախտ մարդը, բարի կամքին անհաղորդ, չի տիրապետում անպայմանականի հավաստիությամբ առկա գոյի վերափոխման օրենքներին:

Խիզախ, բազմակողմանի գործնական գաղափարները լայնորեն տարածելով ազգային-հասարակական կյանքը քայքայիչ, փտող, մեռյալ շերտերից մաքրելու և կյանքը լիարյուն դարձնելու բավարար հիմքեր հայրենիքում չկային: Լուսավորության նախատեսած ու Էմինի պատկերացրած նոր դարաշրջանն այնտեղ հստակ ու որոշակի գծեր չունեին, լինելության ընթացքում չէր նույնիսկ: Անհամեմատ ուժեղ էին խանգարող, քան նպաստող հանգամանքները՝ ժողովրդական զանգվածներին արթնացնելու, կազմակերպելու և ազգային-ազատագրական պայքարի մղելու ճանապարհին: Դա պիտի լինեին պայքար՝ հանուն լուսավոր բանականության բարձր իշխանության հաստատման և նրա տիրապետության ընդլայնման: Պայքար՝ հանուն առաջադեմ գաղափարների վերընթացի, դրանք ազդեցիկ ուժ դարձնելու, ղեկավարելու մարդկանց արարքներն ու հարաբերությունները, թափ հաղորդելու նրանց առաջադեմ ձգտումներին և վճռելու ազգի առաջ կանգնած ծանր խնդիրները:

Այդ պայքարը ղեկավարող իսկական, քաջ մարտիկը, ըստ Էմինի անշեղ սկզբունքի, պարտավոր էր կռվի ժամանակ հպարտ երևալ զինակիցներին, իսկ թշնամուն հաղթելուց հետո՝ խոնարհ: Հուշագրության սկզբում նա նշում է, որ ինքը որպես զինվոր չի վախենում ի ցույց դնել իր մտքի և մարմնի բոլոր թերություններն ու վերքերը: Էմինը բնավ ազդեցիկ արտաքին չունեին, և նա այդ շեշտում է վրաց Թեյմուրազ թագավորի հետ Ռուսաստանում հանդիպման առիթով. «Արքան աչքերը հառել էր Էմինի փոքրիկ մարմնին»: Բայց աշխարհի կարճահասակ մեծ գորավարներից կարելի է հիշել բյուզանդացի հայ Նարսեսին (478–573), Ալեքսանդր Սուվորովին (1729/30–1730) և Նապոլեոն Բո-

նապարտին (1769–1821): Ըստ որում, օրինակ, առաջին երկուսն աչքի էին ընկնում նաև տձև արտաքինով: Բայց նրանց մարմնում հզոր ոգի էր ամփոփված: Անպարտելի ոգի էր բնակվում նաև Հովսեփ Էմինի փոքր մարմնում:

Էդմունդ Բերքի նոթատետրում իմաստուն մարդը Լուսավորական գաղափարախոսության հայեցակետից բնորոշված է որպես ակտիվ ու ներգործուն ուժ: Այդ բնորոշումը լիովին համընկնում է Էմինի նկարագրին. «Իմաստուն մարդու ողջ կյանքը մի միասնական ծրագիր է – ամեն բան ենթարկված է գլխավոր մտադրությանը: Նա գիտե, որ չի կարող վայելել ամեն ինչ, ուստի ձգտում է որևէ վստահելի ու մշտական զրադմունքի: Նա ոչինչ չի թողնում պատահականությանը, և կարելի է ավելի շուտ նրան զրկել Կյանքից, քան ստիպել ապրել առանց ծրագրի: Նա ամեն օրը գնահատում է լոկ այնքան, որքան այն մի բան է անում հաջորդ օրվա համար, իսկ ապրած ամեն տարին՝ լոկ այնքան, որքան այն ավելի մեծ օգուտ կամ ապագա մեծություն է խոստանում... Նա արտակարգ խիզախ է և, իմանալով, որ աննպատակ Կյանքը ոչինչ չարժե, իր նպատակներին հասնելու համար միշտ վտանգում է իր կյանքը, իսկ երբեմն՝ և հենց նպատակները, որպեսզի հասնի ավելի բարձր նպատակների: Բայց դա երբեք չի արվում անմտորեն, քանզի նրա խիզախությունն ավելի շուտ խոհեմ է, քան արկածախնդիր» (31):

Այո՛, կարելի էր ավելի շուտ Հովսեփ Էմինին զրկել կյանքից, քան ստիպել ապրել առանց ծրագրի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Thomas Hobbes, *Leviathan*, XXI
2. А. Р. Иоаннисян, *Иосиф Эмин*, Ереван, 1989 (առաջին հրատ. 1945)
3. Henry St. John Bolingbroke, *Letters on the Study and Use of History*, Letter V
4. Տե՛ս Ж. А. Ананян, “Страница из истории армяно-русских отношений второй половины XVIII века (Новые документы об Иосифе Эмине)”, *Պատմա-քաղաքական հանդես*, 1978, №3, 244–264
5. Thomas Hobbes, *De Cive*, V.9
6. Voltaire, *Lettres philosophiques*, VIII
7. Marquis de Condorcet, *Esquisse d'un tableau historique des progrès de l'esprit humain*, Préface
8. Հ. Շահամիրյան, Շ. Շահամիրյան, *Որոշա՞յք փառաց, բարգմանությունը գրաբարից և ծանոթագրությունները՝ Պոդոս Խաչատրյանի, Երևան, 2002, 13–14*
9. Friedrich Schiller, *Was heißt und zu welchem Ende studiert man Universalgeschichte?*, Jena, 1789, 26–27
10. G. W. F. *Vorlesungen über die Philosophie der Geschichte*, Leipzig, 1920, S. 936
11. Francis Bacon, *De Augmentis Scientiarum*, II.10
12. G. W. F. Hegel, *Werke*, Bd. 7, Frankfurt a. M., 1979, 103–104
13. G. W. F. Hegel, *Enzyklopädie der philosophischen Wissenschaften im Grundrisse*, Erster teil, *Die Wissenschaft der Logik*, 209
14. *Древнекитайская философия*, в двух томах, т. 1, Москва, 1972, 202–203
15. К. Клаузевиц, *О войне*, Москва, 1994, 346–347
16. René Decartes, *Regulae ad directionem ingenii*, XI
17. John Locke, *An Essay Concerning Human Understanding*, IV.17.14
18. Տե՛ս Արտակ Մաղալյան, *Արցախի մեկնությունները և մեկնական փնտրել XVII–XIX դդ.*, Երևան, 2007, 44

19. Adam Smith, *An Inquiry into the Nature and Causes of the Wealth of Nations*, I, 1
20. Montesquieu, *De l'esprit des lois*, I, 1
21. René Descartes, *Le Discours de la méthode*, V
22. René Descartes, *Principia Philosophiae*, I
23. René Descartes, *Le Discours de la méthode*, IV
24. Paul Henri d'Holbach, *Le Système de la nature*, I, 1
25. Thomas Kuhn, *The Structure of Scientific Revolutions*, X, 9
26. Բազրաւո Ուրուարյան, *Արցախյան զոյաշարարը*, Գիրք Ա, Երևան, 1994
27. Claude-Adrien Helvétius, *Seconde lettre a M. Lefebvre-Laroche* (1769)
28. С. Татареквич, *О счастье и совершенстве человека*, Москва, 1981, 145
29. Augustinus, *De civitate Dei*, XI, 6
30. Sebouh D. Aslanyan, "A Reader Responds to Joseph Emin's Life and Adventures: Notes toward a 'History of Reading' in Late Eighteenth Century Madras," *Հանդես Ամուրիայ*, 2012 (1–12), 363–418
31. *A Note-Book of Edmund Burke*, ed. H. V. F. Somerset, Cambridge, 1957, 109

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	3
«ՀԱՆՈՒՆ ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԻՍԵՐԿՐԻ»	7
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	125

ՍՏԵՓԱՆ ԷԴՈՒԱՐԴԻ ԹՈՓՉՅԱՆ

ՀՈՎՍԵՓ ԷՄԻՆ

Կազմի առաջին էջին՝ Վուլիջի ռազմական ակադեմիան,
որտեղ սովորել է Հովսեփ Էմինը (XIX դարի նկար), չորրորդ
էջին՝ Շուշիի բերդը):

Տպագրված է «Լուսաբաց հրատարակչատանը»

Երևան, Պուշկինի 46

Հեռ. (010) 539647, (055) 784787

Էլ. փոստ. lusabac@mail.ru, lusabats@netsys.am

947.920
73-83



Ասում էի, որ գետնաբանության մասին եմ
 էլ թագավոր ունեն, մեկ մենք չունենք, և
 բոլոր երկրների ազգերը մեզ հալածում
 ու ծաղրում են, թե անտեր ենք, չունենք
 մեր թագավորը և նման ենք երկրի
 երեսին ցրված հրեաներին: «Դուք իրար
 չեք սիրում, պատիվ չունեք, և քանի որ
 ձեր ազգը պառակտված է, բոլոր ազգերն անարգում են ձեզ:
 Դուք արհամարհելի եք, աննախանձախնդիր և այնքան եր
 փող սիրում, որքան հեթանոսներն՝ իրենց աստվածներին»:



ISBN 978-9939-59-228-9



9 789939 592289



ՀԱՅԵՐԱՆԿԱՅԻՆ

ԷԴԻՍԱԲԱՅ

PUBLISHING HOUSE